

## XVII ԴԱՐԻ ԳՐԱԲԱՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XVII դարի հայ գրական-մշակութային հարուստ ժառանգությունը տարբեր առիթներով՝ ու նպատակներով բննության է առնվել հետազոտողների կողմից:

Սույն աշխատանքը գրաբարի համաժամանակյա ուսումնասիրություն է, ուստի, առավել ուշադրություն է դարձվում ժամանակային կոնկրետ հատվածում գրաբարի օրինաշափությունների ու յուրահատկությունների բացահայտմանը, քանի երևոյթների փոփոխությունների պատմական ընթացքին:

Սակայն, քանի որ XVII դարում հայերնը դրսկորչում էր մի քանի լեզվավիճակներով (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառներ), ապա գրաբարը չէր կարող զերծ լինել նշված լեզվավիճակների ազդեցությունից: Այս հանգամանքը պահանջում է ուսումնասիրության և համաժամանակյա, և տարաժամանակյա մեթոդների կիրառում:

Որոշ փաստերի քննության ընթացքում համադրվում են ինչպես նույն լեզվավիճակի տարբեր փուլերը (XVII դ. գրաբարը վաղ գրաբարի հետ), այնպես էլ տվյալ ժամանակահատվածի տարբեր լեզվավիճակները:

Ցուրաքանչյուր դարաշրջանի հոգևոր ժառանգություն ինչ-որ շափով տնտեսական-քաղաքական կյանքի արտացոլումն է: Առանց պատմական իրականության ճանաշման հնարավոր չէ ճիշտ գնահատել մշակութի (այդ թվում և լեզվական) առանձնահատուկ կողմերն ու զարգացման միտումները: Ի՞նչն էր բնորոշ XVII դարի հայ իրականությանը:

Դարասկիղը շարունակությունն էր նախորդ երկու դարերի՝ մուայլ ու արհավիրքներով լեցուն. Հայաստանը բաժանված էր երկու բռնակալ պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Փողովորդի օրհասական վիճակը լավ է նկարագրել ժամանակագրիրը. «...եմք և կեամք ի մէջ վեցեկի պատուհասի, որ է սով, սուր, գերութիւն, տարաժամ մահ, անօրինաց զրկանքն և սաստիկ հարկապահանզողութիւն...»<sup>1</sup>:

1 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հ. 1, Երևան, 1951, էջ 181:

Մեծագույն արհավիրքը, սակայն, դեռևս 1514 թվականից սկսած պատերազմն էր Թուրքիայի և Իրանի միջև։ Հիմնականում ընթանալով Հայաստանի տարածքում, հաջողակ լինելով պատերազմող մերթ մեկ մերթ մյուս կողմի համար, այն միշտ կորստաբեր էր հայ ժողովրդի համար։

Հայ ժողովրդի համար սոսկալի շարիք էր XVI դարի վերջում սկսված Զալալիների շարժումը Թուրքիայում<sup>2</sup>։ Աղետաբեր էր (1605—1609 թթ.) շորսամյա դաժան սովոր։ «Ի սովու կերան հայք ոչո՞ւն և կատու, էշ և ձի և կաշիք նոցաւ։ Աղբատքն ժողովէին զերեք շորս տարու շոր ոսկորներն և սղկէին և ուտէին և կուտուց կուտուց մեռանէին...»<sup>3</sup>։ Այդ դարը վիճակն էլ հանգեցրեց մի ուրիշ շարիքի՝ զանգվածային գաղթի։ Գաղթի ճանապարհները հասնում էին մինչև Ղրիմ, Ուկրաինա և Լեհաստան<sup>4</sup>, Ահավոր էր բռնադաղթը Արևելյան Հայաստանում։ Լսելով Թուրքական բանակի հարձակման լուրը, Շահ-Աբասը որոշում է նահանջել՝ ավերելով գյուղերն ու քաղաքները։ Հանուն իր շահերի նա Արևելյան Հայաստանից 1604 թվականին հարյուր հազարավոր հայերի գաղթեցնում է Պարսկաստան։ Դա հարց մեծ գաղթն էր, մեր պատմության սկզբնից մեկը։

1639 թվականին ավարտվեց 125-ամյա պատերազմը։ Թուրքիայի և Իրանի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որի համաձայն ամրապնդվում էր Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետությունը բռնի կերպով նվաճված ժողովուրդների, հատկապես Անդրկովկասի ժողովուրդների վրան։ Բայց հաշտությունը, հատկապես հայ ժողովրդի համար, բարերախտություն էր։ Հնարավորություններ են ստեղծվում (թեև ոչ լայն) երկու տնտեսական, հոգևոր զարթոնքի համար, որի նախանշանները նկատելի էին դեռևս 1616 թվականից, երբ պատերազմական գործողությունները տեղափոխվել էին Հայաստանի սահմաններից դուրս։

<sup>2</sup> Զալալիների շարժման մասին մանրամասն տե՛ս Մ. Զուլայյան, Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966։ Այդ շարժման բնույթի մասին ուշագրավ դիտողություններ ունի նաև Վ. Հակոբյանը, (տե՛ս «Հայերներն ձեռագրերի ժեկ գարի հիշատակարաններ» հ. 1, Երևան, 1974, առաջարանը)։

<sup>3</sup> Վ. Հավաքյան, Ազ. Հովհաննեսյան, Հայերն ձեռագրերի ժեկ գարի հիշատակարաններ, հ. Ա., Երևան, 1974, էշ 70։

<sup>4</sup>Տե՛ս Աշ. Հովհաննեսյան, Հայերի ոռւսական կողմնորոշման նախապատմությունից, ՊԲՀ, Երևան, 1958, էշ 70։

<sup>5</sup> Հ. Նազարյան, 1639 թվականի Թուրք իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը, Երևան, 1969, էշ 31։

Այդ զարթոնքը առավել նկատելի էր հայկական գաղթօջախներում, որտեղ սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման ավելի նպաստավոր պայմաններ կային:

Աշխատացում էր նկատվում կվովում, Ամստերդամում: Իսկ բուն Հայաստանին ավելի մոտ գտնվող Պոլիսը արդեն XVII դարում արեմ ըստահայ հասարակական կյանքի կենտրոնն էր, որի ազդեցությունը տարածվում էր նաև գավառներում: Ազգային կյանքի աշխույժ օջախ էր նաև նոր Զուղան: Մոտ 12 հազար բնակչությամբ այդ քաղաքը տնտեսական, մշակութային լայն կապեր ուներ Եվրոպայի շատ երկրների հետ: Տեղահանության շարիքը որոշ իմաստով հատուցվում էր: Եվ ճիշտ է կեռն, գրելով, թե՝ «Շահ-Արասի գերեվարությունն ազգային-կուլտուրական վերածնության մի դարագիշտ սկիզբն է հայության համար... պատմությունը այնուամենայնիվ պիտի համարի այդ ահեղ տակնուվրայությունը մի տարերային դրդիչ, որ ստեղծեց հայկական կյանքի մեջ նոր քաղաքական և հասարակական պայմաններ, որոնք և սկսեցին, ճիշտ է դանդաղ, բայց հարատև տոկունությամբ, նոր ձևեր ձուլել մեր գոյության համար, իսկապես նոր ժամանակների ազգություն գարձնել մեզ»<sup>6</sup>:

Նոր Զուղան նաև դասակարգային պայքարի շահակիրներից մեկն էր<sup>7</sup>: Այստեղ աղանդավորական քողի տակ բռնկված շարժումը (Թումիկի շարժումը) իր էությամբ նաև սոցիալական էր<sup>8</sup>:

Սոցիալական խմբումներին զուգընթաց երկրում աճում էր և ազգային ազատագրական պայքարի գաղափարը: Ծփումը Եվրոպական երկրների հետ, վերջիններիս և կաթոլիկական եկեղեցու աճող հետաքրքրությունն ու խոստումները ծնում էին ազգային ազատագրության հույսեր, որոնք հատկապես արևմտահայության համար ավելի ու ավելի էին հստականում: Կարծես հասունանում էր զինված պայքարի անհրաժեշտությունը<sup>9</sup>, Բայց տեղի շունեցավ ոչ խաչակրաց պատերազմը և ոչ էլ քրիստոնյա եղբայրների ազատագրումը: Մնաց միայն ոգևորությունն ու սպասումի հույսը:

XVII դարը նաև հայ ազատագրական մտքի առաջին անգամ դեպի Ռուսաստան կողմնորոշման ժամանակաշրջանն էր: Իսկ XVII դարի երկրորդ կեսից, երբ Ուկրաինան միացավ Ռուսաստանին, իրենց քաղաքական հայացքը Մոսկվային ուղղեցին Լեհաստանի, Ղրիմի, Ուկրաինա-

6 Լեռ, եժ, հ. 3, գիրք 1-ին, Երևան, 1969, էջ 266:

7 Հ. Միրզոյան, Սիմեոն Զուղայեցի, Երևան, 1971, էջ 15:

8 Նույն տեղում, էջ 76:

9 Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:

ի հայ գաղթօջախները<sup>10</sup>: XVII դարի վերջից արտահայտվում էին նաև Ղարաբաղի մելիքությունների ազատագրական ձգտումները ընդում պարսից բռնակալության, պատահական չէ, որ հաջորդ դարում Ղարաբաղը դարձավ աշատագրական պայքարի գրոշակակիրը: Զարթոնք էր նկատվում նաև հոգմոր ու մշակութային կյանքում: «Ժէ դարը, — գորում է Հր. Աճառյանը, — հայոց վերածնութեան խմորման շրջանն է. ընդհանուր մեռելութեան մէջ առաջին անգամ գլուխ է բարձրացնում Բաղէշի Ամրողու վանքը և իր շուրջը լոյսի ցոլքեր արձակում, նրանից յետու սկսում է Տաթեկի վանքը, որի միաբանութիւնը ձեռք է առնում հայ ուսումնական կեանքի վերանորոգման գործը.... էջմիածնի հետ միաժամանակ բացւում է հեռու Պարսկաստանում, նոր Զուլայում Ամենափրկչեան վանքի դպրոցը, շնորհիւ նշանաւոր կեսարացի Խաչատուր Վարդապետի, որ նոյն վանքում բաց է անում նաև հայկական տպարան»<sup>11</sup>: Դպրասկզբին մեծ հոշակ էր վայելում Սյունաց դպրոցը՝ մանավանդ Մովսես և Պողոս վարդապետների եռանդուն գործունեության ըսնորհիվ: Այստեղ հարգի էր նաև ոչ կրոնական բնույթի գիտությունների ուսուցումը: Դպրոցական կյանքի առաջընթացը բնականարար ուղեկցը էր մատենագրության բուռն վերելքով: Երևան են գալիս պատմագրական, փիլիսոփայական ստեղծագործություններ, բազմաթիվ մանր ժամանակագրություններ, հիշատակարաններ, ձևավորվում է հայ մեմուարային գրականությունը:

XVII դարում, հատկապես առանձին անհատների ճիգերով վերակենդանում է նաև շատ կարճատև գոյատեսած հայ տպագրությունը:

Դարի առաջին կեսին հայերեն գրքերի տպագրության հնարավորություն ուներ միայն Հռոմի պրոպագանդայի բազմալեզվյան տպարանը, շուտով այդպիսի հնարավորություն ստեղծվեց Փարիզում: Սակայն Ամստերդամում էր միայն այդ գործի մեծ առաջընթացը՝ կապված Ոսկան Երևանցու եռանդուն գործունեության հետ: 1664 թվականից սկսած, նա չորս տարում հրատարակում է մոտ 20 անուն գիրք, որոնցից ուղագրավ են հատկապես, Աստվածաշունչը, քերականությունը և Դավթիժեցու պատմությունը:

Եթե փորձենք ուղղակի կապ տեսնել ժողովրդի պատմության և լիզվի միջև, ապա, բնականարար, երկրի մասնատվածությունը, պետականության, ժողովրդի տարբեր հատվածների սերտ շփման բացակայու-

10 Աշ. Հովհաննեսիյան, նշվ. աշխ., էջ 99:

11 Հր. Աճառյան, Պատմութիւն հայոց նոր գրականութեան, Վաղարշապատ, 1906, պրակ Ա, էջ 14—15:

թյունը հանգեցնում էր բարբառային տարբերությունների խորացման, դժվարացնում միասնական լեզվի գոյության հնարավորությունը, իսկ թուրք-պարսկական գերիշխանության հետևանքով, հայերենի մեջ շարունակում էին մուտք գործել թուրքերեն և պարսկերեն փոխառություններ, մյուս կողմից XVII դարի, հատկապես 2-րդ կեսից նկատվող տնտեսական, քաղաքական ու մշակությային զարթոնքը առաջադրում էր լեզվաբաղադրականության նոր խնդիրներ: Ստեղծագործությունների ժանրային բազմաձևություններն անշուշտ ուղեկցվում են լեզվի գործառական-ոճական նոր դրսերումներով: Վերանում է նախորդ երկու դարերի գրական «ամլությունը»: Ժողովրդի կյանքի տարբեր ըրնագավառներում նկատվող վերածնունդը, համախումբ ազատագրական պայքարի ձգտումներն ու սաղմնավորվող բուրժուական հարաբերությունները տարերայնորեն առաջադրում են միասնական լեզվի պահանջ: Պատահական չէ, որ ազգային միասնության մեծ նպատակը իրականացնելու համար, հայ մտավորական գործիչները առաջադրություններից մեկը համարում էին լեզուն<sup>12</sup>, որը պետք է դառնար միասնական և բազմագործառելի, բավարարեր ժամանակաշրջանի առաջադրած պահանջները: Գտնվելով զարգացման ակունքներում, աշխարհաբարը այդ գերը չէր կարող կատարել, առավել ևս այն չէր կարող կատարել որևէ բարբառ, աննպատակահարմար էր նաև միշտն հայերենը իր ժողովրդախոսակցական բարբառային հիմքով, օտարամուտ բառերի առատությամբ, որը վաղուց կորցրել էր իր պետական ու գրական գործառությունները: Բնականաբար ամենահարմարը գրաբարն էր, որը և դարերի ընդմիջումից հետո «վերածնվում» է XVII դարում: Այդ վերածնունդը ոչ միայն առաջադեմ գործիչների շանքերի արդյունքն էր, այլ նաև ուներ առարկայական հիմք: Ինարկե, նոր պայմաններում գրաբարը անզոր էր ստանձնելու գրական, պետականություն ունենալու դեպքում նաև պետական լեզվի գործառություններ (մի բան, որ գուցե և չէին կարող հասկանալ այդ ժամանակաշրջանում): Կարենը տրվալ գեպքում այդ չէ, այլ այն, որ գրաբարի նոր շրջանառությամբ տարերայնորեն առաջադրվում էր հայոց միասնական ու գրական լեզվի պահանջ:

**Խնչպիսի՞ն էր XVII դարի գրաբարը:**

Անշուշտ, քննվող ժամանակաշրջանում այն իր դասական վիճակով չէր կարող գործառել, որովհետեւ դարերի ընթացքում կրած օրինաշափ փոփոխություններից հետո, գրաբարը ինչ-որ զափով կորցրել էր իր դասական հստակությունը ու համակարգայնությունը:

<sup>12</sup> Տե՛ս Ս. Սարինյան, Հայ գրականության պատմագրության հարցերից, ՍԴ, 1962, № 7,էջ 187:

Պահպաննելով քերականական համակարգի հիմնական առանձնահատկությունները, XVII դ. գրաբարը գործառում էր նաև զգալի փոփոխություններով, քանի որ այն կոչված էր լինելու ոչ միայն եկեղեցական արարողությունների ու որոշ գործերի, այլ նաև համաժողովրդական, միասնական լիուլու Նշենք, որ դժվար է առանձնացնել զուտ գրաբարագիր որևէ հեղինակ կամ ստեղծագործություն։ Ամենատարբեր բնույթի գործերում երեմն գրաբարն ու աշխարհաբարը, այլև բարբառային տարրերը հանդես են գալիս գիրկընդիմառն։ Քննվող նյութը քաղել ենք այն գործերից, որոնց լեզվական հենքը ծամանակի գրաբարն է, առանձին դեպքերում՝ նաև ոչ գրաբար երկերի գրաբար հատվածներից։ Վերջիններիս անդրադառնալը ինքնանպատակ չէ, որովհետև նման հատվածներում երեմն ավելի ակնհայտ է զգացվում դարաշրջանի լեզվավիճակների փոխհարաբերությունը, և ոչ գրաբարագիր ստեղծագործություններին գոնե համառոտակի շանդրադառնալը թերի կթողներ գրական-մատենագրական ուղղությունների ու ժամրերի դասակարգումը և դարաշրջանի լեզվի գործառական-ոճական յուրահատկությունների ուսումնասիրությունը։

## XVII ԴԱՐԻ ԳՐԱՎՈՐ ԱՂԹՅՈՒՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մշակութային կյանքի զարթոնքը որպես կանոն ուղեկցվում է գրավոր հուշարձանների առատությամբ։ Գրավոր աղբյուրների տեսակների (ժամրերի) ծագման և զարգացման ընթացքը սերտորեն կապվում է պատմական կոնկրետ ժամանակաշրջանի, ժողովրդի սոցիալ-տնտեսական, ազգային կյանքի առանձնահատկությունների հետ։

Հայ իրականության մեջ XVII դարը առանձնանում է ոչ միայն գրավոր աղբյուրների թվական, այլև ժամրային բազմազանությամբ։ Վերելք են ապրում հայ մատենագրությանը ոչ խորթ, սակայն իրադարձությունների բերումով ընդհատված գրական որոշ ուղղություններ, որոշ ժամրեր էլ կազմավորվում են հենց նշված ժամանակաշրջանում՝ բխելով տնտեսական-հոգեոր կյանքի առանձնահատուկ պայմաններից։

### 1. ՊԱՏՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական, տնտեսական և մշակույթի զարգացման անբարենպատ պայմանների պատճառով, երկար դարերի ընթացքում հայ պատմագրություն փաստորեն գոյություն չուներ։ XVII դարը նաև հայ նոր

պատմագրության վերածննդի ժամանակաշրջանն էր: Այդ պատմագրությունը մեր բազմադարյան պատմության մի ծանր ու բեղմնավոր ժամանակաշրջանի կարևոր ու հավաստի սկզբնաղբյուրն է, որից օգտվել և օգտվում են բազմաթիվ ուսումնասիրողներ: Այդ սկզբնաղբյուրների մեջ թերևս ամենահեղինակավորը Առաքել Դավրիժեցու պատմությունն է:

Դավրիժեցին ծնվել է XVI դարի վերջին, Թավրիզում: Ուսում է ստացել էջմիածնում՝ և այնտեղ էլ ձեռնադրվել վարդապետ: Պաշտոնի բերումով եղել է շատ երկրներում. հանգամանք, որն անշուշտ օգնել է նրան շատ բան տեսնելու ու լսելու, պատմական փաստեր հավաքելու, որը և հետագայում օգտագործել է իր «Պատմության» մեջ<sup>1</sup>:

Ժամանակակիցները և հետագա ուսումնասիրողները բարձր են գնահատել Դավրիժեցու երկը<sup>2</sup>:

Պատմության մի ստվար մասը վերաբերում է Շահ-Արասի արշավանքին և հայոց «մեծ գաղթի» ցնցող պատկերների նկարագրությանը, հետաքրքիր տեղեկություններ կան ջալալիների շարժման, հայ գյուղացիության վլուճակի մասին: Երենից առաջ կատարված իրողությունները արձանագրելիս, Դավրիժեցին ըստ հնարավորին աշխատել է ստուգել փաստերը՝ բանավոր և գրավոր աղբյուրներով: Նրա գրքի գնահատելի արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը հավաստի ու կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև XVII դարի հայ մշակութի ու դիտության գործիչների մասին: Այսպես՝ իթ գլխի 401—406 էջերում խոսում է Սիմեոն Զուղայեցու գործունեության, նրա «Քերականության», «Տրամաբանության» արժանիքների, Ստեփան Լեհացու կյանքի և գործունեության, կատարած թարգմանությունների ու փիլիսոփայական գիտությանը նրանց քաջատեղյակության մասին: Նույն գլխում նա հիացմունքով է խոսում նկարիչ Մինասի մասին:

Դավրիժեցու պատմության լեզվական ատաղձը գրաբարն է՝ պարզ և դյուրմբնելի:

Խնչքան էլ մեծ լինի գրաբար գրելու ձգտումը, սովորական կրթություն ստացած մի վանականի համար դժվար էր XVII դարում գրել ստեղծագործություն՝ օգտագործելով այն բառապաշտը ու քերականական բազմապիսի ձևերը, որոնք հատուկ են դասական մատենագրությանը. մյուս կողմից՝ ակնհայտ է պատմությունը ժողովրդին հասկանալի:

1 ՏԵ՛՛ Առաքել Վեդ, հժ, հ. 3, էջ 351:

2 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցու» (3-րդ տպագր.), Վաղարշապատ, 1896: (Գիրքը առաջին անգամ լույս է տեսել 1666 թ. Ամստերդամում, հեղինակի կինդանության օրոք: 1884 թ. էջմիածնում կատարվում է գրքի 2-րդ տպագր.): Մեր հղումները վերաբերում են 1896 թ. հրատարակությանը:

դարձնելու նրա ձգտումը. սա նաև պայքար էր լատինաբանության դեմ, ուստի բնական է ժողովրդական մտածողությանն հարազատ լեզվի գործառությունը, բարբառային բառերի կիրառությունը, որն առհասարակ բնորոշ է դարաշրջանի գրաբարին: Հեղինակը օգտագործում է շատ նորակազմ բառեր, որոնք ավանդված չեն գրաբարի վաղ շրջանից: Դրանք հիմնականում համապատասխանում են գրաբարի բառակազմության կանոններին:

Գրքի որոշ հատվածներ զուտ գրաբար են (տե՛ս էջ 54—55, 325—341, 615—620, 650—665...): Ահա մի նմուշ, «Եւ ի նորոգել զեկեղեցին սրբություն կուսին Գայիհանեայ՝ գտեալ եղկ սուրբ նշխարք նորին՝ և նորին ընկերացն և եղկ ուրախութիւն և ցնծութիւն անպատում ամենայն հայազին տոհմի իբրև զկանգնումն կործանելոյ թագաւորութեան: Վասն զի ամենեթեան խոկային և խորհէին վասն նշխարաց սրբոց կուսանացն՝ իցէ՞ արդեօք ի տեղին թէ ոշ. քանզի աւագ խորանի ներքոյ շինեալ մատուոն աւերեալ էր բնաւին...» (326): Նման հատվածներում ասելիքի կոնկրետությունը, գրաբարի որոշ խրթին ոճերից խուսափելը, շընդիշարկված շարադասությունը (երբեմն գրաբարին ոշ բնորոշ, հմմտ, խորանի ներքոյ...) շարադրանքը դարձնում է հասկանալի: Այդ նպատակով նա դիմում է նաև ոճական այլ հնարանքների: Այսպես, անցյալում կատարված դեպքերը որպես կանոն շարադրում է վաղակատար ժամանակով (անց. դերբայ + օժ. բայ): Այսինքն, այդ ժամանակածեղ հանդես է գալիս պատմական-պատմողական ժամանակի գործառությամբ<sup>3</sup>: Բերենք մի քանի օրինակներ: «Յետ այսոցիկ իշեալ են ի մէջ մատուոի գերեզմանին, բաւակեցուցեալ են ի բաց... մինչ հասեալ են ի տապան...» (181): «Եւ Եպիսկոպոսունքն ոշ են բողեալ առնով զմասն... և յետ մարտնչելոյն... բարձեալ են զտապանն... և բերեալ են յէջմիածին» (182): Վաղակատարը վաղ գրաբարում հաճախական ու բազմոլորտ գործառություն չուներ: Դավրիժեցու կողմից այդ ժամանակածեղի անկաշկանդ դործածությունն, անշուշտ, խոսակցական լեզվի ազդեցությունն է:

Գրքում կան նաև ոշ գրաբարյան հատվածներ: Այդպես է օրինակ թանկագին քարերին վերաբերող հատվածը (էջ 586—605):

Զուտ գրաբար կամ ոշ գրաբար շարադրանքները երբեմն ինքնանպատակ չեն: Դրանք հանդես են գալիս որոշակի իրադրությամբ մեջ: Բայով, ոճն ու դարձվածային միավորը հեղինակը հմտորեն օգտագործում է իրադրությունն ու խոսքը տիպականացնելու համար: Գրքում

<sup>3</sup> Դասական գրաբարում այդ գործածությամբ հիմնականում հանդես են գալիս անցյալ անկատար կամ ներկա ժամանակները:

կան բազմաթիվ տճեր, որոնք ժողովրդական մտածողության արգասիք են, Գրաբարյան քերականական կանոններին շհակասող ձևերում էլ զգացվում է ժողովրդական մտածողությունը: Բերենք մի շարք օրինակներ: «Եւ էր վարդապետն Սրբափոն տեղեաւ ի բաղաքէն Ուրհայոյ բարեպաշտ ծնողաց և յոյժ մեծատան զաւակ...» (9): «Եւ եկեալ մերձ բերդին Նախչուանու բանակ եղեալ նստաւ, այնքան մերձ, որ թէ թիանք (երացան) ձգէին հասանէր (22): «Եւ արդ ծանուցեալ հեծեն, յոգոց նանեն» (70): «Ահա ազգս Հայոց մեծ և փոքր երես դարձուցին յինէն և զքեղ սիրեն» (225): «Առանց երես տեսանելոյ յնտուստ կուսէ դրանն խօսեցան...» (145):

Պատմությունը առատ է համեմատություններով, թևավոր խոսքերով: Ահա մի քանի օրինակներ. «Սկսան անխնայ կոտորնալ զնոսա որպէս զգայլս, որ մտեալ ի մակաղատեղս խաշանց...» (51) «Եւ Սարդարն ի մէջ իրում բանակին կայր, բայց վշտագին ցաւօք իրրե զկին ծննդական պաղատաւոր երկօք...» (76): «Եւ իրրե հասանէր հրաման արքունի ի տեղիսն՝ առժամայն որպէս հուր բորբոքեալ ընդ եղեգն՝ գումարտէին զամենայն հրէայսն» (478): «Եւ առին զթագաւորական գանձն, որ էր որպէս զմահարար թոյնս օձի և պատճառ նոցին կորստեան (150)». Դավրիթեցին հավելադրություններ, մակդիրների կուտակումներ ավելի շատ է օգտագործում, քան XVII դարի որևէ այլ հեղինակ:

«Հանապազօրդ հաշէին, մաշէին, հեծէին և հառաշէին, թէ զիարդ արդիօք իցէ հնար փրկութեան սրբոյ նշանին» (513): «Եւ է ձին հըսկայածե, բարձրահասակ, հաստաբազուկ, լայնալանջ, երկայնավիզ, կապուտագոյն, գեղեցկատես, սիգանեմ...» (511): «Որ և եկն իսկ ծանր զօրու և արար ըստ հրամանի խոնդքարին հերթեաց, մերժեաց, հեռացոյց, տարակացոյց, ուրոյն կացոյց, զատոյց, ի բաց կացոյց, հալածեաց, փախստական արար, վտարեաց, մեկուտացոյց...» (614):

Հետաքրքրական է հատկապես վերջին նախադասությունը՝ 11 հավելադրություն կամ՝ միենույն իմաստով տասնմեկ բառի ու բառակապակցության կիրառություն, սա ոչ միայն գեղեցկացնում է պատումը, այլև վկայում է հեղինակի բառօգտագործման նուրբ ճաշակի մասին:

Ինչպես նշել ենք, Դավրիթեցին չի խուսափում բարբառային, փոխառյալ բառեր օգտագործելուց: Համապատասխան օրինակները կրերենք բառապաշտարի քննության ժամանակ:

Ուշագրավ է նաև Զաքարիա Քանաքեռու երկը: «Սկսայ առնել ի ժամանակի ծերութեան իմոյ և ամի կենաց իմոց՝ ի թուկին ՌՃՂՃակ<sup>4</sup>: Ահա

<sup>4</sup> «Զաքարիա Սարկաւագի Պատմագրութիւն», գիրք III, Վաղարշապատ, 1870 թ., էջ 2:

պատմագրի հաղորդած տեղեկությունը իր պատմությունը գրելու և ծննդյան տարեթվի մասին։ Զաքարիան իր պատմությունը շարագրելիս հաճախ է օգտվել Դավրիժեցուց, որ և նշում է բազմաթիվ առիթներով։

Դավրիժեցու շատ տեղեկություններ հավաստի են, նա կարողանում է ընտրություն կատարել խառնիխուռն փաստերի մեջ, Զաքարիայի համար ընդհակառակը, բոլոր փաստերը կարենոր են։ Նահատակների վրա լուս իշնելը, վիշապի աղջիկ կուլ տալը, զանազան ժողովրդական սնոտիհապաշտությունները նա ընդունում է որպես հավաստի փաստեր և բերում է իր պատմության մեջ։ Նա նաև չափազանց երկարաբան է։

Հաղորդելով որևէ պատմական եղելություն, անպայման այն մանրամասնում է, այդպիսի բազմաթիվ օրինակներից բերենք մեկը... «Զայս իբրև լուսւ Թահմազն, իսկոյն եսպան զհայր իւրա։ Դավրիժեցին այստեղ կավարտեր իր միտքը, բայց Զաքարիան շարունակում է։ «...ոմանք ասեն լարիւ խեղդեաց, ոմանք ասեն՝ եղ բարձն ի վերայ բերանոյն և նստաւ ի վերայ նորա և շնշարգել արար և մեռաւ եւ ոմանք ասեն, իւրով մահուամբն մեռաւ ի խստութենէ վիրին...» (I, 1b)։

Զաքարիայի «պատմագրությունը» ընդգրկում է XV—XVII դդ. իրադարձությունները։ Եթե ինչ-որ տեղ, իրոք այն «իսկապես պատմություն չէ, սուս ու ճշմարիտ, առասպել ու իրողություն վայրիվերո, խառնիխուռն ժողովված մի տեղ»<sup>5</sup>, ապա Զաքարիայի գործը կարենոր է որպես այդ շրջանի բանահյուսության կարենոր սկզբնալըրիոր, մյուս կողմից՝ տարբեր խավերի առօրյա, կենցաղային մանրամասները, թուրք, պարսիկ զավթիչների դաժանությունները, նրանց կիրառած պատժաճեկերի նկարագրությունը, ամբողջական են դարձնում դարաշրջանի կյանքի պատկերը։ Տարբեր դիրքի ու պաշտոնի մարդկանց՝ տարբեր միջավայրում ունեցած խոսակցությունները, տրոնք հաճախ պատմիչը մեջբերում է ուղղակի խոսքի ձևով, կարենոր են դարաշրջանի լեզվի, տարբեր ոճերի առանձնահատկությունների լուսաբանման համար։ Այս կաթողիկոսի խնդրագիրը շահին։ «Հզօր և մեծ թագաւորի ոտաց հողէն յայտիցի, զի հրամայեցեր՝ թէ թղթով ծանո մեզ զիսնդիրն քո...» (II, 1b), կամ՝ շահի խոսակցությունը մի հայ երեցի հետ, որը «համարձակվել էր» պատահաբար ականատես լինելու շահի հարեմի զբոսանքին։ Ասէ Շահն, հայ ես թէ՞ թուրք, ե՛լ եւ ասէ, հայ եմ, երեց, երկնշիմ ի սպանելոյ. վասնորոյ ոչ յառնեմ... Ասէ շահն, վասնզի այրի ես առ յայսմ կանացմէ որոց և հաւանիս։ Ասէ երէցն, դոքա իմ մայր, և քոյր և դստերք են։ Ասէ շահն, քո մայր և քոյրն և դստերքն ալսպէս և այնպէս առնեմ...»

5 Մ. Աբեղայն, Երկեր, հ. Դ. Երևան, 1970, էջ 527։

(I, իթ), Պատմության մեջ հանդիպում ենք տարբեր օրջնանքների, անեծքների:

Ժողովրդական բառ ու բանը, ժողովրդական մտածողությունը շափազանց հարազատ է Զաքարիային: Թեև նրա շարադրանքում չկան ճոխ նկարագրություններ ու պեսպիսություններ, ինչպես Դավիթիցու առանձին հատվածներում, բայց դրա փոխարեն Զաքարիան անհամեմատ ավելի քիչ է օգտագործում թուրք-պարսկա-արաբական փոխառյալ բառեր, բարբառային բառերն ու բառաձերը նույնպես հաճախական չեն:

Գրաբարի քերականական համակարգում նկատվող շեղումներն էլ դգալիորեն քիչ են: Այսպես, ի—իջ գլուխներում հոգնակի բոլոր կաղմություններն ու կրավորական ձևերը կանոնիկ են: Երբեմն նա օգտագործում է այնպիսի բառեր, կապակցություններ ու քերականական ձևեր, որոնք նույնիսկ դասական գրաբարում հազվադեպ են կիրառվում: Օրինակ, այսպես կոչված, անմիշական ապառնին գրաբարում, հատկապես Աստվածաշնչի որոշ հատվածներում, արտահայտվում է հանդերձեալ + օժ. բայ+անորոշ դերբայ կառուցվով<sup>6</sup>: Զաքարիա Սարկավագին նույնպես ծանոթ է այդ ձևը: «Ամենայն բանք մեր զոր գործաք, յաղագս այսմ վանաց է, զորմէ հանդերձեալ եմք նառել: Հեղակարծումն ծամու (I, լթ), դիպանի (ի դիպանոց) (II, լթ)—«բանտ», «տնային կալանք»), բաղիրք (II, իթ), «ստամոքս», գրաւ «վերջ, ավարտ» բառերն ու կապակցությունները խորթ չեն Զաքարիային:

Զգացվում է, որ հեղինակը քաջածանոթ է գրաբարին և առանց մեծ ճիգերի, պատեհ առիթով, օգտվում է գրաբարի բառապաշտիքի ու քերականության գանձարանից: Հանգամանք, որ շենք կարող ասել Գրիգոր Դարանաղեցու մասին:

Դարանաղեցին ծնվել է 1576 թվականին, երկար տարիներ ապրել է Կ. Պոլսում, երուսաղեմում, եղել է Ղրիմում: Նա իր աշխատությունը՝ գրել է կյանքի վերջին տարիներին:

Լինելով կենսագրական բնույթի երկ՝ Դարանաղեցու «Ժամանակագրությունը» իր կառուցվածքով ու արժեքով զգալապես տարբերվում է Դավիթիցու և Քանաքեցու գործերից: Բայց հաշվի առնելով երկի ծավալը, շարադրանքի բնույթը, ինչպես նաև հայ և դիպանի ժողովուրդների պատմությանը վերաբերող բազմաթիվ տեղեկությունները, ուսումնասիրողներից շատերը «Ժամանակագրությունը» դիտում են որ-

<sup>6</sup>Տե՛ս Ա. Արցանայան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 281:

Դամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, Երուսաղէմ, 1915:

պես պատմագրական բնույթի ստեղծագործություն<sup>8</sup>, որտեղ կարևոր տեղեկություններ կան XVII դարի առաջին կեսին Արևմտյան Հայաստանում, հատկապես իր ծննդավայր էրզրումի գավառում կատարված իրադարձությունների, մի շարք գաղթավայրերի մասին։ Զգացվում է, որ գրաբար շարադրելը հեղինակի տարերքը չէ։ Երբեմն գրաբար գրելու ձգումը հանգեցնում է խրթնաբանության, նախադասությունների անկապակցության։ Ահա մեկ օրինակ. «Եւ էր տէր Խաչատուր անուն արեղայս այս ի մեր մանկական ժամանակին, որ երևեալ սորա ի մեր խեղաթիվ կարգ և կրօնք խառնակեալ ժամանակի, այլ խաւարն անգիտութեան շուրջ պատելով զամենսեան եւ բարեկարգութիւնք բնաւ ոչ ուրիշ երեւեալ ի վանորայն, որ միայն սուտ անուամբ էր վանք և արեղայր, որ աշխարհականաց տունք շատ լաւք էին քան սուտանուն վանորայրըն...» (505)։ Նման հատվածներ շատ կան (տե՛ս էջ 54, 78, 111, 130...): Դրանք աշըի են ընկնում երկարաշումն նախադասություններով՝ դեղբայնների ու դիմավոր բայիրի զուգորդմամբ, բուն մտքի հետ չկապվող շեղումներով, քերականական ժամանակների անհամաձայնությամբ, ավելորդ նախդիրների (նախադրությունների) օգտագործմամբ և այլն։

Դարանաղեցին նույնիմաստ նախդիրներ ու նախադրություններ կողք-կողքի շատ է կիրառում։ Օրինակներ. «Եւ այս Ղաղաքիս ոչ եղեն կատարեալ աշակերտք, ոչ վասն ծոյլ եւ պղերգ լինելոյ աղագաւ, այլ վասն վաղամահ լինելոյ սակս...» (356) «Վասն ագահութեան ախտից աղագաւ անհաշտ թշնամութիւն ունի ընդ մեզ» (411); «Եւ յետ քանից աւուրց յետոյ...» (548); «Վասն անպարտ սպանմանն պատճառին» (550) «Եւ նա բարկացեալ ասաց թէ յինչ սակս պատճառին տամ» (275); «Նա նստեալ առ աղբերին վերայ հացիկ ճաշակէր» (534); Նման կիրառությունները մի կողմից տվյալ դարաշրջանում գրաբարի շատ քերականական կարգերի ու խոսքի մասերի ոչ հստակ գործածության, մյուս կողմից էլ հեղինակի կողմից դրանց ճիշտ գործածությունը շիմանալու արդյունք են։ Դրանք բաղմաթիվ են գրաբար-աշխարհաբար ոչ միայն քերականական, այլև բառային զուգաձևությունները։ «Բամբակ ունինք ցանած և շատ այդիք ունիմք» (529), մենք-մեք, չենք-չեմք, եկեր են-եկեալ... և այլն։

Առանձին տեղերում էլ, որտեղ գրաբարը կանոնիկ է, զգացվում են ընդորինակումներ։ Գրքի շատ հատվածներ սկսվում են «Եւ դարձեալ դարձեայց ի յոն կարգի պատմութեան...» (308), «Դարձեալ դարձեայց

8 Դարանաղեցու կյանքի և նրա աշխատության մասին տե՛ս ԱՅ, ԵԺ, Հ. Յ, գիրք 1-ին, ինչպես նաև «Ժամանակազրության» հրատարակիւ Մեսրոպ վարդապետ Նշանյանի ընդարձակ առաջարանը։

յառաջի յոճ կարգի (239), «Եւ էր ոմն... (այր, վարդապետ, անուն...) և այլն: Նման ոճերը անշուշտ, ընդօրինակումներ են մեր մատենագիրների: գործերից:

Գրքում գերիշխող են ոչ գրաբար (աշխարհաբար, բարբառային) հատվածները, որոնք ժամանակագրության լեզվական ատաղձն են:

\* \* \*

XVII դարի պատմագրությունը ներկայացնում են հիմնականում այս հեղինակները<sup>9</sup>: Արանց գործերը կարենոր տեղեկություններ են հաղորդում տվյալ դարաշրջանի հայ (ինչպես նաև դրացի ժողովուրդների) կյանքի բազմաթիվ բնագավառների վերաբերյալ:

Դրանք հավաստի ու կարևոր նյութ կարող են տալ նաև ժամանակաշրջանի լեզվի քննության համար: Ի՞արկե, և՛ պատմագրության արժանիքների, և՛ շարադրանքի լեզվի հստակության ու մաքրության տեսակետից նշված գործերը հավասարժեք չեն:

Դավրիժեցին առավել հսկաստի ու քննախույզ պատմագիր է: Հայ վերածնվող պատմագրության լավագույն ներկայացուցիչներից մեկը, իսկ նրա ստեղծագործության լեզուն գրաբարն է: Աշխարհաբարն ու բարբառը հեղինակն այնքան հմտորեն ու տեղին է օգտագործում, որ շի խախտիում նրա ստեղծագործության լեզվական հենքը՝ գրաբարը. ավելին՝ այն, կարծես, ձեռք է բերում կենդանի լեզվի հատկանիշներ:

Զաքարիա Քանաքեռցին որպես պատմագիր դիշում է Դավրիժեցուն, բայց նրա գրաբարը ամելի «գրական» է, իսկ աշխարհաբար-բարբառային տարրերն էլ համեմատաբար քիչ: Դասական մատենագրությանը բնորոշ բառերն ու ոճերը, այլև քերականական ձևերը նա օգտագործում է անկաշկանդ ու նպատակասլաց:

Դարանաղեցու ժամանակագրությունը, զնայած իր ծավալին, և՛ պատմագրական, և՛ լեզվական տեսակետից (նկատի ունենք գրաբարը) զիշում է նախորդ երկուսին:

\* \* \*

Պատմագրության մեջ կարելի է զետեղել նաև մանր ժամանակագրությունները. վերջիններս սովորաբար փոքրածավալ են, դրանց հաղորդած տեղեկությունները վերաբերում են տվյալ ժողովրդի պատմության համեմատաբար կարճ ժամանակահատվածի այս կամ այն իրա-

<sup>9</sup> Խելպես նշել ենք, ուսումնասիրողները Դարանաղեցուն համարում են և՛ ժամանակիր, և՛ պատմագիր: Նույնպես և ծ. Քյոմուրճյանին կարելի է համարել և՛ պատմագիր, և՛ տարեգիր:

գարձության: Բայց տվյալ դարաշրջանի մանր ժամանակագրությունները, հատկապես իրենց ամբողջության մեջ, արժեքավոր փաստեր են հազորդում պատմության, դարաշրջանի լեզվավիճակների: Ծննդության ու լուսաբանման համար: Չի կարելի անտեսել նաև ազգագրական, բանահյուսական, աշխարհագրական տեղեկությունները:

Հայ բազմադարյան մատենագրության մեջ զգալի թիվ են կազմում մանր ժամանակագրությունները, այդ թվում և XVII դարում գրվածները<sup>10</sup>:

Թեև ժամանակագրության ժանրային հիմնական առանձնահատկություններից մեկը փոքր ծավալն է, բայց երբեմն որևէ կոնկրետ իրադարձություն հաղորդող տեղեկության հետ հանդիպում ենք ավելի ծավալուն հաղորդման: Լեզվական քննության տեսակետից վերջիններս ավելի նպատակահարմար ու փաստառատ են: Ժամանակագրությունների մի մասում գերիշխողը զրաբարն է, միջին հայերենի, աշխարհաբարի ու բարբառային տարրերի սակավ գործածությամբ Անանուն ժամանակագիր, Անանուն կիվունացի, (Մժ, I), Անանուն Վանեցի, Դավիթ Բաղեցի (Մժ, II) և այլն: Իսկ Հակոբ Կարնեցու, Բարսեղ Գրիշի, (Հ. 1), Խաչատուք Կաֆայեցու, Դարրիել Թոփաթեցու ժամանակագրություններում գրաբարը ետին պլան է մղված:

Երբեմն միևնույն իրադարձությունը մի հեղինակ շարադրում է գրաբարով, մի ուրիշը՝ աշխարհաբարով: Անշուշտ նման դեպքերում դեր ունի հեղինակի լեզվական նախասիրությունն ու գրաբարի իմացությունը: Նկատելի է, որ ավելի վաղ կատարված իրադարձությունները հաճախ ներկայացվում են գրաբարով, իսկ իրենց ապրած ժամանակների մասին խոսելիս հեղինակները սկսում են օգտագործել աշխարհաբար, բարբառային ու փոխառյալ բառեր:

Այսպես, Դավիթ Բաղեցեցու ժամանակագրության հին ժամանակներին վերաբերող հատվածները գրված են ընտիր գրաբարով: Հեղինակը ոչ միայն օգտվել, այլև, ինչպես ինքն է խոստովանում, ծաղկաբաղ է արել մեր պատմիչներից: Անցյալի իրադարձությունները նկարագրելիս Բաղեցեցու լեզուն նմանլում է այն հեղինակի լեզվին, որը ներկայացրել է տվյալ ժամանակաշրջանը, և որից օգտվել է նա:

Իսկ երբ հեղինակն անցնում է XVII դարի դեպքերին, ապա զգացվում է դարաշրջանի լեզվի ազդեցությունը. Ներսէսի նէրապեափ (362),

10 Մանր ժամանակագրությունների հավաքման և հրատարակման շնորհակալ ու գժվար աշխատանքին վաղուց ձեռնամուխ է եղել ԴԱ պատմության ինստիտուտը, այժմ հրապարակի վրա է երկու հատորը, տես՝ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. (Հ. 1, Երևան, 1951, Հ. 2, Երևան, 1956) հատորները կազմել և ծանոթագրել է Վ. Հակոբյանը:

գլումը էրներն, զիցերն (358), դուլ, շառուշ (363), արգ առին (362) և  
այլն:

Գրաբարը գերիշխող է նաև Վարդան Բաղիշեցու ժամանակագրության  
մեջ, բայց փոքր ծավալը և շարադրանքի ձևը (իրադարձությունները  
սոսկ ժամանակագրական կարգով թվարկելը) հնարաւորություն չեն  
ընձեռում նշելու այս հեղինակի լեզվական առանձնահատկությունները:

Չնայած փոքր ծավալին, ժամանակագրություններում նույնպես ըզ-  
գացվում է ոճական տարբեր հնարանքների առկայությունը: Միենույն  
փաստը մեկը կարող է արձանագրել միայն, մյուսը՝ դրա հետ միասին  
արտահայտել իր զգացմունքները. առանձին դեպքերում, որոշ հատված-  
ներ զեղարվեստական արձակի երանգավորում են ստանում:

Նման լավագույն նմուշ է Անանուն հեղինակի մի ժամանակա-  
գրությունը (տե՛ս ՄԺ., հ. 1, էջ 181—188):

Այն ընդամենը 8 էջ է և վերաբերում է հիմնականում 1604—1608  
թթ. իրադարձություններին: Ալդ դեպքերը նկարագրել են և՝ Դավիթե-  
ցին, և՝ Դարմանաղեցին, և՝ Քանաքեռցին, բայց Անանունի նկարագրու-  
թյունը ուրույն է: Ահա Արաքսն անցնելու տեսարանը. «...Եւ ապայ զի-  
նուրացն զամենեսեան ժողովեցին ի յափն երասխայ և զի սակաւ էր  
նաև ի յանցուցանելն, քեցեցին զամբոխն աշխարհաժողով և ի գետն  
մղեցին և սկսաւ շուրն լինել նոցա գերեզման և յուղարկաւոր... Ապայ  
յոսահատեալ հարց և մարց մանկանց ասէին լերանց, թէ «անկերուք  
ի վերայ մեր և բլրոց թէ ծածկեցէք զմեղ» (183):

Ավելի հուզիչ է Սպահան հասած հայերի վիճակի նկարագրությու-  
նը. «Մերքն հիւանդաքայլ ոտիւք տարակոյս տկարութեամբ ի հնութենէ  
ժամանակին, երիտասարդք փոխանակ ուրախութեան և ձայնի երգոյն,  
ի մոնշին լալոյ հեծեծէին, նորասէր առագաստի հարսն ու փեսայն փո-  
խանակ ցնծութեան և խրախութեան, զգուժիւ զգածեալ և ծանրացեալ,  
ծարրասեր և սնգորասէր, ամրածածուկ, քողածիգ, պարկեշտ կուսանքն  
և օրփորդեն հոլանի եղեալ զիւղաթոր մի ցցումս և վարսս յանդգնարար  
մերկացեալ և խայտառակեալ, հովանուունդ և փափկասուն գեղամօթ-  
ղած և ողջախոռ...»<sup>11</sup> բարդ բառերի (երբեմն նորաստեղծ) նրբաճաշակ  
օգտագործումը ժամանակագրության ոճական առանձնահատկություն-  
ներից մեկն է:

Զանձրալի շեն երկարաշունչ նախադասությունները, որովհետեւ հե-  
ղինակը նրանք կապակցում է հմտորեն, խուսափում ոչինչ շասող բա-  
ռակուստակամներից:

11 Նույն տեղում:

XVII—XVIII դարերում Վանում կատարված իրադարձություններին է վերաբերում Անանուն Վանեցու ժամանակագրությունը: Այստեղ փոխառությունները զգալիորեն քիչ են, գրաբարից շեղումներն էլ՝ հաղվադեպ:

Մասն ժամանակագրությունները շատ ընդհանրություններ ունեն, ուստի բոլորին անդրադառնալը նպատակահարմար չէ: Խնդրո առարկա շենք դարձնում նաև ոչ գրաբարագիր ժամանակագրությունները: Վերջիններիս ուսումնասիրությունը անհրաժեշտ է աշխարհաբարի սկզբնավորման, պատմական բարբառագիտության որոշ հարցերի լուսաբանման համար, որը դուրս է սույն աշխատանքի շրջանակներից:

### Զ. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դարաշրջանի հայ փիլիսոփայական մտքի առաջընթացը կապված է հատկապես Ստեփանոս Լեռացու և Սիմեոն Զուղայեցու հետ: Սրանց մասին, և ընդհանրապես փիլիսոփայության պատմության վերաբերյալ, կարևոր տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին:

Ստ. Լեռացին ծնվել է կվովում, «Որ էր ինքն ի մայրաքաղաքէն իլովայ և յազգէն հայոց... որ ի տիս տղայութեան իրոյ վարժեցաւ ի դպրատունս իլովացոց՝ գրով և լեզուամ լատինացոց և ուսաւ զարուեստ քերականութեան և զարտաքին գիրս փիլիսոփայից...»<sup>12</sup>: Հավանութիւն մանկության տարիներին հայերեն շի իմացել, այլ առվորել է հետագայում՝ էջմիածնում, որտեղ և ձեռնամուխ է լինում թարգմանության գործին: Նրա կարևոր թարգմանություններից հն «Ի գրոց պատճառաց Արիստոտելի կամ ոմանց թուի Պրոկլի», «Դիրք բնազանցական Արիստոտելի և լուծմունք նորին», «Հայելի վարուց որ կոչի ֆրանկաց Հարանց վարք», կրոնական շատ գործեր, այդ թվում և Զուլքանը<sup>13</sup>:

Ս. Զուղայեցին ստեղծագործել է XVII դարի առաջին կեսին: Զուղայեցին օգտվել է համաշխարհային փիլիսոփայական մտքի լավագույն ներկայացուցիչներից՝ Պլատոնից, Փիլոնից, Պորփիրից, Պրոկլից, Թովմա Արվիլինացուց և շատ ուրիշներից<sup>14</sup>: Վերականգնելով հայ փիլիսոփայության նոմինալիստական ավանդույթները, նա խոր հետք է թողնում ինչպես հայ, ամսական էլ վրաց փիլիսոփայական մտքի զարգացման հետագա ընթացքի վրա<sup>15</sup>: Նա հեղինակ է նաև քերականության, որը ժամանակի լավագույն դասագրքերից է:

12 Առաքել Դավրիժեցի, Պատմություն..., իթ, 407:

13 Տե՛ս Լեռ, Ե՛թ, հ. 3, էջ 410:

14 Հ. Միրզոյան, Սիմեոն Զուղայեցի, Երևան, 1971, էջ 35:

15 Նույն տեղում:

Նշանակալից երկույթ էր նաև նրա տրամաբանությունը, որը ընդօրինակվել և ցայսօր էլ պահպանվել է հարլուքավոր ձեռագրերում:

Բնականաբար, մեղ առաջին հերթին հետաքրքրում է փիլիսոփայական գործերի լեզուն<sup>16</sup>:

Ակնհայտաբար, սրանք վերծ են բարբառային և փոխառյալ բառերից (խոսքը վերաբերում է թուրք-պարսկերն-արաբերն- նոր փոխառություններին); Դարերի ընթացքում ինչպես ինքնուրույն երկերի ստեղծմամբ, այլև՝ հին հոմական փիլիսոփայության նշանավոր գործերի թարգմանությամբ գրաբարը դրսերվել է նաև որպես փիլիսոփայության լեզու: Այդպիսին էրև XVII դարի գրաբարը: Ստեղծված հարուստ գրականությունն ու փիլիսոփայական տերմինաբանությունը անշուշտ օժանդակել են փիլիսոփայական մտքի դարդացմանը՝ նոր պայմաններում: Ուրեմն փիլիսոփայական երկերի լեզուն բնականաբար հակված է դեպի «հինը»: Այլ կերպ ասած, բարբառային-ժողովրդական, նոր օտար փոխառությունների նվազ գործածումով, պահպանելով գիտական լեզվի պատշաճ մակարդակ, այն ավելի շատ ընդհանրություններ ունի վաղ գրաբարի հետ: Գրաբարի դասական գերականության ավանդների օգտագործման միտումը փիլիսոփայական գործերի լեզվի գլխավոր առանձնահատկություններից մեկն է:

Անշուշտ դարաշրջանի աղղեցությունն էլ կա. նորակաղմություններ, աշխարհաբար որոշ ձևեր, գրաբարին խորթ կաղմություններ, լատինաբան ձևեր. ինչպես՝ «զի ի կենցաղումս ոչ կարեմք զնոսսա գիտել»: (Ստլ., 12): «Նիւթ իմանալի զնի ի սահմանում քանակութեան» (Ստլ., 42): «Երրայցի գոյն Պողոսի ոչ կարե բառնիլ ի նմանէ» (տրմբ. 22): «Երրորդն է զենթակայէ և նենքակայում...» (տրմբ. 30): «Չորրորդն է զենթակայէ և ոչ նենքակայում, որ է մասնաւոր գոյացութիւն...» (տրմբ. 30):

Սակայն այս ձևերը հաճախական և որակակազմ շեն:

16 Քննության ենք առել Զուղայցու և Ստ. Լեհացու մի շարք ինքնուրույն և թարգմանական գործեր՝ Սատենադարանի № 5074 ձեռագիրը, որտեղ զետեղված են «Դիոն Արիստագուցու մատենագրութիւնը» (թրգմ. Ստ. Լեհացու) «Ի գրոց պատճառաց Արիստոտելի կամ Պրոկլի» և Ստ. Լեհացու «Բանք իմաստափրականք և աստուածականք»-ը: Օգտագործել ենք նաև № 2303 ձեռագիրը (Ս. Զուղայցու մի շարք թարգմանություններ՝ «Մեկնութիւն Պրոկլի», «Յաղագս նշանակութեանց բառից տրամաբանականաց» և այլն): Հղումների դեպքում կնշենք ձեռագրերի համարը և էջը: Տպագիր գրքերից մեր ձեռքի տակ է եղել Զուղայցու «Քերականությունը և Տրամաբանությունը» (Կ. Պոլիս, 1728): Իհարկէ լեզվական քննության համար առավել կարևոր են ինքնուրույն, բան թարգմանական գործերը, բայց բանի որ թարգմանություններն էլ կատարվել են նույն դարաշրջանում՝ նույն հեղինակների կողմից, ուստի և մենք շենք կարող շրջանցել դրանք.

Թեև Ս. Զուղայեցուն կարելի է համարել լատինաբանության դեմ առաջին ընդվզողներից մեկը, այդուհանդերձ, ինչպես նկատելի է հենց վերոգրյալ օրինակներից, լատինաբան գրաբարի որոշ ձևեր կիրառվել են նաև նրա կողմից:

XVII դարի փիլիսոփայական գործերի բնորոշ հատկանիշներից մեկն էլ նրանց պարզությունն ու հասկանալիությունն է, պայմանավորված՝ ոչ թե փիլիսոփայական ըմբռնումների ու շոշափվող հարցերի մակերեսային քննությամբ, այլ բարդ հասկացությունները ըստ հնարավորին պարզ ու մատչելի ներկայացնելու, ընթերցողին հասկանալի դարձնելու մտադրությամբ։ Այսպես, ամենաթոռոցիկ համեմատությունները իսկ նկատելի է, որ Ստ. Սյունեցու (VIII դար)՝ Դիոնիսիոս Արքապատճեցու թարգմանությունը շատ ավելի խրթին է, քան նույն գործի՝ Ստ. Լեռացու թարգմանությունը։

Փորձենք առանձնացնել փիլիսոփայական երկերի լեզվական մի շարք առանձնահատկություններ, որոնցով նրանք տարբերվում են այդ դարաշրջանի այլ գործերից։

Առաջին հրթին պետք է նշել բառապաշտը։ Այն չի ընդգրկում պետական-հասարակական կյանքի զանազան բնագավառները՝ կենցաղը, մարդկանց առօրյա կյանքն ու աշխատանքը, այստեղից էլ՝ այն պարզ հետևությունը, որ փիլիսոփայական երկերի լեզուն և հատկապես բառապաշտը դարձրշանի կյանքի լեզվական անմիջական արտացոլումը չի տալիս։ Բառապաշտը հիմնականում ընդգրկում է փիլիսոփայական, աստվածաբանական, տրամաբանական հասկացություններ։ Վերացական հասկացությունները (և դրանք արտահայտող բառերը) ավելի գերաշշիռ են, քան կոնկրետ առարկայական իրողություններ արտահայտողները։

, Ներքոգրյալ և նման կարգի բառերը ամենահաճախականն են։ Անորոշելի, աստուած, աստուածաբար, արարիշ, արարշական, արարողական, բազմադիմի, բացայայտեմ, բացասութիւն, բացերեխութիւն, բղախոհութիւն, գերազոյ, գերակայ, զգայական, իմաստակ, իմաստասէր, հակակայ, համափոյ, ներտրամադրեմ, նիւթ, նիւթեղէն, սահման, սահմանեմ, տրամաբանութիւն, փաղանում...

Զգալի թիվ են կազմում բարդ բառերը։ № 5074 ձեռագրի միայն 67 բ և 68 ա էջերում օգտագործված են ավելի քան 20 բարդ բառեր, որոնցից են՝ աստուածանման, աստուածանմանապէս, աստուածանսակարար, դիւրամուտ, դիւրանցագոյն, դիւրազեռն... ահա այլ օրինակներ՝ անփխագործութիւն (74), դուզնաբանագոյն (328), երեշտակավայլուշ (75):

Նույնպես շատ հաճախական է միանուլն արմատից կազմված բառաձևերի կողք-կողքի գործածությունը. «Եւ տես դի իմանալի է իմացողն և իմացական իմացեալն (Ստե., 235ր), եւ զգերագոյն գերագոյապես ահարանել» (անդ., 326): «Ուստի ամենայն կամ անհակաղարձական է, կամ ինքնադարձական կամ այլադարձեալ (№ 5074, 155ր): «Զի ոչ է անշարժ և ինքնաշարժ, այլ միայն շարժելի» (անդ., 166ր): «Դրաւրին դրելոյն է և դրեալն դրութեամբն է» (տրմբ., 49): «Թե՛ թեատրինն է և թեատրն թեովն է թեատր» (անդ., 50):

Ինչպես և այլ շրջանի փիլիսոփայական գործերում, Զուղայեցու և Լեհացու մոտ բավական տարածված են ածանցավոր բառերը:

Ան.-Անիմացական (15), անճառելի (15), անմարմնոցն (14), անմատչելի, (14), աննմանք (14), անկատար (21), անսահմանելի (17), անսրբազան (21):

Գեր.-Գերագոյն (71) գերագոյն (70ա), գերապետագոյն (71), գերազարդաբար (71), գերալոյս (326ր), գերասերուիլ (301ր)<sup>17</sup>:

Ներ.-Ներածեմ (446ր), ներգործութիւն (72), ներիմացում (417ր), ներհակ (443ր),

Ական.-Ճշմարիտն է սահման և եղր իմացականին և բարին է սահման ցանկականին (429ր): Ազնուական, ամբողջական (447ր), բնական (429ր), գործնական (430ր), մասնական (430), մարմնական (ն. տ.), յափտենական (429ր), յարամնայական (447ր), նիթական (430ր):

Բար.-անընդմիջաբար (38), բնաւորաբար (26), նախկնաբար (28), նուազաբար (67), պետաբար (53, 54) քահանայապետաբար (55):

Գոյն.-առաւելագոյն (329), բազմաբանագոյնք (328), դուզնաբանագոյն (328), ընտանեգոյն (329ր), հեռագոյն (328ր), մերձաւորագոյն (328ր)...

Նկատելի է դերբայների առատ կիրառությունը, հաճախական են հատկապես լի-ով ապառնիները. Օրինակներ. «Դնելի ընդունեն» (20): «Ամենայն նիթ գոլ իմանալի» (20): «Ճաղագս որոց բանս է վարկանելի» (63): «Որպէս հասանելի է պատմել զառի յաստուածանմանութիւն» (71): «Բայց սկսանելի է բանիս և խուզելի խորհրդական» (76): «Պատասխանի տալի է ճշտապէս» (240): «Թոյլ տալի է ահարանիլ» (302): Վաղ գրաբարում այս ձևերը, հատկապես որոշ բառերի համար, այնքան էլ տարածված կիրառություն լունեին:

Փիլիսոփայական երկերի լեզվին, թերեւս նաև այդ դարաշրջանի

17 Հղումները ըստ էջերի վերաբերում են № 5074 ձեռագրին:

գրաբարին բնորոշ պետք է համարել բայանումների: առաւտ գործածությունը (երբեմն՝ անորոշ դերբայի փոխարեն): «Ելումն որդւոյն է ի ձեռն գործոյ իմացման, իսկ ելումն հոգւոյն սրբոյ է ի ձեռն կամաց» (404բ): «Զարմացումն է տեսակ երկիւղի» (408բ): «Հաւանումն պատահի երեք կերպիւ...» (424բ): «Ամենայն բարձմունք շարաց բարի են... Դավիթի զԳողիւաթ սպանելն և Սամուելի զԱգագ սպանանելն են բարձմունք շարաց»<sup>18</sup> (տրմբ., 154):

Նկատելի են հոեստորական հարցի, միադիմի բայերի բազմաթիվ գործածությունները: Եթե օրէն է, պարա է, պիտոյ է... ձևերը տարածված են նաև վաղ շրջանի գրաբարում, ապա՝ օրինաւոր է, անկար է և նման այլ ձևեր ավելի շատ բնորոշ են ուշ շրջանին: «Եթե օրինաւոր է ինձ ասել» (22): «Անկար է գոլ անդամ մարմնոյ միոյ, այլ մարմնոյ» (տրմբ., 39):

Փիլիսոփայական-տրամաբանական գործերին բնորոշ պետք է համարել նախ... ապա կառույցների, պատճառի, հիմունքի պարագա երկրորդական նախադասություններով բարդ նախադասությունների առատությունը, սահմանումների, դատողությունների բնույթ կրող ձևակերպումները: Օրինակներ, «Նախ զի որպէս բանն հօր... երկրորդ զի ճշմարտագոյն և կատարելագոյն զմեղ լուսաւորէ...» (6): «Նախ մաքրի և ապա լուսավորիլ» (26): «Եւ ուրն է ոչ է տեղի. զի տեղին ոչ ցուցանէ զտեղակալ ինչ գոլ ընդ տեղեաւա» (տրմբ., 66) «Գինեմոլն ոչ է սիրող իմաստութեան, ուրեմն գինեմոլն ոչ է փիլիսոփայ» (տրմբ., 160): «Շարամանութիւն է բաղհիւսութիւն պարզ ձայնից, առ ի յայտաբերել զներտրամադրեալն» (անդ. 90):

Տարբեր խոսքի մասերի (նույնիսկ նախադասությունների) առարկայացումը ոճական բնորոշ միջոց է Զուղայեցու մոտ:

«Եւ այս յայտ է, զի որ ի զինչեումն ստորոգի գոյացութիւն է. իսկ գոյնն զսպիտակէն ի զինչեումն ստորոգի» (տրմբ. 82)<sup>19</sup>: «Իսկ Ոշն է հանգէտ ոչ ոքին»: «Եւ ոչ ոչոքն է հանգէտ ոմնին» (113): «Որք են կարճառուտ պատասխանիք հակասականք, այոն ստորական և ոչն բացասական» (164): «Մարդ է կենդանի երկուտանի՝ կարօղ նաւել»: «Ահա կենդանին և երկուտանին են գոյացականք, իսկ կարօղ նաւելն է պատհական» (156):

Թվարկված հատկանիշներն էլ իրենց ամբողջության մեջ կարելի է համարել գործառական ոճի յուրատեսակ արտահայտություն:

18 Նշե՞ն Բարձմունք բառը շոմի:

19 Այս շարքի բոլոր հղումները վերաբերում են Ս. Զուղայեցու «Գիրք տրամաբանութեանը»:

Ստ. Լեհացու և Զուղայեցու մոտ, անշուշտ, նկատելի են լեզվական այլ հատկանիշներ, սակայն դրանք բնութագրական են ոչ թե փիլիսոփայական երկերին, այլ դարաշրջանի լեզվական մտածողությանը:

### Յ. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ մատենագրության սկզբնավորման շրջանից իսկ հանդիպում ենք հիշատակարանային (մեմուարային) գրականության առանձին արտահայտությունների՝ վարքագրություն (Կորյուն), պատմական հուշագրություն (Եղիշե), և հիշատակարաններ (սփուլած տարբեր ձեռագրերում):

Հիշատակարանային (մեմուարային) գրականության բուռն զարգացումը բնորոշ է սակայն վերածնության շրջանին: Հայ գրականության մեջ այդ ժանրի վերելքի շրջան կարելի է համարել XVII դարը<sup>20</sup>: Նշված շրջանում երևան եկան ոչ միայն առանձին ստեղծագործություններ ու նոթեր, այլ ժանրը դրսերվեց համարյա իր բոլոր տարատեսակներով: Դարաշրջանի հիշատակարանային գրականության ուսումնասիրությունը ոչ միայն գրականագիտական ու լեզվական, այլ նաև պատմագիտական հարուստ նյութ կարող է տալ: Անժխտելի է նաև նրա ճանաշղղական արժեքը: Անդրադառնաբ հիշատակարանային գրականության տեսակներին ու որոշ ստեղծագործությունների:

### Ա. Ուղեգրություն

Բազմադարյան պատմություն ունեցող հայ մատենագրության մեջ, տարբեր դարաշրջաններում կարելի է հանդիպել ուղեգրական-ճանապարհորդական տարբեր տեղեկությունների ու վկայությունների: Առաջին վկայությունը ըստ երևույթին պատմահայր Խորենացու Եղեսիագիպտոս-Ալեքսանդրիա-Իտալիա-Աթենք կատարած ճանապարհորդության նկարագրությունն է<sup>21</sup>:

XVII դարի ուղեգրական-ճանապարհորդական օրագրության լավագույն նմուշը Սիմեոն Լեհացու ուղեգրությունն է<sup>22</sup>:

20 Մելուարային և հատկապես հայ մեմուարային գրականության մասին տե՛ս Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961:

21 *Տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիմ հայոց», Տփդիս, 1913, Գիրք 3, գլ. ԿԲ: Հետագա շրջանի մատենագրության մեջ նույնպես հանդիպում ենք ճամփորդական զանազան նոթերի:*

22 «Սիմեօն Դարբի Լեհացոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն և լիշատակարանք»: Առավելագույն համարակեց է Հրատարակեց Հ. Ներսէս վ. Ակինեան: (Առաջին անգամ հրատարակվել է ՀԱ-ի և 1932-35 թթ. համարներում, իսկ 1936 թ.՝ առանձին գրքով):

Լեհացին ծնվել է 1584 թ. Լեհաստանում: Նա մեծ վաստակ ունի բազմաթիվ ձեռագրերի ընդորինակման գործում:

Լվով, Երուսաղեմ, Պոլիս, Իղմիր, Կրետե, Վենետիկ, Կաֆիրե՝ ահա այն բնակավայրերի ու լրիվ ցանկը, որտեղ եղել է Լեհացին XVII դ. առաջին տասնամյակում սկսած իր 12-ամյա ճանապարհորդության ընթացքում: Իր տղեգրության մեջ էլ ամփոփված են այցելած երկրների ու ժողովուրդների մասին բաղմաթիվ կարևոր ու հավաստի տեղեկություններ: Նա XVII դարի առաջին հայ հեղինակն է, որ վկայում է լեհ-օսմանյան (1622), լեհ-շվեդական (1635), լեհ-ռուսական (1632) պատերազմների մասին: Մեզ համար առավել կարևոր են հայ կյանքին վերաբերող տեղեկությունները, որոնք սփոված են նրա ստվարածավալ գրքի բաղմաթիվ էջերում: Գերիշխող այս գրքում ժամանակի աշխարհաբարն է, խոսակցական լեզուն՝ օտար, այդ թվում և եվրոպական լեզուներից կատարված փոխառություններով: Դժվար է առանձնացնել գրաբար փոքր ի շատե ծավալուն հատված: Որոշ գրաբարյան քերականական ձևեր ու բառակապակցություններ էլ հանդիս են գալիս աշխարհաբարի հետ գիրկընդիմառն, իսկ սա հենց ժամանակի աշխարհաբարի առանձնահատուկ կողմերից մեկն է:

Գրաբարի նվազ գործածությունը (որպես համակարգ փաստորեն գրաբարը չի դրսուրկում) պայմանավորված չէ միայն հեղինակի գրաբարի իմացության աստիճանով կամ լեզվավիճակի ընտրության նրա նախասիրությամբ, այլ առաջին բխում է երկի բնույթից: Տարբեր միջավայրերի ու բարեկերի (երբեմն իրար հակոտնյա), հասարակության տարբեր խավերի նկարագրությունները, նոր (երբեմն օտար) հասկացությունները տվյալ դարաշրջանում գրաբարի օգտագործման համար մեծ դժվարություններ են ստեղծում: Եթե պատմագրական երկերում իսկ գրաբարն արդեն իր տեղն էր զիջում աշխարհաբարին, ապա ճամփորդական բազմատեսակ մանրամասների նկարագրության ժամանակ գրաբարն առավել ևս գործառելի չէր: Պատահական չէ, որ Լեհացու գործում եղած գրաբար հատվածները բուն ուղեգրական նկարագրություններ չեն, այլ՝ միջանկյալ հատվածներ՝ հիշատակարաններ, նամակներ, գրքային ոճեր: Ահա մայրապետի խոսքերն ուղղված իր սաներին: «Ովորդեակե, մինչեւ ցայս տիմար եւ տգէտք էիք. եւ արդ իմաստուն եւ կատարեալ էք. որ գիտէք զշարն եւ զրարին. զի մեք վասն Աստուծոյ սիրուն պահեցաք զծեղ և սնուցաք եւ որպէս մայր զամենայն շարշարանս ձեր յանձն առաք... Արդ այժմիկ ասացէք մեզ զի՞ն է կամք ձեր. կամի՞ք աստ մնալ եւ ծառայել Աստուծոյ մինչեւ ի մահ, թէ աշխարհս մտանէք եւ ամուսնանայք...» (64—65): Ներքոգրյալը սուլթանի նամակն է Լեհաց թագավորին. «...Սուլթան Օսման հզօր եւ մեծ, յաղթող ամենայնի և ոչ ումեքէ յաղթահարեալ... զոր ունիմ զշորս կողմ աշխարհիս ընդ իշխանու-

թեամբս իմով, հարկատու արարեալ զամենայն աղքս եւ զազինս...» (358): Նման դեպքերում է միայն հեղինակը դիմում գրաբարին:

XVII դարում է գրված նաև Ավգուստինոս Բաշեցու «Ճանապարհորդութիւն Յեւրոպայ»<sup>23</sup> գիրքը: Բաշեցին Ռուսաստանի վրայով հասնում է Եվրոպա, լինում է մի շարք երկրներում՝ հետաքրքիր տեղեկություններ հաղորդելով այդ մասին:

Ուղեգրության լեզում անպաճույն է, զերծ ավելորդ մանրամասներից: Ի տարբերություն ժամանակակից հեղինակների մեծ մասի, Բաշեցին ակնհայտորեն խուսափում է օտար փոխառություններից: Դրան զուգընթաց նա առատորեն օգտագործում է բարբառային բառեր ու բառակապակցություններ: Գուս արին, տանէ դուս եկեալ, քու օթուպի», յեղեւ «Հետո» (7): Եթե ժամանակի գրաբարը ներկայացնելու հարցում այս ուղեգրության արժեքը մեծ չէ, ապա հակառակ դրան, այն զգալի է բարբառային փաստերի ներկայացման տեսակետից:

\* \* \*

XVII դարի գրաբարագիր ուղեգրական գրքերից է Դավիթ Երեցի ներուսաղեմ կատարած ճանապարհորդության նկարագրությունը՝ գրված 1635—1651 թվականներին<sup>24</sup>: Ուղեգրությունը իր ծավալով զգալիորեն փոքր է վերը հիշատակվածներից, բայց այդ փոքր ծավալի մեջ զգացվում է հեղինակի գրաբար գրելու ձգտումը: Միայն մեկ անգամ ենք հանդիպում ոչ-գրաբարյան բառի ու մտածողության՝ կարմունենին վերայ: Առօրյա, ոչ գրքային արտահայտություններն էլ հեղինակը շարադրում է գրաբարով՝ «Եւ ես գիշերն ամենայն զմտաւ ածեալ զգնալն իմ սուրբ յերուսաղեմ լաւագոյն համարեցայ քան առ Ըստամպոլս: Անշուշտ, եթե այս գործի ծավալն ու ընդգրկման շրջանակներն էլ մեծ լինեն, ապա ի հայտ կգար աշխարհաբարը, հնարավոր կլիներ մանրամասնել նաև լեզվական իրողություններ»:

\* \* \*

XVII դարի մի այլ ուղեգրության<sup>25</sup> մեջ պատմաաշխարհագրական տեղեկություններ են հաղորդվում եթովպիկայի և եթովպացիների մասին: Դա Հռվիմաննես Թուրունջի ուղեգրությունն է: Մեզ հասած երկու տարրե-

23 Այն հաստարակել է Ք. Պատկանյանը: Տե՛ս «Նշխարհը մատենագրութեան հայոց», Ս. Պետերբուրգ, 1884:

24 Տե՛ս «Եպուցակ հայերէն ձեռագրաց», կազմեց Հ. Ցակովյան Տաշեան, Վիեննա, 1895, էջ 840—841:

25 Ուղեգրությունը տե՛ս Ս. Ալվայանեան, Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապեշխատան Ժէ գարուն, Գաճիրե, 1946: Ուղեգրության վերնագիրն է՝ «Պատմութիւն հապաշխատանայ զմալոյ եւ զալոյ ճանապարհին ի թուին Թաի 1678»: Ուղեգրության Պոլսի

րակները՝ Պոլսի և Երևանի, լեզվական տեսակետից էական տարբերություններ ունեն: Երևանի օրինակը ավելի հղված ու մշակված է, գրաբարյան ձևերը աշխարհաբարի համեմատությամբ ավելի հաճախական: Համադրության համար բերենք երկու փոքրիկ հատվածներ:

Պոլսի տարբերակ—այլ եւ կայ ծառ մի մեծ որ բարձր է քան զզանկակատունն Փիզայու և տակն այնքան հաստ է որ բոլորն կու փորեն՝ 15 և 20 կամարաւ կուշինեն. եւ գլուխն փոքր ճուղ ունի, եւ պտուղ ունի, որպէս թարում փշատի նման է եւ թթվաշ ունին զայն....

Երևանի տարբերակ—Բայց կայ և ծառ մի որ ոչ ինչ գտանի ի նա, և է բարձր որպէս զանկակատուն Փիշահու և տակն այնքան հաստ է, որ ժէ կամար և (ն) շինել ի ծառէն. և ի գլուխն ունի սակաւ ճիւղ, և պտուղն որպէս դղում և մէջն է իբրև զփշատ թթվաշ, և մարդիկը ուտեն զայն:

Երկու տարբերակների համադրումը հետաքրքրական է հատկապես բառային հոմանիշների օգտագործման, զրանց բարբառային պատկանելության տեսակետից: Ըստ երևույթին բնագիրը Պոլսի օրինակն է, որը հետագայում ընդորինակվել և «գրականացվել» է այլ գրչի կողմից:

Հիմնականում վերոհիշյալ գործերն են ներկայացնում XVII դարի հայ ուղեգրական գրականությունը՝ դարաշշանի հասարակական-պատմական, մշակութային կյանքի ուրույն արտացոլմամբ:

### Բ. ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

XVII դարի հիշատակարանային գրականության մեջ առանձին խումբ են կազմում օրագրությունները:

Զաքարիա Ագուկեցու Օրագրությունը<sup>26</sup> ընդգրկում է 1647—1681 թվականները:

Օրագրությունն անշուշտ արժեքավոր է XVII դարի պատմության որոշ հարցերի լուսաբանման համար, իսկ նրա լեզվական քննությունն էլ լրացուցիլ փաստեր կարող է տալ հայ բարբառների, հատկապես Զուղայի բարբառի վերաբերյալ: Թեպես գրքի առաջաբանում օրագրության լեզուն դիտվում է որպես ժամանակի հայ վաճառականների խոսակցական լեզու, որը մի խառնուրդ է՝ գրաբարի և Զուղայի բարբառի յուրահատուկ արտասանությամբ և ուղղագրությամբ, սակայն, պետք է ասել, որ այնտեղ

և Երևանի տարբերակները գետեղված են նաև Հ. Անասյանի «XVII դարի աղատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» գրքում, Երևան, 1961 թ., (էջ 301—311): Հստ Հ. Անասյանի թութումնի դեպի Եթովպակիա ուղղության նպատակը պիտի լիներ անպայման բաղաբական և կապ ունենար աղատագրական խնդիրների հետ (տե՛ս նշվ. աշխ., էջ 202):

26 Զաքարիա Ագուկեցու Օրագրությունը, Երևան, 1938 (Օրագրության գիտական տեքստը հրատարակել է թ. Ավելալը կյանքը):

գրաբար համարյա չկա, կան միայն հատուկենտ քառեր ու քերականական ձևեր, այն էլ երբեմն ու կանոնիկ (Հմմտ. կամիւ, հանդիրեցէ, դարձեալ... և):

XVII դարում է գրված նաև Մինաս Ամդեցու Օրագրությունը:

Հնարավոր չէ խոսել այս գործի պատմական և հատկապես լեզվական արժեքի մասին, որովհետև հիշյալ աշխատանքը ամբողջապես մեղ ծանոթ չէ<sup>27</sup>:

XVII դարի օրագրային ստեղծագործություններից ամենաառավալը Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրությունն» է<sup>28</sup>: Քյոմուրճյանը ծնվել է 1637 թվականին, Կ. Պոլսում: Ստացել է կրոնական կրթություն<sup>29</sup>, Քաջատիղյակ բազմաթիվ լեզուների (Հունարեն, լատիներեն, ելրոպական մի շարք լեզուներ, թուրքերեն), հաղորդակից լինելով եվրոպական քաղաքակարթությանը և ականատեսը՝ թուրքական բռնապետության, Քյոմուրճյանը լայն հասարակական-քաղաքական, գիտական ու գրական գործունեությունն է ծավալում, որի հիմնական աղդակը թուրքական տիրապետության տակ ապրող հայ ժողովրդի ծանր վիճակն է: Բազմաբնույթ են Երեմիա Քյոմուրճյանի ստեղծագործությունները: Նա գրել է կրոնական, աշխարհագրական-տոմարական, պատմական երկեր, տաղեր, ձոներ, ողբեր, ուղերձներ: Կատարել է բազմաթիվ թարգմանություններ: Համառոտակի անդրադառնանք «Օրագրությանը», որը բարձր են գնահատել շատ ուսումնասիրողներ. օրագրությունը ընդգրկում է 1648—1662 թվականները:

Այս գործը ունի ժամրի բոլոր առանձնահատկությունները, միանույն ժամանակ հասարակական-քաղաքական, կրոնական, կենցաղային կյանքի փաստագրումն ու վերլուծությունը, պատմական բազմաթիվ տեղեկությունները իրավունք են տալիս այն դիտելու որպես պատմագրական երկ: Քյոմուրճյանը ինքը իր օրագրությունը անվանել է ժամանակագիր և Պատմութիւն<sup>30</sup>:

27 Ամդեցու Օրագրության համառոտ բնութագրումը և բովանդակությունը տալիս է Մ. Նշանյանը իր հրատարակած՝ Ե. Զելեպիկի «Օրագրության» առաջարանում, էլ ՑԼԸԴՀԴ:

28 «Օրագրութիւն Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանի», հրատ. Մեսրոպ. արքեպիս. Նշանյան, Երևանակմ, 1939,

29 Քյոմուրճյանի կյանքի և գործունեության մասին տե՛ս «Ստամպոլոյ պատմութեան», հրատարակէ Վ. Թորգոմյանի առաջարանն ու ընդարձակ ծանոթագրությունները, «Օրագրության» հրատարակի Մ. Նշանյանի ներածությունը, ինչպես նաև՝ Լիոն, Եֆ, հ. 3, էլ 357—362, Ն. Ալիբեյան, Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեան, ՀԱ, 1932, Խ 7—9: Առավել ամբողջական է ու գիտական Հ. Սահակյանի «Երեմիա Քյոմուրճյան» մենագրությունը, Երևան, 1964:

30 Տե՛ս Մ. Նշանյանի ներածությունը, էլ ժԴ: Մենք այն քննում ենք օրագրության բաժնում, հաշվի առնելով հատկապես կառուցվածքը:

Ժամանակագրական առումով հեղինակի պատմագրական երկերից առաջինը՝ Օսմանյան թագավորության պատմությունն է՝ «Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն...»։ Այս պատմությունը անտիպ է, նրանից մի հատված զետեղված է Հ. Անասյանի «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» գրքում (Երևան, 1957, էջ 82—88)։ Պատմագրական կարելի է համարել նաև «Սաամպօլոյ պատմութիւնը», որը հրատարակել է Վ. Թորգոմյանը։ Հիմնականում Կ. Պոլսի նկարգրությունն է։ Գրված է գրաբարով, առատորեն օգտագործված են թուրքերն բառեր, որոնք ամենայն հավանականությամբ գործածվել են պոլսահայերի առօրյա լեզվում։ Այս երկերը մենք շենք տեղադրել ժե դարի պատմագրության բաժնում, որովհետև գրված են չափածո, մի բան, որը բնորոշ չէ պատմագրությանը։

Ինելով իր ժամանակաշրջանի դարձացած անձնավորություններից մեկը, Քյոմուրճյանը չէր կարող բավարարվել սոսկ օրագրային նշումներով։ Անձնական կյանքի դրվագները նա դնում է ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների ոլորտում, հանդիսանալով վերջիններիս ոչ միայն արձանագրություն, այլ նաև գնահատողն ու վերլուծողը։ Օրագրությունը գրված է գրաբարով։

Օրագրային ժանրին բնորոշ է այս կամ այն իրադարձության կարծությունը և արձանագրությունը։ Քյոմուրճյանը նույնպես չի խուսափում նման ոճից։ Ահա փաստագրման մի տիպական օրինակ, որը բնորոշ է օրագրային ժանրին։

Ցունվար ամիս օր Եշի:

Ուրբաթ (2 յունուար) թագաւորն իմիլայեաց զղեսպանն Պարսից և ետ հրաման երթալ առ տէրն իւր։

Շաբաթ (3 յունուար), Կաթողիկոսն ի սուրբ Աստուածածին ժողով արար Զ եկեղեցով հանդերձ եւ ձայնեաց զԳարբիէլ վարդապետն անդ, եւ գրերեալ թուղթն կարդալ ետուր... (էջ 223)։

Քյոմուրճյանը շատ փաստագրություններ ընդարձակում է, մանրամասնում։ Նման գրելածեր բացահայտում է երկի ոչ միայն պատմական ու ճանաշողական արժեքը, այլև լեզվական առանձնահատկությունները։ Ճոխ խոսքի, երկարաշունչ ու գեղեցիկ նկարագրությունների բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել Քյոմուրճյանի օրագրության մեջ։ Ահա նավագնացության մի նկարագրություն, ուր կացեալ զգիշերն ի բուն անդէն, առաւօտեան պահու հանդարտ հողմով երերեալ ծփայաք ի մէջ ծովուն և ի շերմութենէ արփիոյն խորշակահար տօթոյն շունչք մեր նուաղէին և նեղէին ի ծարաւոյ, և էին անկեալք իրրե զկոճդ մի ի գետնի և բնաւին ի կղզեացն յառաջ քան զմղոնս թ ոչ կարէաք երթալ... իրը զթևաւոր ընթանայր և հովանի լինէր նստելոցն, և ի քաղցրաշունչ օդոյն զովացեալ լինէին ի խորշակէն» (357—358)։

Էր խոսքը գրավիչ դարձնելու միտումով նա երբեմն ընդօրինակում է հին պատմիչներին: Ապստամբների և դիմուրականների ընդհարման նկարագրությունը, անշուշտ, ընդօրինակված է Եղիշեից: Ավելորդ համարելով բերել ամբողջական հատվածներ, բերենք միայն առանձին նախադասություններ:

Եղիշե (VI եղանակ)	Քյոմուրճյան (էջ 5)
1. Քաջըն իմիդախէին և նահատակք գոչին:	1. Քաջըն խիզախէին և արիացեալքն գոչին:
2. Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէտս անրաս:	2. Աստ էր տեսանել զաղէտս և զտագնապ կորստեան նոցաւ:
3. Ի բազմութենէ սաղաւարտիցն և ի փայլին պատենազէն վառելոցն իրեն նշոյլք ճառագայթից արեգական հասնէին:	3. Ի բազմախուռ նիզակացն և ի փայլմանէ պատենազէն վառելոցն՝ ընդճառագայթից արեգականն սոսսոսային:

Ընդօրինակման ու պատճենման փաստն ակնհայտ է, բայց ուրույն գեղեցիկ նկարագրություններ ու համեմատություններ կարելի է գտնել գրքի բազմաթիվ էջերում:

Քյոմուրճյանի օրագրության մեջ շատ են թուրքերեն բառերը, որոնք հիմնականում թուրքական իրականությանը վերաբերող անվանումներ են, բառապաշտարային այնպիսի շերաեր, որոնք անխուսափելիորեն պետք է գործառենին: Նրանց հայերեն թարգմանությունը դժվար, թերևս անհնարին կլիներ Ժէ դարի մտավորականի համար, ինչքան էլ նա խորը տիրապետեր գրաբարին: Թերևս թարգմանելու անհրաժեշտություն էլ չկար, որովհետև ժամանակի ընթերցողի համար այն դժվար ընկալելի կլիներ:

Բայց լեզվական օտարամոլությունը Քյոմուրճյանի տարերքը շեշայդ են հաստատում նրա օրագրության շատ հատվածներ և այլ ստեղծագործություններ, որոնք չեն առնվզում թուրք իրականությանը: Նրա ողբերքը, ուղերձներն ու նամակները զերծ են օտարաբանությունից:

Քյոմուրճյանի գործերում, այդ թվում և օրագրության մեջ, չնայած լեզվական տարբեր վիճակների առկայությանը, հիմնականը գրաբարն է:

Քաջատեղյակ լինելով դասական մատենագրությանը, նա հմտորեն է օգտվում գրաբարի գանձարանից: Դասական ոճերի ու քերականական ձևերի կիրառումը նրա մոտ արհեստական չէ, այլ բխում է լեզվի խորիմացությունից. Ի պատասխանի (205), ի հասարակել գիշերոյն... (241): Տրական հոլովով ենթակա, դերբայիների գործածություն դիմավոր բայերի փոխարեն, հին ու գրքային այս ձևերը խորթ չեն Քյոմուրճյանին: «Եւ մեր

Ալեալ ի դուրս տեսեալ զի եկեղեցի մեր էր» (24): «Եւ կրկին ասացեալ շարական քահանայից և դպրաց մինչ ի դրունս...» (54): «Եւ զայս լուեալ վէղիրին այլ ու կարացեալ խօսել» (228): «Ժ-իս օր Եշի թագաւորն ձայնեալ զվէղիրն ի ներս, իւրում պալատի խեղդամահ արարեալ և ընկեցեալ արուաքս» (36):

Գրաբարի համակարգում կան նաև անկանոնություններ: Ահա մի քանի օրինակներ ի ներս (118), փիսն՝ ի ներքս, շտեսի աշօք (37) փիսն՝ ու տեսի, իմ վերայ հանգչի առաջնորդության (33), փիսն՝ ի վերայ իմ: Քաղցրացի գրածն ի վերայ ստեղծուածին իրոյ (57) և այլն: Նրա լեզում զերծ չէ նաև աշխարհաբար, բարբառային ձևերից:

Գուցե և Քյոմուրճյանն էլ աշխարհաբարը շրջանցելու նպատակը չուներ: Լինելով առաջին հայ գրողը, «որը կրում էր իր մեջ նոր ժամանակների, եկրոպական հասկացողությամբ, գրական ճաշակ ու պահանջներ»<sup>31</sup>, նա հմտորեն օգտագործում էր և աշխարհաբարը՝ ստեղծելով համապատասխան ոճեր՝ համապատասխան իրադրության մեջ:

Ուսումնասիրության կարեոր նյութ են նաև ձեռագրերի հիշատակարանները: Հատկապես XVII դարի ձեռագրերում դրանք մեծ թիվ են կազմում: Մենք շենք անդրադառնում դրանց քննությանը<sup>32</sup>:

### ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Որևէ ստեղծագործության կամ որևէ դարաշրջանի լեզվի քննությունը առաջին հերթին նաև բառապաշարի քննություն է: Բառապաշարն է, որ անմիշապես արտացոլում է արտաքին, ու լեզվական երեսությները: Ինչ-քան ինտենսիվ են պատմական իրադարձությունները, այնքան էլ ինտենսիվ փոփոխվում է բառարանը՝ հանդիսանալով այդ իրադարձությունների լեզվական-բառային արտահայտիչը: Սակայն սխալ կինի կարծել, թե բառապաշարը միայն արտալեզվական երևությների արտացոլումն է լեզվի մեջ: Ուսումնասիրել բառապաշարը, նշանակում է նաև վեր հանել տվյալ լեզվի բառակազմական կաղապարները, դրանց հաճախականությունը, հին, նոր, փոխառյալ ու բարբառային շերտերը, դրանց հարաբերությունները միմյանց նկատմամբ և այլն:

Ընդհանուր առմամբ հայ լեզվաբանության մեջ բառապաշարի քըննությունը կատարվում էր առաջին հերթին այն տարրերակելով ըստ ժողովրդի կյանքի այս կամ այն ոլորտի (կենցաղ, ընտանիք, պետություն, իրավական-վարչական մարմիններ, հողային, հարկային համակարգ և այլն): Ներկա աշխատանքում մենք հրաժարվում ենք ավանդական այդ մեթոդից, որը կիրառելի է որևէ ստեղծագործության կամ, թերևս, որևէ

31 Առ, նշվ. աշխ., էջ 358:

32 Հիշատակարանների լեզում ուսումնասիրում է բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Վարդապետյանը:

Հեղինակի բառապաշտիքի քննության ժամանակ, իսկ երբ խոսքը վերաբերում է լեզվական որևէ փուլի, կամ որևէ դարաշրջանի լեզվի քննությանը, երբ առնչվում ենք տարբեր միջավայրերում ապրած հեղինակների, ամենատարբեր քննութիւն ու ժանրերի բազմաթիվ ստեղծագործությունների հետ, ապա նման դասակարգումների անհրաժեշտությունը վերանում է, քանի որ այդ բազմաժամնը ու բազմաբովանդակ ստեղծագործությունները, բնականաբար՝ կը նդգրկեն կյանքի բազմազան կողմերու Մյուս կողմից էլ նման դասակարգման դեպքում առաջին պլան է մղվում երկի ճանաչողական-նկարագրական գործառությունը, իսկ լեզվաբերականական ինֆորմացիան քիչ է լինում, այսինքն՝ որևէ շափով չեն երևում բառապաշտիքի քերականական միտումները:

Դիտարկումները ցույց են տալիս, որ քննության առարկա շրջանում զգալի են բառային (բառակապակցային) զուգաձևությունները, այսինքն՝ միևնույն իմաստի տարրեր բառերով (ու կապակցություններով) արտահայտությունները: Իերենք մի քանի օրինակներ: Տարի || ամ. «Մեռու սովորական Մուհամետն, որն ինն տարի թագաւորեաց...» (Դրնդ., 17): «Երկու ամացն միջումն ի սպառ ի սպուռ ջնջեաց...» (անդ., 18): Միաշաբարի» || կիրակի. «Եւ յորժամ եկաւ գիշեր շաբաթուն ի լոյս միաշաբաթին» (Դվրժ., 268): «Միայն ի շաբաթ օր և ի կիրակի օր լուժանէին նաւակատեաց կերակրով ի բոլոր տարին» (անդ., 291): Բաժանեալ || ոռոշեալ. «Եւ որոշեալ ի հօրէ, ի մօրէ... բաժանեալ տանէին ի տուն» (ՍլՌիդ., 19): «Չել || վարել. «Եւ զայն ամենայն վարեցին և տարան ի բաղաքն Ֆահրատապատ» (Դվրժ., 456): «Ճորժամ լուան զիշելն երկրին հոգացին զպետս կարեաց» (անդ., 47): Խուզեմ || գերծեմ. «Խուզեաց զգուին և զմորուն: Գերծէին զգուին և զմորուն» (Զքր., II, ԽԴ, ԾԲ): Թշել||քանալ. «Զուրն ի վեր վազէր և քանայր զմարդիկ... Դու ի զուրն անկանիս եւ լաւ բոջիս» (ՍլՌիդ., 151—152): Շատ || բազում, աղջիկ || դրատր, փիլիսոփայ || իմաստասէր, աղօթեմ || աղօթս առնել, փոխանակ || ի տեղի, (եւ) էր մթացեալ օրն || (եւ) էր նսեմացեալ օրն: Բերված զուգաձևերից հաճախական են զույգերի առաջին անդամները: Բազմաթիվ զուգաձևությունների առկայությունը վկայում է լեզվական նյութի համակարգային բաշխման անավարտության, իսկ գրավոր լեզվում գրական նորմայի անկայունության (կամ թերևս նրա չգոյության) մասին: Դասական գրաբարը նույնպես զուգաձևելություններ ուներ, բայց ոչ այդ շափով, որովհետեւ այդ շրջանում հայերենը միօրինականացված էր կայուն բառապաշտով՝ զերծ տարրեր լեզվավիճակների աղղեցությունից: Ընդհանրապես, լեզվուներում զուգաձևերի հաճախական գործածությունը երկար չի տևում: XVII—XVIII դդ. ոռուերենը, օրինակ, նույնպես առատ էր այդպիսի տարրերակներով: XIX դարում, հատկապես երկրորդ կեսին, այդ զուգաձևերը դուրս մղվեցին՝ ձևերից մեկի ընտրության ու նրա ամրա-

գրման, դրանով իսկ բառապաշտի հստակեցման գործընթացի շը-նորհիվ<sup>1</sup>:

Այդ երեսով թթ XVII դարում չէր կարող կատարվել մեր լեզվում, որովհետև թեկուզ և գրաբարագիր գործերում, անպայմանորեն իրենց աշխատությունը կունենային (և ունեին) միջին հայերենը, նոր ձևավորվող աշխարհաբարը, բարբառները, (աշխարհաբարի բառապաշտը էլ այդ շրջանում չէր կարող կայուն ու հստակ լինել, բանի որ նրա զարգացման գործընթացը նոր էր սկսվում): XVII դարի գրաբարին բնորոշ է հնաց հնի և նորի զուգակցումը:

Դրաբարի հին շրջանի համեմատությամբ ակնհայտ են տարրերությունները որոշ անվանումների մեջ. այստեղ էլ դարձյալ զգացվում է «նորի» աղղեցությունը, օրինակ, որպես կանոն, օգտագործվում են լատինական կամ արդի ամսանումները. «Ի՞ն մարտի էլին ի Կոստանդնուպոլսէ և յօվաստոսի Զ-ն հասին յաշխարհն Արարատեան» (Զքր., II, 9), «Ի վետրվար ամսոյ» (Դվրժ., 10): Հազվագեպ՝ հայկական անվանումները՝ «Ճառաշնում ամսեանն Հայոց Նաւասարդի» (Դվրժ., 40)... «Տրէ ամսոյ ի տասն և նոյեմբեր ամսոյ ի տասն և յութն» (Դվրժ., 361): Շաբաթիվա օրերի անվանումները նույնպես արդիական են:

Քյոյմուրճյանի մոտ հաճախական են տառային համառոտագրությունները: Բջի (երկուշաբթի), Գջի (երեքշաբթի), Դջի (չորեքշաբթի...) և այլն: Օրինակներ՝ «Եւ անտի ելեալ առաւոտու Դջի ի Պօղազ գնացաք..., ելեալ ի Պօղազէն հանդարտ հողմով եշի...» (9): «Թ-ին օր Գջի երեկոյին, որ Դջի լուսանայր...» (33): Գրության նման ձևերի հանդիպում ենք նաև Զաքարիա Քանաքեցու (II, իկ.), Դարանաղեցու (9) մոտ, մանր ժամանակագրություններում: Երկրների անումները կազմվում են ստան մասնիկով: «Եւ այս թուղթ աղաշանաց առաքեցաւ ի Պարսկաստանայ, ի Վրաստանայ, ի Քրդստանայ, ի Հռոմստանայ» (Դվրժ., 311): Դասական շրջանում թեև այս կազմությունները կային, բայց ավելի հաճախական էին աշխարհն Հունաց (Հայոց, Վրաց...), կամ ի Հայս, ի Պարսկաստանայ:

Շատ են նաև աղգություն նշող բառ+տուն կառուցով տեղանունները. օրինակներ՝ «Եւ հրամանաւ վարդապետին Խաչատրոյ գնաց Յովհաննես ի Ֆուանգտուն» (Զքր., II, լէ): «Մեր բուն Հայաստունն եւ ուրիշեն ամենայն աղգն Հայոց» (Դրնդ., 239): «Զայլ աշխարհաց մնացեալ հայքն ի Պարսկացտուն վարեց» (Դրնդ., 518):

Աեզուների անվանումները ունեն գրաբարին ոչ բնորոշ գոյ.+երեն կառուցը. սրանք աշխարհաբարյան ձևեր են, որոնք սակայն հաճախա-

1 Г. Шкаляревский, История русского литературного языка (вторая половина XVIII и XIX вв.), Харьков, 1967, стр. 155.

կան են ժէ դարի գրաբարագիր բոլոր գործերում. Օրինակներ՝ «Զի հունացէն գրեալ է... որ նշանակէ...» (Ստլ., Հրէից. պատ. 12): «Ասեն որք երգայեցերէն գիտեն» (անդ, 38): «Այս Վարդան երէց զամենայն անուանս Ավարանու գեղորէիցն ասաց նայերէն և ես գրեցի» (Զքր., II, 2): Որ ասի Պարսկերէն Շահրիարի և նայերէն ոչ գիտեմ զինչ ասի» (Զքր., II, 16): Ս. Լեհացու ուղեգորության մեջ հանդիպում ենք նակ մասնիկի, որը անշուշտ բարբառային է: «Եւ լովայ նայքն նայնակ չի գիտեն, այլ լեհնակ եւ խբչակնակ զրուցեն, որ է թաթրի լեզու» (346): Գրաբարի վաղ շրջանին բնորոշ գայլած+բարբառ, (լեզու, խօս) կառուցների, հմմտ՝ «Ասէ ցնա վարդապետն Պարսիկ բարբառով» (Զքր., I, 35)» հազվադեպ ենք հանդիպում:

### 1. ՆՈՐ ՎԿԱՅՎԱՆ ԲԱՌԵՐ

Քննության առարկա դարաշրջանում տարրեր ժանրների ստեղծագործություններում բազմաթիվ իրադարձությունների, ժողովրդի կյանքի տարրեր կողմերի արտացոլումը ուղեկցվում է բառապաշտի հարստացման գործընթացով: Բնականաբար գերակշիռ են բարդ բառերը, որոնք հիմնականուած կազմված են գրաբարի բառակազմական կաղապարներով: Զգալի թիվ են կազմում նաև պարզ և ածանցավոր բառերը: Վերջիններիս մի մասը կարող է համարվել բարբառային կամ ոչ գրաբար, բայց այնքանով, որ գրանք նոր շրջանում կատարված փոխառություններ չեն, չեն ընդգրկում արդի բարբառային լայն տարածքներ (կամ էլ առհասարակ չեն պահպանվել որևէ բարբառում) և ամենայն հավանականությամբ դրանք առաջին անգամ վկայվել են XVII դարում, այդ պատճառով նման բառերին մատնանշումը ինքնանպատակ չպետք է համարվի:

Նոր վկայված բառերը կարելի է դասակարգել երեք խմբի.

ա) բառեր, որոնք փոխվել են միայն արտահայտության պլանում (որոշ ածանցների, մասնիկների առկայություն, հմմտ. արփիատրիշ-արփիատր). բ) տվյալ բառաձևում նոր իմաստի առկայություն (փոփիխություն միայն իմաստային մակարդակում), գ) նորահայտ բառեր (որոնք նախորդ շրջանների գրավոր աղբյուրներում վկայված չեն): Ստորև կրերենք նման բառերի (բնավ ոչ լրիվ) ցանկը:

Այն բառիմաստները, որոնք հստակորեն երևում են տվյալ բնագրից, կամ էլ ընդհակառակը, որոնց ստույգ մեկնումը դժվար է, չենք նշի: Այս վերշինը վերաբերում է հատկապես փիլիսոփայական տերմիններին<sup>2</sup>:

<sup>2</sup> Ստորև բերվող բառերը իրենց համապատասխան իմաստներով ստուգված են հետևյալ բառարաններով. Նշի (Նոր բառզիրք Հայկագեան լեզվի, հ. 1-2, Վենետիկ,

Բառերի մոտ որևէ բառարանի հղում վկինելու դեպքում, կնշանակի, որ բառը կամ նրա համապատասխան իմաստը, հիշյալ և ոչ մի բառանում վկայված չէ:

Ազօթկօշ «ժամկաչ, ժամհար», Եւ խանն (ասէ) դո՞ւ ես աղօթկօշ քաղաքիս (Զքր., II, հԳ):

Ամրաբերան «Հայհոյող»—Ոչ որպէս միւս տաճիկս լիրը և Հայհոյիչ, այլ ամրաբերան և լաւ (Զքր., II, լԳ): Այս երկու բառերը կան միայն Բուզանդացու բառարանում՝ նույն օրինակների հղումով:

(յ) ամելածուրին—ի Սուրբ Աստուածածնի ժամին յանձնածուրին կառնէ եւ ջրկութիւն: (Դրնդ., 75) (ՆՀԲ-ունի ամելածու ձեր):

Աներուրին—Որ ի բազում ամաց հետէ առնէր աւերութիւն աշխարհաց (Դրնդ., 561): (ԱԲ՝ աներածուրին):

Ատենազրոյց «Հոնետոր»—Եւ ինքն եղիազար էր յոյժ ճարտարախօս և ճոռոմաբան, ատենազրոյց և բաղդատոր (Զքր. II, Խ) (ՆՀԲ-ն ունի ատենախօսութիւն, ատենախօս լինել, ատենաբան (Ել) ձեւրը: Իսկ ատենազրոյց նշում է միայն Բուզանդացին՝ վկայակոշելով Զաքարիային:

Արգոյատը—Արդ՝ հարկ է քեզ զի բատ արգոյատը անուան քում երեւելի յիշատակ հոգեսր թողցես (Դվրժ., 339, 342): (Գրաբարի բառաններն ունեն արգոյ ձեր):

Արտաշափ—Իսկ... եկեղեցին մէկ արտաշափ յիւր տեղույն ի բաց ոստեալ հոռացաւ և ապա փլաւ (Դվրժ., 492, 493): Այստեղ երկարության շափի իմաստով է կիրառվում: (Արմ-ը՝ Արտաշափը՝ «մեկ օրվա վար»):

Արտախոսուրին—Եւ յորժամ սաստկանայր հրաման թագաւորին վասն արտախոսուրեանն (Դրնդ., 146): (Բառարաններում կա արտախոսուրին ձեր):

Արփիատրիչ—Ճրագ արփիատրիչ եղաւ ի բարձր աշտանակի... (Դվրժ., 312) (ՆՀԲ, ԱԲ-ն ունեն արփիատը «երկնաւոր, լուսապայծառ»):

Բազմաերկ «Դժվարությամբ, մեծ զանքերով»—Վասն որոյ տէր Փիլիպոս կաթուղիկոսն բազմաերկ վաստակօք զամենայն շինուածոն վերը բատին շինեաց: (Դվրժ., 317): Կա նաև բազմաերկ աշխատութեամբ (311):

1836—1837), ԱԲ (Առաջն բառարան հայերէն լեզուի, Վենետիկ, 1865), Արմ. (Հր. Անապան, Հայերեն արմատական բառարան, հ. 1—7, Երևան 1926—1935), Երեմ. (Բառագրը հայոց, Երևան, 1975 թ.) բննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի: Բառարանը կազմել է Երեմիս Մեղրեցին, XVII դարում, Բուզ. (Նորայր Բուզանդացու «Բառպիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ—ԺԷ դարուց», Ստոկհոլմ, 1884, մանրաժամապէն (Մատենագարան, Խ. Բուզանդացու արիսիվ, թղթ. 2353, վկր. 258 ա-ժ), Գվո. (Հր. Անապան, Հայերէն Գավառական բառարան, Թիֆլիս, 1913 թ.):

Բարովել—(Դրնդ., 537): Կա Բուզանդացու բառարանում:

Բարուր(ը) «սուստ պատճառ»—Անիրաւաբար յօդէր բարուրս ի վերայ նոցա և պահանջէր դրամ (Դվլժ., 223) (Ունի Արմ-ը, իսկ Երեմիայի մոտ՝ բարուրք):

Բլրկեալ «փլված»—Նա և շինուածք տանցն և յարկացն խարխալեալ և բլրկեալ (Դվլժ., 346):

Բոնագլուխ—(տես Կուտէն-ի օրինակը):

Բժանեղձ—Ոմանք բըքահեղձ, ոմանք գետատար, ոմանք սովամահ (Մժ, I—186):

Գեղամօրդեմ (ած)—Հովասնունդ և փափկատուն, գեղամօթղած և ողջախոհ (Մժ, I, 183):

Գեղակից ռհարեան, համագյուղացի»—Որ ժամանակ մի շրջեր էր ի հետ Պէկթաշ անուն Զալալուի մի, որ էր իւրեանց գեղակիցն (Դրնդ., 428):

, Դիմաբածանեալ.—Թանզի էակն է՝ գոյ և իր և ինչ որ է ընդ դիմաբածանեալ ոչնչին (Սջուղ. Տրմբ., 25):

Եկամուտ «օգուտ, կարողութիւն», ԱԲ՝ «ստացական»—Նմանապէս և Քարտինալքն յոյժ փարթամք են և հարուստ. ունին քաղաքս, պիտս, ագարակս եւ այլ եկամուտ (Սլուղ., 147—148): Դասական շրջանում բառը այս նշանակությունը չուներ, այլ՝ «օտարական», «եկվոր», «Ճեռոք բերովի»:

Գրկասէր «զրկել սիրող», «կողոպտիչ»—Այլ եւ ինքն էր կարօտ բնութեամբ եւ սաստիկ արծաթասէր և անյագ եւ յափշտակող և զրկասէր (Դրնդ., 544):

Ժօռատ «ատամները թափած», (ԱԲ, Արմ, Երեմ.)—Ատամնաւորն ժօռատ լինի իսկ ժօռատն ոչ ևս լինի ատամնաւոր (Ս. Զուղ., տրմբ. 85):

Ինքնամիակ—Ապա նախկին միակն լինի երկրորդ և այս մինչեւ ցանսահմանութիւն ոչ ուստէք եղիցի ինքնամիակ (Ս. Զուղ. Մեկն. Պրոկ-դի. Զեռ. № 2303, էջ 156):

Լծվար «Մշակ»—(Բուղ. Դվլժ.)—Այս Օսման լծվար էր եւ հողագործ: (Դրնդ., 7) ԱԲ-ում՝ «մեկ օրվա վարած արտ»:

Խաղաղ(f) «պարող-երգող»—Զերգող քնարացն և զխաղառքն, որ տանէին ի հարսանիսն մեր ազգիս (Քմբճ, 26):

Խատ «զարդ, զարդանկար» (Արմ).—Մունետիկ ձայնեալ... եթէ հայ եղողքն զփակեղս իւրանց խատ կապեսցեն որպէս և են, իսկ հոռոմքն՝ կապուտ (Քմբճ, 235): Հստ երևույթին խատ-ը այս բնագրում որևէ գույն է նշանակում:

Խացկուրիւն «Հողացաւ. (Ըստ Արմ-ի անժանոթ բառ.)—Եւ վաղճանեցաւ վաղամահ լինելով, ու ցաւօք բնական կրիւք, այլ ունէր խացկութիւն (Դրնդ., 355):

Խորք «աման, պարկ»—Եւ հրամայեց արքայն բերել խորքով ցորեան և ասէ, որքա՞ն լիտր է սա (Զքր., I, 1թ):

Խրատեալ «տաշած հղկած»—Սկսան զժամատունն շինել խրատեալ քարամբը և մածուցեալ կրով (Դվլժ., 350): Վաղ գրաբարում այս նշանակությամբ բառը չէր գործառում, ըստ Արմ-ի ետին գործածություն է:

Խցակցուրիւն—Որք ունին զկարգաւորութիւն ամենայն իրաց. ժամատեղաց և սեղանատեղաց և զգեստուց և խցակցութեան և կրօնաւորական ժուժկալութեան... (Դվլժ., 285): Բառը թրոստն թարգմանել է... ja vie en cellule՝ «խցային կյանք, միայնակեցություն, ճգնավորություն»: Այսպիս է և ուստերեն թարգմանության մեջ՝ ...օտաշելինչестве... и во всех других делах<sup>3</sup>: Սկզբունքային առարկություն չունենալով բառի մեկնարանման հարցում, ասենք միայն, որ եթե հիշյալ բառը խցակեց ձևից է կազմված, ապա պետք է լիներ խցակեցութիւն և ոչ թե խցակութիւն: Կարելի է կարծել, որ ուղիղ ձևը խցակիցն է: Այս գեպքում, ուրեմն հեղինակը ի նկատի ունի խցերի դասավորությունը, նրանցում ճգնավորների տեղավորման կարգը և այլն:

Մարգարական Սարգսի առագաստի հարսն ու փեսայն փոխանակ ցըն-ժութեան և խրամութեան, զգութիւ զգածեալ և ծանրացեալ, ծարրասէր և սընդորասէր... (Մժ., I, 183): Նորակազմ բարդ բառ, որը բառարաններում ամանդված չէ: Կազմված է ծարիր «դիմափոշի» «աշքի ներկ» և ոչ բառերից՝ ծարիր սիրող:

Սոցեմ—Ապա որ նաւի ու խոիւ, ծծումք և վուշ ծոցեալ ես, ուր ըն-թանաս, առ ո՞վ ճեմիս և զորոց թերին լնուս... (Քմբճ., 182):

Կապերտավրան—Որք մնացին կենդանի, կապերտավրանօք բնակէին յայգիս... (Զքր., I, ԾԱ): (Արմ.՝ թաղիքի վրան: Հղում է Զաքարիային): Կարպետ ունի նաև «քուրծ, զին շոր» իմաստները (տե՛ս Արմ. Երեմ.): Այստեղ բառը ըստ երկութիւն ունի հենց՝ նին շուերից, լարե կառներից պատրաստված վրան իմաստը. Հիշենք, որ դեպքը կատարվում է ուժեղ երկրաշարժից հետո):

Կիսաբանական «ուշիմ, խելացի»—Նա ունէր ձի զօրաւոր կիսաբանական... (Զքր. I, 17): (Նշթ-ն ունի կիսաբան՝ «թերի խօսք», կիսաբա-

<sup>3</sup> Առակել Դավրիջեցի, Книга историй, перевод с армянского, предисловие и комментарий Л. А. Ханларяна, М., 1973, стр. 232.

նուրիին՝ «բեկրեկումն և ընդհատումն բանի»): Այս երկու իմաստներն էլ տվյալ բնագրին անհարիր են:

Կորեկտապատր—իսկ պառամ բացեալ զթոնիրն եհան պուտկով եփեալ կորկոտապուր՝ զոր ոմանք վուշ ասեն (*Դվրժ.*, 172): (Վկայված է Արմ-ում և Բուղ.-ի մոտ: Նշված է նույն հեղինակը):

Կոնապանակ—Զսաղավարոն եղեալ ի գլուխն և զկոնապանակն ի թեւն (*Զքր.*, I, խը) (ունի Արմ.-ը, այս օրինակի հղումով):

Կոտէն—Այր գոռոզ և բռնագլուխ, այլ և կոտէճ ընդ Քրիստոնէից (*Դվրժ.*, 340): (Արմ՝ խստաբարոր, դաժան՝ վկայվում է Դավորիժեցին՝ Գվո-ում հիշյալ բառը համարվում է նորագյուտ բառ):

Հակառակազրոյց—Այլ այսպիսեացո ո՞պապանձեալ բերան եւ կարկեալ լեզու կարէ ինչ հակառակազրոյց ասել (*Դրնդ.*, 91):

Համարառ—Եւ են բառք ոմանք որք կոչին համարառք. որպէս այրի բառս՝ է անուն և բայ. ուստի ոչ է համանուն և ոչ է համարայ, այլ համարառ (*Ս. Զուղ.*, Տրմբ., 27):

Հարկապահանջող (աց) (*Դվրժ.*, 1): (Բառարաններում կա հարկապահանջ ձևը):

Հերանարբ «վարսավիր»—Եւ ապա բանակն հերահարթիցն, որ ասէ պէրպէռ (*Թմբ.*, 248):

Հրամանագիր—Գրգուեցին զթագաւորն որ հրամանագիր զրկեց թէ յետ դարձիք (*Դրնդ.*, 546): Գրաբարում օգտագործվում էր զիր երամանի կամ երաման:

Ճռդովլ—Ի վերայ աջ թէին կարել սկ կարկատան և առնով թուք և ապտակ յերեսն և ճռդովլ զմորուսն (*ՄԺ*, II, 381): (Երեմ.՝ ճռդել՝ «փետել» կամ ճեղել... Գվո. նողել՝ մազերը ճյուղ-ճյուղ անել):

Մայր «բնագիր»—Եւ իմացեալ մեր՝ թէ հոռոմք բազում թղթերս հանեալ ցոյց են տուեալ և մերայնոցս ոչ գոյր աստ, բայց մի և թ և զնոսա տան ցոյց, ոչ ընդունի վէղիրն՝ թէ զսոցա մայրն պիտի... (*Թմբ.*, 225):

Մեղօֆ(ի) «մեղավոր» տե՛ս շիաս.-ի օրինակը:

Միաբերբ—Եւ դարձեալ կին մի ծնաւ չորս տղայս արու, որոյ երկոցունցն ոչ գոյր նստոյ տեղի այլ միաբերթ էր, որք ընդ ծնանելն մեռան (*ՄԺ*, II, 417): (Հստ երկութին գրշագրական սխալ է: Գուցե՞ միաբերդ՝ մի+բարդ՝ «Զորված», կցվածք: Վերոգրյալ դեպքի հիշատակումը գտնում ենք և *ՄԺ*. I, 358-ում, Եւ կին մի ծնաւ Դ տղայս..., բայց ընդգծված բառը բացակայում է):

Ցունակից «ունքերը իրար կցված»—Եւ էր յԱստապատ գեղջէն կին մի գեղեցիկ, լայնաճակատ, յունակից, բազմահեր (*Զքր.*, II, հ):

Նեքաւով «կաղ»—Զթերին ձերում գիտութեամբ լցէք և ներքաւով Զաքոսս ի պախարակելոյ ազատ արարէք և լերուք ողջ հոգուովն Աստուծոյ. ամէն (Զքր., I, Գ),<sup>4</sup>

Նստուածք «դիրք»—Քանզի նստուածք քաղաքին Ասպահանու այնպէս է...—(*Դվրժ.*, 452): (*Դասական գրաբարում* այդ իմաստով հանդես է գալիս Եփստ բառը):

Շշովկ «ուսուցք»—Այնքան հարին զոտսն՝ մինչ ժ եղնգումքն թափեցան և շշուկն բարձրացաւ քան զծունկն (Զքր., II, Բ): Կամ՝ եւ ի ներքոյ ծնկանն կապեցին պարանաւ եւ եղին քար ի ներքոյ ոտին և պարզեալ ոտն ի վերայ, ոի շշուկն զնասցէ ի յոտն և մի անկցի ընդ մարմնովն (Զքր., II, ԼԲ), Արմ-ը՝ հղում է Երեմիայի բառարանը: Ուշչե-իմաստով այս հեղինակը օգտագործում է նաև այտնութը:

Ունաշոր—(*Արմ՝ «կանացի վարտիք»*, հղում է Զաքարիային)—եւ գտին մի բեռն զգեստ կանանց, կեռկեռ կօշիկ և կերպաս ոտնաշոր և ուկետուն լաշակս (Զքր., II, ԽԴ):<sup>5</sup>

Պակասախելք—Այր երկայնահասակ, պակասախելք, տոգէտ ի գրոց (Զքր., Ա, ԽԲ): (Կա Բուզանդացու բառարանում՝ այս օրինակի հղումով): «Պակաս»+գոյական կաղմությունը գրաբարին խորթ չէ՝ հմմտ՝ պակասախող, պակասամիտ, պակասաձեռն և այլն:

Պարոնանիստ—«Իշխանանիստ»?—եւ անտի է գաւառ մի զեղեցկացէն յոյժ, պարոնանիստ խոտալիր և շրաւէտ (*ՄԺ, II, 550*), նաև՝ 553, 555, 556, 558:

Սնգորասէր—տես ծարրասէր-ի օրինակը:

Սոսոսալ—Ընդ ճառագայթից արեգական սոսոսային (Քմրճ. 5) (Հավանորեն գրչագրական սիխալ է, թերևս՝ սորտորալ):

Վարնորդ—Որպէս զգեղական հողագործս, որք վարնորդ մշակօք բնակէին յէջմիածին (*Դվրժ.*, 305): (Բառը Բրոսսեն թարգմանել է վարձկան՝ salariés): Ալղպես է նաև ոռուերեն թարգմանության մեջ՝ հայուս քայլութեան բառը: Այն թերևս ունի «վար անող, հերկող» իմաստը:

Վարպետ—Այս վարպետ Մինասս ստացաւ իւր արուեստ պատկերահանութեան, ծաղկարաբութեան (*Դվրժ.*, 409):

4 Ուուսերեն թարգմանության մեջ բառը թարգմանված է կաղ (ա меня храмого Закеоса... տես Զաքարий Կանակերց, хроника, էջ 34): Ավելի համոզիլ է Արմ-ի մեկնությունը՝ «անկարող, անճարակ, տկար»:

5 Բառը առկա է արդի որոշ բարբառներում: Ղրբ. բարբառում այն նշանակում է վարտիք» (Հատկապես տղամարդու):

6 Առակը Դաւրիչեցւ, книга истории..., էջ 247: Տողատակում հղված է նաև Բրոսսեի թարգմանությունը:

Վուշ—տե՛ս Կորկոտապուր: (Արմ-ը հղում է Դավրիժեցուն):

Վրգրամ «սարսուել, ցրտից դողալ» (Զքր., II, Ծէ):

Տոփ «Հաստ, նավակ»—Ոչ բաւ էր նոցա նաւ կամ տուփ որով անցեն զգեստն (Դվրժ., 42): Գրաբարի բառարանները բառի այդ իմաստը չեն նշում: Տոփ «գերանակապ լաստ» բառը կա Ախալցխայի բարբառում:

Ցանկաբնակիլ—...Այն որ ունէր ապարան գեղեցկաշէն և բարձրաբերց ցանկաբնակիլ, յախոռս անասնոց, այն, որ ունէր սեղան հացալից և էր ասպնջական հիւրոց և աւտարաց (Մժ., I, 187): (Ելնելով ցամկ բառի երկու հիմնական իմաստից՝ 1 «հարմիշտ, հավերժ» և 2. ցցանկապատ, պատ» (Երեմ.), բառը կարելի է մեկնել որպէս կամ՝ հավերժաբնակ, կամ ցանկապատված: Այս բնագրում հավանորեն վերջինն է, մանավանդ որ կա բարձրաբերձ ածականը՝ «բարձր ցանկապատով ապարանքներ»):

Փայտակալ (Ժառան) — Կոչեաց շահն փայտակալ ծառայ մի առաջի իւր... (Դվրժ., 231): (Համոզիլ է ոռուսերեն թարգմանության այն ծանոթագրությունը, որ «ըստ երևույթին Դավրիժեցին ի նկատի ունի այն ծառաներին, որոնք կոչվում են էլի աղանի»: Փայտակալ-ը այդ պաշտոնի անվանման թարգմանությունն է:

Փերակ—Եւ կինն մուծեալ զնոսսա ի փեթակ ցորենոյն և թաղեալ ի ցորեանն (Դրնդ., 472) (ըստ Արմ-ի, որը վկայակոչում է այս օրէնակը, հայերենի որոշ բարբառներում արկդ և փեթակ իմաստները նույն բառով են արտահայտվում):

Քէմ «շրջափակում»—իսկ պարսիկքն որ կային ի քմին, իբրեւ լուան զձայն փողոց պատերազմին... (Զքր., II, Խէ): Եւ ի զօրացն Պարսից առաքեցին ի կողմն միլանել քէմին... (Ն.տ.):

Քծափ «փեղուր»—Գեղեցիկ պատմուման ուսկենկար և գօտի պատուական և սամուր վերարկու և գլխոյ քծափ, որ է մանտիլ (Զքր., Բ, Խդ.):

7 Հր. Աճառյանը «Հայերէն նոր բառեր ծակոր կարնեցույ Վերին հայոց տեղագրին մէջ հոդվածում (Թղմվա. 1923, №8) նշում է նաև մի շարք նոր վկայություններ ախօրան սարսնթաց, ահեղ», բանաց «բանուկ, վաճառաշահ քաղաք», դատկան «աշխատաներ», բաւամայր «անտառախիտ», ծաղրերս «ժպտադեմ», կեր, կերուածք «գավառ», վիճակ, թեմ», տնատարիլ «ընտանիք հազմել», փուրկայ «իշխանատուն»: Վերշին բառը Աճառյանը կապում է ոսկեգարյան գործածության հետ. «Եւ հրամայեաց զատաւորն Եւետոսս... ուր արգելեալ էին ընկերք իւրեանց ի փութկայի միոչ»: Զարմանալի է միայն,— գորում է Աճառյանը, որ Կարնեցին այսպիսի հին և գործածութենէ ինկած հազուագիւտ բառի մը լաւ

Աւշաղրության արժանի են իմաստային փոփոխությունների ենթարկված և հատկապես նորահայտ բառերը: Սրանք լեզվում գրավոր ամրագրվել են հենց XVII դարում՝ այս կամ այն հեղինակի կողմէց: Ամենայն հավաքականությամբ այդ բառերը գործառում էին հայերենում (կամ նրա տպածքային-բարբառային տարրեր հատվածներում): ավելի վաղ շրջանից: Այս կարդի բառերի գործառումով էլ XVII դարի գրաբարը հակադրվում էր գրաբարի մի այլ դրսնորմանը՝ լատինաբան գրաբարին:

## 2. ԹԱՐՅԱՌԱՅԻՆ ԿԱՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՌԱԿԱՆ ՇԵՐՏ

Ժողովրդախոսակցական տարրեր անվան տակ այստեղ նկատի ունենք գրաբարից ամեն մի շեղում՝ լեզվական երկու փոփոք՝ միշին հայերենի ու աշխարհաբարի, այլև՝ բարբառների բառային ու քերականական ձևերի գործածությամբ:

Աշխարհաբարին անդրադառնալը մեր նպատակը չէ, ասենք միայն, որ XVII դարից արդեն որոշակիորեն սահմանազատվում են արևմտահայերենն ու արևելահայերենը: Քննվող ժամանակաշրջանում հայ բարբառները թերևս իրենց հիմնական գծերով՝ արդեն ձևավորված էին, և խորն էին բարբառային տարրերությունները ըստ տարածքների: Օրինակ՝ եթե Քանաքեռցին օգտագործում է մեկ կամ ասա ձևը, ապա, Խաչյեցու մոտ հանդիպում ենք՝ մէկ մալ (Մժ., II, 219), լայն տարածում ունեին բոլ (Հ. Կարնեցի, Մժ., 560, Կաֆայեցի, 219), հոս, եռդ դերանունները, կու մասնիկը և այլն: Բարբառային կարելի է համարել հնչունական զանազան փոփոխությունների ենթարկված բառերը (հնչունների հավելում, անկում և այլն): նենգժոտ (Դվրժ., 319)-իին:՝ նենգաժոտ, թէքմէքէլ, շրջմոշել (Դվրժ., 410—411), թոնտիր (Դրնդ., 50): Առհասարակ, դ>թ, գ>կ, նաև կ>գ, դ>ք հնչունափոխության բազմաթիվ օրինակները վկայում են այդ դարաշրջանում բարբառային հնչունական համապատասխան արտասանության մասին: Օրինակներ. զարբերն (Մժ., II, 569), բերք (555), թարէս (572), բոզգութանցի (578), կրտսատ, Տիրելիս, Գեռբա (155), Արթվին, Ս. Լեհացու մոտ՝ նենկութիւն, բերք... և այլն: Պ>բ, տ>դ ըմբել, ըմբելիս (Դրնդ., 334), ընդանիք

ժանօթ է: Նոյն բառը գիտե նաև Առաք. Պտմ. և կը գործածէ բանի մը անդամ: Անոնց համեմատ նաև բառովիրք երեմիայ փութկայ քարվանսարայ:

Մեր կարծիքով փութկայ բառի XVII դարում գործածությունը, դասական գրաբարի նույն բառի կենանացումը չէ, հավանութեն այն հարևան լեզուների ազդեցությամբ է սկսել գործառել (հմտ. արաբ. թագ, պրակ. ծաւոց, ուռւերեն եւ բուդկա են):

(ՄԺ., I, 186): Նկատելի են նաև  $b > \xi$ ,  $a_j > a$ ,  $\mu > \nu$ ,  $\phi > \psi$ , փոփոխությունները. էրէց (ՍԼՈՒՂ., 16), էրէվան (Հ. Կարն., ՄԺ., II 565). Ներսէսի հերապետի (ՄԺ., II, 362), եղ (Հ. Կարն., 571): Հ. Կարնեցու մոտ գիլ բառը մեծ մասամբ գուղ ձևով է: Բարբառային պետք է համարել բանեց՝ հոգնակերտ մասնիկով կազմված բառերը՝ տեղրանք, գեղրանք (Դրնղ., 411): Գիլ և քոյր բառերը (հոլովկած) ներկայանում են միշտաք ձևերով. ք(ը)վեր (Հ. Կարն., 246, Դրնղ., 528, Քմրճ., 46): Քուէր (Դրնղ., 510): Գեղին, գեղրանք (Դրնղ., 411, 563) և այլն: Ավանդված են նաև բազմաթիվ բառեր, որոնք այսօր գործառում են միայն բարբառներում: «Ասկետատուն լաշակս» (Զքր. II, հԴ.). «Ամիրճան Կարկառեց զմանակն ի վերայ նորա» (II, 8): Ռեխ(ՍԸ): և այլն: Հակոբ Կարնեցու մոտ համեղիպոամ ենք տակով «արմատ» բառին՝ «Ճեղ ու ցեղ մանուշակ», որ գան բժիշկք ի Պարսից և ժողովնեն զոմանց զգուփին և զոմանց զավակին, տանին ի պէտս դեղոց» (ՄԺ., II, 571): Արդի արևմտյան (այդ թվում և Կարնո) բարբառում այն չկա, բայց բառը լայն գործառություն ունի արեվելյան բարբառներում:

Որոշ հեղինակներ առատորեն կիրառում են բարբառային տարրերը: Այդպես է օրինակ, Խաչատրու Կաֆայիցին (տե՛ս ՄԺ., I): Նրա տարեգրությունը բարբառագիտական հարուստ նյութ կարող է տալ ուսումնասիրողին: Տարեգրության լեզուն գրաբար չէ, այլ ժամանակի աշխարհաբարը՝ բարբառային ընդգծված երանգով: Բերենք մի քանի օրինակներ. սեկտեներ, հոկտեներ, դեկտեներ (209) մանտր (210), ծանտր (213, 220), խըրկել (217—221), դիժար (215, 237): Փատ վառելոյ (210), քովի տըներն բըլավ (219, 220), առուտուր չիքա (233): Անիծած նողայն Դ քովն ակիրեց, որ քալից տընէր ու տեղրանք քակեց (214): Ոմանք գտան կէսվի կէս, ոմանք իսկի չի գտան, մըտին դրվին, կոտրտեցին սեղանին (215), ետևացն գնաց (216): Աստուած բարկացաւ վասն մերաց մերոց, որոտում եղկ, կածկըտուն... քակեց կարմըններն... (219), բորշվաբ կերել էր, ըդորդ կամ սուտ (223) և այլն:

Պատմական բարբառագիտությանը հետաքրքրող հնչյունական, բառապաշարային և այլ երեսությներ կարելի է գտնել հատկապես նման բնույթի գործերում: Թնականաբար բարբառային բառերն ու քերականական ձևերը ապէլի հաճախական են այն գործերում, որոնցում գերիշխողը գրաբարը չէ, որովհետև գրաբարագիր գործերում կամա թե ակամա հեղինակը սահմանափակում է բարբառային տարրերի օգտագործման շրջանակները, ձգտելով պահպանել գրավոր լեզվի ավանդները: Նկատենք նաև, որ այժմ բարբառային դիտվող բառերը XVII դարում կարող էին և այդպիսին շդիտվել, որովհետև գոյություն չուներ

գրական-կանոնացված լեզու, որի նկատմամբ նշված և նման կարգի բառերը դիտվեին բարբառացին:

### Յ. ՕՏԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոխառությունները այս կամ այն շափով բնորոշ են բոլոր լեզուներին, ժողովուրդների միջև առկա շփումներն ու հարաբերությունները, որպես կանոն, ուղեկցվում են լեզվական փոխազդեցություններով:

Փոխառությունների թվական կազմն ու իրականության ընդգրկման ոլորտները, ինչպես նաև լեզվում նրանց կայունացման աստիճանը կախված են մի շարք համագումանքներից, որոնցից հիմնականները կարելի է համարել ժողովուրդների ապրած աշխարհագրական միջավայրը, նրանց միջև ծավալվող հարաբերությունների բնույթը, այդ հարաբերությունների տեսականությունն ու դարաշրջանը, ինչպես նաև այս կամ այն հասկացությունների բացակայությունը տվյալ լեզուն կրող ժողովուրդների մոտ:

Հայոց լեզուն իր գոյության հազարամյակների ընթացքում, իր զարգացման բոլոր փուլերում, պատմական իրադարձությունների բերումով եղել է հիմնականում փոխառու լեզու: Զգեստը է, սակայն, տարբեր ժամանակահատվածներում տարբեր լեզուներից կատարված փոխառությունները գնահատել միևնույն շափանիշով: Դեռևս վաղնջական ժամանակներից իրաներեն, հունարեն, երրայեցերն որոշ բառեր մտել են մեր լեզվի բառապաշարը, դառնալով նրա օրգանական մասը՝ հարցստացնելով լեզուն:

Այս կարգի փոխառությունների ընթացքը բնական է, իսկ նրանց դերն էլ՝ դրական: Մի բան, որ չի կարելի ասել ուշ շրջանում հայերենի մեջ թափանցած օտար (հիմնականում թուրքական) փոխառությունների մասին: Վերջիններիս առաջ մուտքը պայմանավորված էր ոչ թե լեզվի ներքին պահանջով, հասկացությունների, երևութների արտահայտման անկարողությամբ, այլ արտաքին՝ հայ ժողովրդի վիճակից բխող հանգամանքներով: Ժամանակաշրջանի ու պայմանների թելադրանքով հայոց լեզվի բառապաշար մտած բառերը այդպես էլ մնացին օտար՝ շամրագրվելով գրական լեզվում: Եվ թեպետ որոշ բառեր գործառում են արդի բարբառներում, սակայն լայն չեն նրանց գործածության ոլորտները և ակնհայտ է բարբառներից նրանց դուրս մղման միտում՝ պայմանավորված պետական և գրական լեզվի գոյությամբ ու աղեցությամբ:

Հստ երևույթին նպատակահարմար է վերշիններիս տալ օտար ազդեցույուններ, քան փոխառություն տերմինը, թեև էականը անվանումների հարցը չէ: Նոր շրջանում թուրք-պարսկական<sup>8</sup> աղղեցությունները բավականին շատ են: Սակայն քանակը դեռևս չի խոսում հայոց լեզվի համակարգում նրանց գործառական, որակական գերակշռության մասին: Դրանք հայերեն բառերի համեմատությամբ պակաս հաճախական են: Այդ հաստատվում է նաև վիճակագրությամբ: Մոտ 1.000 բառի սահմաններում կատարված հաշվումները տվել են հետևյալ արդյունքը: Դավրիժեցու պատմության մի հատվածում, օրինակ (էջ 38—43), ոչ մի օտար փոխառության շենք հանդիպում, մի այլ հատվածում (էջ 507—512) դրանք գործածվում են 12, էջ 572—577-ում՝ 50 անգամ, որից մոտ կեսը յենգիշարի, փաշա, բեկ բառերն են: Զաքարիա Քանաքեցու մտու համապատասխան հատվածներում այդ թիվը կազմում է 2 (էջ 64—69), 9 (15—20), 4 (Բ, 8—23) և 9 (Բ, 134—139): Դարանաղեցու մոտ՝ 8 (էջ 532—537), այլ հատվածներում զգալիորեն ավելի քիչ են:

Հայերենում գործառող օտար բառերի գերակիու մասը թուրք-պարսկական պետական-կրոնական-վարչական, ուղղական, հարկային համակարգն են արտացոլում, ինչպես՝ շահ, խան, բեկ, դասլիքարդար, վեպիր, չառչ, մոլլա, մեշիդ, թոփ, թվանք, թախտ, խազնա, ուայա, պոստամեն բաշի, քիթարչի, ասքար, ղազալ, թոփիանա, ճերիմե և այլն<sup>9</sup>:

XVII դարի գրավոր լեզվում թուրք-պարսկական փոխառությունների առատությունը կարելի է բացատրել նաև մի այլ հանգստամանքով: Երկար ժամանակ լինելու օտար լծի տակ, կրելով նրանց լեզվական աղղեցությունը, հայ ժողովորդի բոլոր խավերի համար օտար որոշ բառեր թերևս ավելի դյուրմբառնեցի պահանջել: Հայ հեղինակների կողմից օտար բառերի օգտագործումը, ըստ երևույթին, ժողովորդին հասկանալի լինելու արտահայտություններից մեկն էր: Այդ է միկայում և այն հանգամանքը, որ հայերեն բառերի կողքին հեղինակները շատ դեպքերում բերում են օտար հոմանիշները. «Ի կերպ մանրավաճառի, որ է խուրտա ֆոիշ» (Զքր., I, ԺԳ): «Ի սորա ժամանակն և սոյն ամին կարմիր գդակներն որք են զզպաշներն առին զթաղդատ» (Դվրժ., 572): «Թսակս կազմեալ ի մոմլաթէ, այսինքն մուշամբայէ» (Դվրժ., 183):

8 Այդ բառերի շարթում կան նաև արաբերեն բառեր, որոնք հայերենի բառապաշտը են մտել հիմնականում պարսկերենի ու թուրքերենի միջոցով:

9 Առհասարակ այս կարգի բառերը զգալիորեն հեշտ են փոխառում: Պետքու առաջինի օրոք ոսւսերենում էլ փոխառյալ բառերի մեկ բառորդը կազմում էին վարչական տերմինները: ՏԵ՛ս Գ. Шкляревский, История русского литературного языка (перв. полов. XVII в.) Харьков, 1968, стр. 15.

Միւնույն նախադասության մեջ երբեմն գոյականը օտար բառ է, իսկ նույն արմատով բացի փոխարեն օգտագործվում է հայերեն բառը. հմմտ. «Կոնդակն շար գրելով գաղտ յանուն Աղարիային եւ զմանքն գողանալով և կնքելով ի վերայ..., (Դրնդ., 381): Դրանք զրսնորվում են հատկապես բառակապակցությունների մեջ: Օրինակներ. Երիշ արար (Դվրժ., 32): Սաֆր առնել (230), թօփ ձգել (505), բաշ առնողն (507), սուրկուն արարեալ (Սլուղ. 181), հախ տալ (341), խապար զրկել (Դրնդ., 48), սապո անել (266) և այլն: Ինչպես նկատելի է, նման օրինակներում կապակցության բայական մասը հայերեն է՝ (գրաբար կամ ոչ գրաբար) հանդիպում ենք նաև գոյ+գոյ, ած+բայ, գոյ+ածանց կադապարների: Թուղթ արղայի (Դվրժ., 320), Մարթապօյ (սլուղ., 15), թէզ ելեք (Դրնդ., 65), Քֆրեց, քֆրեաց (Դվրժ., 527), Ղարիպականսն (Ն. տ. 36):

Այս կարգի օրինակներում սահմանափակվում են օտար աղղեցությունների ինքնուրույնության շրջանակները: Երբեմն էլ հեղինակները կարծես զգալով օտար բառերի անտեղի գործածությունը, բերում են նաև հայերեն համարժեքը: Նման օրինակներ շատ կան հատկապես Դամբիծեցու մոտ:

Բացի նշված արտահայտություններից, երբեմն ուղղակի խոսքի ձևով բերվում են ամբողջական նախադասություններ, ինչպես. «Մանկունքն մահմետականաց այլանելով ասէին «Ճուհուտ կէլտի մի», թէճալ կէլտի մի»...» (Դվրժ., 655): «Ասէ գողալն «շուրեք խուսայ, ճալումարայ խուպաս տէրտէրայ ճաղորդ ճաղադան: Ասէ վարդապետն շիրայ...» (Զքր., II, 35): Այս կարգի օրինակների օտար բառերն էլ են մտնում փոխառությունների ընդհանուր թվի մեջ, այնինչ սրանք միայն ոճական երանգավորում են տալիս շարադրանքին, մնալով որպես օտար մտածողություն:

\* \* \*

XVII դարի որոշ հեղինակների մոտ հանդիպում ենք նաև ելքուպական լեզուներից կատարված փոխառությունների: Դրանք մեծ մասամբ զինվորական, ռազմական ու պետական կյանքին վերաբերող բառեր են, հմմտ. ճեներալ, ենփերատոր, փրինց... (Մժ., II):

Այդ կարգի բառեր բոլորից շատ է օգտագործում Սիմ. Լեհացին, հանդամանք, որ պայմանավորված է ինչպես երկի բնույթով, այնպէս էլ ելքուպական որոշ երկրների, հատկապես լեհաստանի կյանքի (հնարավոր է և լեհերենի) քաջատելյակությամբ:

Ստորև բերվող բառերը քաղված են նրա ուղեգորությունից:

Եներալ (108), հեթան (362), խարիթան (քաբիթան) (254), կվարտիանտի «գվարդիական» (50), պօնսինիօր, քարտինալ (93), Գուալ-ի

(լեզ., «Թագավոր»), բան «պան» (416), սօլդատ (169) և այլն։ Այլ բը-նագավառներին վերաբերող բառերից են սուլ (104). շամլիթ (332), «այժի մազից կերպաս» պոլիթ (218) լու. Երլ «խույր», բիւնիցա (337) «գինետուն», հրեշքա (242)—լեզ՝ հրեշքա (242), «հնդկացորեն», խմէլ (150) (բուսանուն է), զլոթի (դրամական միավոր), յառմարկա «տո-նավաճառ», փարփուր (223) «ճենապակի»։ Որոշ բառեր ու արմատ-ներ գործածուամ են վերը նշված կաղապարներով. վոլդա դարնել «ման գալ», «Այլ և որիշ եւ զատ դատաստան ունին եւ սուր, որ գհայ գոզս եւ զաւազակս կազմեն» (338)—ուս։ Կազատ—կազինե «պատժել»։

Եվրոպական փոխառությունները թե՛ քանակական և թե՛ գործա-ռական տեսակետից անհամեմատ ավելի քիչ են թուրք-պարսկական աղդեցություններից։ Դա հասկանալի է։

Իսկ որոշ հեղինակների մոտ գործառող բառերն էլ, բնականաբար լայն տարածուամ չունեին հայ ժողովրդի լայն դանդվաճների մեջ։

Հայ մատենագրության մեջ լսատիններն, ֆրանսիններն որոշ բառեր (լեհաթ, պրինց, պօնսիննօր և այլն) օգտագործվել են ավելի վաղ, իսկ լեհներն, ուստի բառերը, ամենայն հավանականությամբ, մուտք են գործել XVII դարում, կապված ուստի հետ հայ ժողովրդի տարրեր ճանապարհներով տեղի ունեցող շփումների հետ։

## ԽՈՍՔԻ ՄԱՍՆԵՐ

### 1. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Գոյական անունը դրակորվուամ է իր բոլոր քերականական կարգե-րով, հոլովման տիպերով ու առանձնահատկություններով։ Սակայն դա-սական գրաբարի համեմատությամբ զգալի են գոյականը բնութագրող դանագան օրինաշափությունների խախտումներն ու օրինաշափության համար նորամուծությունները։

### ա. Հոլովում

XVII դարի գրաբարուամ գործուն են գոյականի հոլովման բոլոր տի-պերը։ Ահա մի քանի օրինակներ։

ու—եւ սպասէին դիպող ժամու (Դվրժ., 185):

—ո— բազուամ գանձ ուսկոյ և արծաթոյ (Զքր., III, 43)

—ե— ոսկերացն, ոսկերն (Դրնզ., 197)

—անկանոն—բազուամ աւուրս (Դվրժ., 188), աւուրց (193), պա-տահեցաք առնս այմանիկ (Դվրժ., 194) տեառն իւրուամ (Զքր., II 43):

Հոլովման մյուս տիպերը նույնպես առկա են։ Կարեորը, սակայն,

ոչ թե դրանց առկայությունն է, այլ գործածության առանձնահատկությունը: Առհասարակ, գրաբարի բոլոր փուլերով կարելի է համդիպել միւնքոցն գոյականի տարրեր հոլովիշմերով հոլովման օրինակների, առկայն եթե այդ երեսով սահմանափակ է վաղ գրաբարում, ապա սովորական է XVII դարում: Նման օրինակների հանդիպում ենք ոչ միայն տարրեր, այլև նույն գործի մեջ: Հմմտ: Երեք նաև ցորենի (Դրնդ., 95), նաև ցորենոյ (ն. տ.), յերկիրն Երևանայ, ի մէջ Երևանու (Զքր., I, 46): Վաղ գրաբարում ձոր, նաշ բառերը պատկանում էին —ու հոլովման: Քննվող շրջանում բազմից հանդես են դալիս նաև —ու, —ի հոլովիշով: Օրինակներ: Արագածի ճգնաւորն ի մեր ձորի (Դրնդ., 372): Եւ արդ գրեցաւ նաշու գիրքս ի քաղաքս Արծկէ (Դվրժ., 417): Ընդհանրապես հաճախական հն ու >ու, ու >ի, ի >ու հոլովիշային անցումներ:

Եթե հաշվի առնենք, որ մեծ է նաև համապատասխան հոլովական փոխանցումների ենթարկվող բառերի թիվը, ապա կարելի է եզրակացնել, որ XVII դարի գրաբարին բնութագրական է տարրեր հոլովիշմերով հոլովումը: Այս երեսով պայմանավորված է նաև լեզվի նոր փուլերի աղղեցությամբ:

Գրաբարի հոլովման քերականական կարգի հետ աղերսվող հիմնական դրսնորումները պահպանվել են հատկապես այն բառերում, որոնք առավել գործածական էին վաղ գրաբարում ու նվազ հաճախական (կամ շործածվող) միջին հայերենում: Հայոց լեզվի բոլոր փուլերի համար ընդհանուր բառապաշտարացին ժավալոն շերտի դեպքում հնարավոր է և գրաբարյան, և ոչ գրաբարյան ձևերի առկայություն:

Այս նկատառումը վերաբերում է հոլովվող խոսքի մասերին: Առավել հաճախական է —ի— հոլովումը: Վաղ գրաբարի այլ հոլովման պատկանող մի շարք բառեր հանդես են դալիս նաև նշված հոլովմամբ: Եաբարի փիսն՝ շաբաթու, ձորի. փիսն՝ ձորոյ, կերակրի՝ փիսն՝ կերակրոյ (Դրնդ., 372, 484 և այլն): Նոր ավանդված բառերի մի մասն էլ նույնպես —ի— հոլովման է:

Վաղ գրաբարի —ու— հոլովման բառերը XVII դարում հանդես էին դալիս ինչպես —ու—, այնպես էլ այլ հոլովիշմերով (հիմնականում —ի—և—ա—): Քննվող շրջանում —ու— հոլովման են ենթարկվում վաղ մատենագրության մեջ շավանդված, այնպես էլ —ու— հոլովման պատկանող շատ բառեր: Ահա տեղանունների հոլովման մի շարք օրինակներ. Վիեննայու (Գ. Թոխաթ., 407), Դաշտն Մզու (Հ. Կարն., 566), Թավրիզու (ն. տ.) Ալաշկերտու, Բասենու, Արագիերու (ն. տ.): Իսկ Սարգիս վարդապետն ևս էր ի գեղաքաղաքէն Կարբու (Զքր., III, ԺԳ): Մօղենու վանացն (41): Ի վանին Քանաքեռու (Զքր., III 44): —ՈՒ հոլովման հաճախականությունը առաջին հերթին պայմանավորված է

այս բառաշարքի առկայությամբ, հնչպես նաև ուրիշ կամ ուրիշ անցումներով: Թննությունից պարզվում է, որ XVII դարի գրաբարում —ու— հոլովիշների օգտագործման հստակ սկզբունք չկա<sup>1</sup>:

Վաղ գրաբարի —ե— ներդրական հոլովման պատկանող բառերը հանդես են գալիս նաև XVII դարի գրավոր աղբյուրներում: Թեև հոլովման հարացուցում նկատվում են տրոշ շեղումներ. հմմտ. աղբերին վերայ (Դրնդ., 534), քայլ հոլովման այդ տիպը դեռևս գործուն էր: Նույնիսկ դասական գրաբարի —ու— հոլովման պատկանող որոշ բառեր հանդես են գալիս —ե— հոլովիշով: Դրանք այն բառերն են, որոնք —ու— հոլովման դեպքում կարող էին անհասկանալի լինել կամ քերականական ձևով, կամ որպես հոմանիշություն: Օրինակներ. «քանզի քաղցրութիւն ի մեղերն գոլով՝ կրական է, իսկ ի ճաշակելիսն կիր է» (Տրմք., 55): «Առաջին ձև է, յորում միջին սահմանն ենթակայանայ ի մեծ առաջարկութեան և ստորոգի ի փոքրեն»<sup>2</sup> (անդ. 134):

XVII դարում գոյականների պատկառելի մասը՝ հնթարկվում է արտաքին թեքման: Հեշենք, որ «գրաբարյան ներքին թեքման ենթարկվող բառերի մեծամասնությունը միջին հայերենում անցել է արտաքին թեքման<sup>3</sup>: Որոնք նաև այդ ձևով կիրառվում են և XVII դարի գրավոր աղբյուրներում: Նորահայտ ու օտար բառերը նույնպես ենթարկվում են արտաքին թեքման:

Հարացուցում շեղումներ են նկատվում նաև անկանոն հոլովման ժամանակ: Եթե այր, հայր, մայր, տէր, եղբայր... բառերում դրանք այնքան էլ հաճախական չեն, ապա գիտ բառը հոլովվում է ավելի քան «անկանոն»: «...Եւ ես մնացի ի գիտն մինչեւ...» (Դվթ., 195), «Եկաւ ի գիտէն» (քմրճ., 236): «Մեծ գեղջիր» (Դրնդ., 411), «Նա այլանէր ծաղր առնէր ասելով՝ աւերող և քակող գեղջ (Զքր., I, Բ), «Ու գոյր մի փոքր ագարակ գեղջի շափա» (Դրնդ., 354), «Եւ ասացին քահանայր գեղջին» (373): «Ու կամեցան յեղիր զեղջից պատշաճաւորի շինել» (411):

Համակարգից նկատելիորեն շեղում է նաև բայր՝ հանդես գալով հիմնականում բարբառային ձևերով: Զենք հանդիպում հատկապես հոգն, բորք, բերք... բերք ձևերին, որոնք ժամանակաշրջանի համար արդեն հնացած ու անհասկանալի էին: Գրաբարի հոլովական համակարգի շեղում պետք է դիտել նաև կրկնակի հոլովիշների հանդես գալը կողք-կողքի (այդպիսի օրինակներ բերել ենք), ինչպես նաև ներգոյական

1. Այս գործում գեր ունի այն հանգամանքը, որ —ու— հոլովման պատկանող շատ բառեր ծագումնաբանորեն կապվում են վաղ գրաբարի —ու— հոլովման հետ:

2. Քյոմուրճյանի մոտ ի հոլովման տեսք բառը նույնպես ունի տեսք հոլովման ձևը: Ակուար գրադրաբարբառ նորա պատշաճաւորեալ ի տեսերա և ի թուղթս» (443),

3. «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», թ. 1. Հովսեփյան, Զեարանություն, Երևան, 1975, էջ 16:

Հոլովի ոչ ճիշտ կազմությունը՝ կապված տրակամ-հայցական հոլովների և դրանց հոլովակերտների շփոթության հետ։ Հմմտ. եւ սպանին զամենայնով ոք էին ի վանքն, փխն՝ ի վանս (ն), (Զբր., II, 1է), զվանքս (Մժ., II, 397): Եւ արդ գրեցաւ ի գիրքս (Դվրժ., 417): Կա և գիրքս՝ հայց, հոլովով փխն՝ դիրս<sup>4</sup>:

Այլ հոլովաձերում նույնական նկատվում են անհստակություններ, որոնց մի մասը կարող է գրչագրական սխալ լինել: Օրինակներ՝ դինաւ, ընչիւռք, հեծելիոր, և այլն (Մժ., II, 561, 575): Նկատելի են հոգնակի ուղղականի սխալ ձևեր. կողմունք-փխն՝ կողմանք, լերունք-փխն. լերինք, մարդկեք-փխն. մարդիկ և այլն: Օրինակներ՝ ռիսկ երկու կողմունք ձորին բարձր... ոչ կարէին գնալ...» (Դվրժ., 118): «Եւ ունի բերդորեալք ի կողմունս...» (Մժ., II, 549): Լերունք (Մժ., II 555): «Բազում սովալ-լուկ մարդիկք՝ արք և կանայք» (Դվրժ., 90):

Արանք են հիմնականում այն դիտողությունները, որոնք վերաբերում են հոլովական համակարգին:

### Բ. Թվի ժերականական կարգը

Դասական գրաբարում դոյական անոմների հոգնակին հիմնականում կաղմվում է ք մասնիկով: Այլ հոգնակերտներ թեև կային, բայց ընդգրկում էին սակավաթիվ բառեր և հաճախական չէին:

Քննվող շրջանում առավել տարածված են, ինչպես և պետք է սպասել, ք, ք+այլ բաղադրիչներով զուգորդված հոգնակերտ մասնիկները: Հանդիպում ենք նաև եար (—նեար) ձևերին, բերդորեալք, վանորեալք... (Մժ., II, 541, 549): Վաղ գրաբարում հանդիպող վանեար, բանեար ձևերի համեմատությամբ վանորեալք (թ) ձևը անշուշտ կրում է միշին հայերենի ազդեցությունը: Իսկ ներքոգրյալ օրինակներում, զործ ունենք բարքառային կաղմությունների հետ «...Այլ և Վանայ քաղաքի խօշէնն առաքեցին առ խոզայ Ռոհիշանն» (Դրնդ., 493): «Եւ մեծ Գեղջի աեղրակ վայելուզը պատրաստեաց» (Դրնդ., 411): «Որ զեղրանք շնուէր մերձ վանատեղացն» (ն. տ.):

Այս ձևերը տարածված են այն երկերում, որոնց լեզվում գերակշիռ են ոչ գրաբարյան հատվածները: Գործածվում են նաև —ան, —վի, —նի մասնիկները. դրանցից ավելի տարածված է —եր հոգնակերտի գործածությունը: Վերջինս ծաղում է գրաբարյան —եար ձևից: —եր—ձևութը գործուն էր միշին հայերենի բոլոր շրջաններում, այն միշին

<sup>4</sup> Գիրք-գիրքս ձևերը կարելի է համարել նաև ոչ թե որպես ուղղական-հայցական հոլովների շփոթություն, այլ ք-ի որպես հոգնակերտի շղիտակցում:

Հայերենի հիմնական հոգնակազմի լներից մեկն էր, որը փոխանցվել է նաև աշխարհաբարդին:

—ԵՐ— ձևույթի գործածությունը մի կողմից միշտն հայերենի ազդեցությունն է, մյուս կողմից —Ք— ձևույթի կիրառության ոլորտների որոշ սահմանափակության հետևանք: Քննությունը ցույց է տալիս, որ —ԵՐ— ստանում են հիմնականում միավանի բառերը: Այս առավել հաճախակի հանդիպող՝ որոշ բառերի ցանկը:

այրեր (*Դրնդ.*, 498)

բանքեր (*Դրնդ.*, 40, 548)

փրծքեր (*Դրնդ.*, 85)

թղթեր (*Դրնդ.*, 262, 369)

խաղեր (*Զքր.*, 111, 36)

խաչեր (*ՄԺ.*, 11, 550)

խցեր (*Զքր.*, 1, 14)

կալեր (*Զքր.*, 111, 36)

հայեր (*Դվրժ.*, 244)

ճղեր (*Զքր.*, 151)

օրեր (*Քմրճ.*, 233)

Միշտն հայերենի առաջին ենթաշրջանում —ԵՐ— մասնիկ ստանում էին նաև բազմաթիվ բազմավանկ բառեր, իսկ երկրորդ ենթաշրջանում, —ԵՐ-ը օգտագործվում էր հիմնականում միայնակ բառերի հոգնակին կազմելու համար<sup>5</sup>: Ուրեմն գրաբարագիր աղբյուրներում կամ գրաբար հատվածներում —ԵՐ—-ի միավանկ բառերի հետ գործածությունը ժամանակաշրջանի կենդանի լեզվի հիմնական միտումն էր: Ավելորդ շէ նկատել, որ վաղ գրաբարում —ԵՐ-ի հատուկենութ գործածությունները նույնպես միավանկ բառերում էին: Այսպես, դեռևս Փարագցու մոտ հանդիպում ենք հայեր, հարկեր ձևերին (30, 85, 152, 162), վկայված է նաև զձեռներն ձևը (200):

Անվան թվի քերականական կարգը դրսմորվում է մի շաբք ձեւույթներով՝ արտահայտելով հիմնականում եղակի (զրո ձևույթ) և հոգնակի թվի գաղափար: Միշտն հայերենում դրսմորվող երկակի թվի որոշ

5 Տե՛ս Ակնարկներ միշտն գրական հայերենի պատմության, Բ, Երևան, 1975, էջ 104:

6 Օգտվել ենք Փարագցու պատմության 1904 թ. (Տփղիս) հրատարակությունից: Ձեռն-ձեռներ ձևի առկայությունը կարող է հուշել նաև, որ գրաբարի ձեռն, մակն, ձուկն, դրան... բառերը դիտվել (զուցե և հնչվել) են միավանկ: Այդ հիմնավորվում է նաև արդի որոշ բարբառներում այդ բառերի հնչմամբ: Կրք.-ի բարբառում, օրինակ ձօւկուն, մակրուն ձևերի հետ կան և ծովեր, մօկնը ձևերը, որոնք, ըստ երկությունն, ավելի հարազար են հին շրջանում միավանկ ձուկն, մակն բառերի արտասանությանը:

արտահայտություններ, որոնք ժագումով թեև հին են, բայց գրաբարի վաղ շրջանից արդեն գործուն չէին, հանդես չեն գալիս նաև քննվող շրջանի գրաբար գործերում:

Հոգնակիություն նշող ձևութերը կարելի է բաժանել երկու խմբի՝ զուտ գրաբարյան կամ կանոնիկ և ոչ գրաբարյան: Վերջիններիս գործառությունը դարաշրջանի նույնիսկ ամենաընտիր գրաբար գործերի մեջ անխուսափելի է: Ոչ կանոնիկ հոգնակերտների գործածությունը կախված է ինչպես երկի ժամրային առանձնահատկություններից, այնպես էլ հեղինակի գրաբար դրելու հմտություններից: Այդ հաստատվում է նաև վիճակադրությամբ: Մեր կողմից ընտրված 2000 բառ պարունակող հատվածներում տարրեր հեղինակների հոգնակերտների գործածության պատկերը նույնը չէ: Զարարիա Սարկավագը (Գլուխ ի, իդ) հոգնակի գործածում է 22 անդամ, բոլորն էլ կանոնիկ (հաշվի են առնված և հոլովված ձևերը): Դավիթիցն պատմության (էջ 651—659) նշված հատվածում ոչ կանոնիկ հոգնակերտներ նույնպես չկան, իսկ մի այլ տեղ (էջ 491—500), որտեղ շարադրանքը զուտ գրաբար չէ, երբք անդամ շեղվում է կանոնիկ հոգնակազմությունից: Քյոմուրճյանի մոտ (էջ 335—341) բոլորը կանոնիկ են, իսկ էջ 273—300-ում դարձյալ կան շեղումներ: Դարանաղեցու գրքում դրանք արդեն զգալի են:

Հոգնակերտները հանդես են գալիս նաև զուգորդված ձևում: Զուգորդման հնարավորությունները սահմանափակ են: Ամենահաճախականն են  $f+b$  (ներ) զուգորդումները, ընդ որում հնարավոր է զուգորդման երկու կաղապար՝  $w$ )  $f+b$ ,  $p$ )  $b+r+f$ : Հմմտ.<sup>7</sup> Բաներ (Դրնդ., 40, 548), գործեր (85), պարտեր (322), տղայներ (Զքր., 321), հայերք (Դրնդ., 51), օրերք (ն) (Քմրդ., 23).  $f+b$  զուգորդումները կային և միշին հայերենում: Բատ և. Հովսեփյանի  $f$  ձևութը միշին հայերենում ռանդրաժեշտորեն և առանց բացառության հանդես է գալիս միայն վերջում, քանի որ դրվելով որևէ հոգնակերտից առաջ, չկ պահպանում հոգնակիության իր իմաստը, այլ ձեռք է բերում բառակաղմական ֆունկցիա, ինչպես աշքեր, ունիեր, հաւիեր, ֆեներ և այլն: Այս կարդի բառերը հզակի-ուղղականում հաճախակի ունեն կրկնակ ձևեր  $f$ -ով և առանց  $f-h$ <sup>8</sup>:

Որոշ դեպքերում դժվար է որոշել, թե  $f$  և  $b$  ձևութներից ո՞րն է հոգնակազմը: Խոսքը այն բառերի մասին չէ, երբ  $f$ -ն ենթադրվում է որպես բառակաղմական ձևութ. Հմմտ.<sup>9</sup> պարտեր, գրեր և այլն: Կան

<sup>7</sup> «Ակնաբեկներ միշին գրական հայերենի պատմության», Բ, Երևան, 1975, էջ 39:

գեպքեր, երբ նշված երկու ձևույթներն էլ հոգնակերտներ են<sup>8</sup>: Բերենք երկու օրինակ. Զայս հնարական բաներու (Դրնդ., 548): Ամենեքեան կանայք էին և փոքրիկ տղայիններ (Զքր., Ա, ԺԲ): Նման օրինակներ շատ կան, կեզվի հետագա զարդացման ընթացքում գրաբարյան հոգնակերտը իր տեղու զիշում է միշտն հայերենյան, աշխարհաբարյան եր-ին:

## 2. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՅԼ ԽՈՍՔԻ ՄԱՍՆԵՐ

Գրաբարի ածականները իրենց համապատասխան քերականական կարգերով գործառում են նաև XVII դարում: Դրանց հարկ չկա անդրադառնալ, քանի որ ածականների հետ աղերսվող որոշ հասկացություններ (համեմատական աստիճաններ), հոլովում, համաձայնություն գոյականների հետ և այլն) հստակ չեին հենց դասական գրաբարում: Առավել դժվար է որևէ օրինաչափություն գտնել ուշ շրջանում:

Քննվող շրջանում գործառում են գրաբարյան թվականները՝ բոլոր տարատեսակներով: Քանի որ թվականների համակարգը դժվար է ենթարկվում փոփոխությունների, նպատակահարմար է անդրադառնալ վաղ շրջանի գրաբարի համեմատությամբ թվականների մեջ ի հայտ եկող այս կամ այն տարրերովթյուններին: Նկատենք, որ ներբռնիշյալ հատկանիշները համակարգային փոփոխության գնահատման տեսակետից միևնույն դերը չունեն:

Քննվող շրջանում նվազ հաճախական են գրաբարի, այսպես կոչված անձներական թվականները, բայց դրանք իսպառ վերացված չեն և պահպանում են նաև հոլովման յուրահատկությունները: Անձներական թվականների գործառությունը բնորոշ է հատկապես դասական գրաբարին (V դարի առաջին կես): Դրանք չկան արդի գրական լեզվում, իսկ որոշ բարբառներ հարազատորեն պահել են<sup>10</sup>: Կարելի է ենթադրել, որ քննվող շրջանի գրաբարում անձներական թվականների գործածությունը վաղ գրաբարի երրեմնի գրական ձևերի անմիշական աղղեցությունը չէ, այլ արդեն թերեւս բարբառային համարվող ձևերի կիրառություն:

Քանակական թվականների համակարգում նկատվում են հետևյալ փոփոխությունները: Մի թվականի փոխարեն հաճախ համոզես է գալիս մեկ ձեզ: «Ածին առաջի Թահմագղուվի բէկին զԱզն սուրբ կուսատրվն այլ և ընդ նմին մէկ ոսկետոսի և մեծագին աւետարան և մէկ արծա-

8 Այս դեպքում կրկնակ հոգնակերտությունը վերաբերում է միայն արտահայտության պլանին. բովանդակության պլանում այն հավասարաշոր է ձևերից մեկի միշոցով արտահայտված հոգնակի գաղափարին:

9 Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարդացման փուլերը, Երևան, 1964, էջ 37:

10 Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնության հարցի շուրջը, ՊԲՀ, Երևան, 1977, № 1, էջ 144:

թեայ խալ» (Դվրժ., 208): «Եւ ի Սուլումանաստրն մէկ սուրբ Գեւորգ անոնք» (ՍԼՈՒՂ., 7): «Մեկ ամ և կէս եկաց յՍտամբօլ» (Դրնղ., 395):

ՄԵԿ-ը հանդես է գալիս և բաղադրյալ թվականների կազմում։ «Եւ արդ ի հարիւր և ի տասն և մէկ թիւն մտի» (Դվրժ., 562): Չորք թվականի հայցական հոլովը երբեմն հանդես է գալիս ուղղականաձև, այսինքն, ինչպես և արդի հայերենում, շուրջ-ը գիտակցվում է քանակական թվականի ուղիղ ձև։ Հմմտ։ «Չորս հինգ աւուրց յստոյ ապա եկին» (Դրնղ., 257): «Ասացին թէ շուրս մարդիկ են, որ խորհեցան» (278):

Խախտված է 11—19 թվականների կազմության կարգը։ Հայտնի է, որ գրաբարում միավորները բարդվում են տասն թվականի հետ՝ ավելանալով սկզբից՝ մետասան, երկուտասան... ապա յոթետասն ութետասն և այնի Քննվող շրջանում ճիշտ ձևերի կողքին գործառում են նաև ոչ գրաբարյան կավություններ, օրինակեր՝ «Նոյեմբեր» ամսոյ ի տասն և յորն» (Դվրժ., 361): «Հրամայեաց պարգևե տալ տասն և երկու թուման դրամ» (անդ., 412): «Եւ էր մանուկ տիօք իբրև տասն և ենզից ամաց» (526): «Ամս տասներեք» (ՄԺ, II, 393):

Դասական թվականների համակարգում էական փոփոխություններ չկան։ Միավորների և տասնավորների բարդման շարադասությունը հիմնականուամ կանոնիկ է։ որոշ դեպքերում թիվը մատոնանշող բաղադրիչը արտահայտվում է թվականների տառային արժեքով՝ «ի եերորդ ժամու աւուրն իսաւարեցաւ արեգակն» (Զքր., II, հէ):

Նկատվում են թվականների հոլովման հարացուցի ոչ ճիշտ ձևեր, գոյականների հետ թվականների անհամաձայնության դեպքեր՝ «Եւ յերկու կողմէ յեղերս գետոյն ցրուեալը էին (փին.՝ յերկուց կողմանց)։ Հնգոցն մինն... ատենախօս էր և ահարկու...» փին.՝ հնգիցն (Դվրժ., 463): «Զենի երկու ամաց» (փին.՝ երկուց ամաց) (ՄԺ, II, 397):

Մեր մատենագրության սկզբնավորման շրջանից գրաբարի 36 հընչյունները տառային տարբեր զուգորդումներով, նաև որոշ նշանների միջոցով լիովին արտահայտում էին թվերի ու թվանշանների գաղափարը։ Արաբական թվանշանների գործածությունը մեզ առաջինը դարձյալ հանդես է գալիս տառային գրությամբ (նաև հոլովված ձևով), երևութ, որը վաղ գրաբարին բնորոշ չէր, հմմտ։ «Եւ յետ Բուց աւուրց» (Զքր., II, հէ): Ավելին, այս հեղինակի մոտ որոշ բառերի (գոյականների) թվական բաղադրիչը երբեմն արտահայտվում է համապատասխան թվականի տառային արտահայտությամբ։ «Ծնոտրեցի և բիւրապէտ, Ռապէտս, ձապետս, Շապետս, զզորագլուխս և զզօրս բազում» (Զքր., II, Սէ):

Գործուն տառային գրության հետ հանդիպում են և թվականների

թվանշանային արտահայտություններ: Վերջիններով մատնանշվում են հիմնականում տարեթվերն ու ամսաթվերը: Որոշ հեղինակների մոտ գրության այս երկու ձևերը սահմանազատված չեն և հանդես են գալիս կողք կողքի: «Ի ՌԶՀ թուին ապրիլի 28..., թվին ՌԶՀ յունիսի 2» (ՄԺ, II, 395): «Եւ ի թուին ՌՃ... 18 վարդապետօք և 70 կրօնաւորօք գնաց...» (Անդ.): «206 ամ է թագառութիւն սոցա» (ն.տ.): Կան նաև ղուտ թվանշանային արտահայտություններ «թվոյն 1697 փետրվարի 28» (ՄԺ, II 404): «Թվոյն 1693 օգոստոսի 15 ելա Վեննայու» (407): «170 ամին Յօրէլ եգիտ դվրանս»: (ՄԺ, I, 265): Երբ խոսքը վերաբերում է հայկական թվագրությանը, ապա որպես կանոն հեղինակները անցնում են տառային գրության: Հմմտ: «Ի թուականութեան մերում ՌԾԽ» (Դվլժ., 13): «Նոր էր փոխեալ թուական հայոց և մտեալ ի ՌԾԴ» (40): Թվոյն 1696 յուղս ամսոյ 10 թագաւորն առաւ... և ի ծայոց թույն ՌՃԽէ...» (ՄԺ, II, 404): Գ. Թոխաթեցու ժամանակագրության մեջ անխտիր արաբական թվանշաններ են, իսկ երբ շեշտվում է հայոց թվականությունը, առանց բացառության հեղինակը օգտագործում է թվականների արտահայտության հին՝ հայկական ձևը:

Թվանշանային համակարգը հիմնականում ի հայտ է գալիս եվրոպական իրականությանը այս կամ այն չափով ծանոթ անձնավորությունների գործերում: Ուրեմն՝ ավանդական գրության խախտման պատճառը լատիներենն է. հնարավոր է նաև արաբերենի, ավելի ճիշտ, արաբատառ լեզուների աղղեցությունը, որոնցում գործառում էր թվականների գրության թվանշանային համակարգը:

Այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե արաբատառ լեզուների այս կամ այն թվանշանին, որ որոշակիորեն տարբերվում է լատիներենում ունեցած գրությունից, այլ թվանշանների համակարգի գործածությանը ընդհանրապես:

Դրաբարի դերանվանական համակարգի փոփոխությունները զգալի չեն:

### 3. ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Խոնարհման համակարգը մեր լեզվի զարգացման բոլոր փուլերում դրսորմել է միևնույն քերականական կարգերի արտահայտման տարրեր միջոցներով, օրինաշափությունների կողքին անկանոնությունների ու բացառությունների զգալի արտահայտություններով: Այդպես էր դասական գրաբարում, այդպես է վիճակը և քննության առարկա շրջանում: Համառոտակի անդրադարձանք բայական համակարգի որոշ առանձնահատկություններին:

Քննվող շրջանում գործառում են գրաբարյան բոլոր դերբայները: Ի տարբերություն վաղ շրջանի, շատ տարածված են իլ լծորդության

ձեերը։ Սրանք արտահայտում են անորոշ դերբայի կրավորական սեռը։ Հմմտ։՝ «Ի դատապարտութենէ վասն յանցանաց Աղամայ ոչ ոք կարէ ազատիլ» (ձեռ. № 5074, էջ 40): «Այսինքն զաւերիլն աշխարհին հայոց և զգերիլ և զլատնիլն քրիստոնէից...» (Դվրժ., 667): Սակայն անցումը —իլ— լծորդության միայն կրավորականության-ներգործականության հակադրության արտահայտման համար չէ։ Հայտնի է, որ դասակար դրաբարում —ի— խոնարհման անորոշ դերբայը —ե— խոնարհման բայերի նման ուներ —ել— վերջավորությունը (միայն առանձին դեպքերում ենք հանդիպում —իլ—ի): —ի և —ե խոնարհումների անորոշ դերբայի տարրերակման անհրաժեշտությունը հրատապ է դառնում հատկապես հետագա շրջանում, եթե գրաբարը դադարում է խոսակցական լեզու լինելուց։ Միջին հայերենն էլ էր ձգուում —ի— խոնարհման բայերը արտահայտել —իլ— լծորդությամբ, ինչպես՝ աշխատիլ, նախանձիլ, ապրիլ, նատիլ, խօսիլ ևն<sup>11</sup>:

Վաղ սկսած այդ գործընթացը ավելի ակնառու է XVII դարում։ Համարյա առանց բացառության —ի— խոնարհման բայերը անկախ բայսենից անորոշ դերբայում ունեն —իլ— լծորդությունը։ Տարբեր հեղինակներից բերենք օրինակներ։ Թյումուրճյանի մոտ՝ վիճիլ (3), անկանիլ (8), շրջիլ (8), նախանձիլ (19), հանդիպալիլ (87), Ստ. Լեհացի<sup>12</sup> քահանայապետիլ (75), շեղիլ (ն. տ.), ասիլ (317), փախչիլ (387): Ս. Լեհացու ուղեգրությունից՝ հնազանդիլ (359), բախիլ (365). Նման օրինակների կարելի է հանդիպել նաև մյուս բոլոր հեղինակների մոտ... «Թե մի ևս թողուցուս զժողովուրդն Զուղայու նստիլ» (Դվրժ., 62): «Մարմինք մարդկանցն սկսաւ ուիլ և բշտիլ և դեղին շուր նստիլ» (82): «Զոր տեսեալ... զեերեվարիլն և մատնիլն ի ձեռն անօրինաց, զաւերիլն և զքանդիլն... զտարաշխարհիկ լինիլն, զգերիլն և զտանիլն» (421): Իհարկե, սա լեզվի կանոնարկմանը նպաստող դրական ձեռնարկում է, բայց այս դեպքում էլ դարձյալ սեռային տարրերակումը մնում է չկանոնարկված, որովհետև՝ —ի— խոնարհման բայերը միայն կրավորական սեռի իմաստ շեն արտահայտում։ Ուրեմն, —ի— խոնարհման բայերի անորոշ դերբայում համատարած —իլ— լծորդությամբ ներկայանալլ միայն հատակ տարրերակում է մտցնում —ի և —ե— խոնարհումների բայերի միջև, իսկ կրավորականություններգործությունը սեռային տարրերակումը այդ դերբայի համակարգում դարձյալ մնում է խախուս։ Անորոշ դերբայի դեպքում կրավորականության-ներգործություն տարրերակման հարցը հատկապես դրվել է լատինարան կամ նրանց որոշ շափով հարող հեղի-

11 Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Երևան, 1972, էջ 302:

12 Օրինակները բերվում են № 5074 ձեռագրից։

Նակների մոտ, որոնք գերականություններում մտցրել են կրավորական սեռի արտահայտման ձևական նոր միջոց, այն է՝ տարբեր լծորդության բայերի անորոշ դերքայի կրավորականը արտահայտել —իլ— լծորդությամբ, հմտությամբ, հմտությամբ:

«Զի թէութիւն կարէ իմաննիլ առանձին» (389): Սակայն այս կազմությունները խորթ են գրաբարին և ավելի են խճճում բայերի տարբերակման հարցը ըստ լծորդության ու սեռերի:

—Ող-ովկ կազմության դերբայների գործածությունը նույնպես տարածված է, լայն են նաև տարբեր բայերից համապատասխան գերբայի կազմության հնարավորությունները: Ներքո՞հիշյալ օրինակների դերբայական ձևերը դասական դրաբարում կամ չկային կամ էլ հաճախական չէին: «Եւ կարգեաց վարող ժողովրդեանն» (Դվր., 45) «Ապա եկին կենօղ պուտկացն ու կարասուցն» (Զքր., II, 134): «Որ արեղայ որ այրող լինի և աղմուկ անէ, գիշերօթ շտան առնել» (Զքր., III, 18): «Տանի բրոդաց այգու իւրում» (Զքր., III, 43):

Դասական դրաբարը, ինչպես գիտենք, խուսափում էր ենթակայական դերբայի առատ գործածությունից, այն փոխարինելով այն որ+դիմավոր բայ կառուցցով: XVII դարի գրավոր ստեղծագործություններում պատկերն այլ է: Այստեղ առատորեն օֆտագործվում է այդ դերբարը, դրսկորվելով որպես դերբայական համակարգի առավել գործածական ձևերից մեկը: Ըստ երևույթին ենթակայական դերբայի գործածության լայն ոլորտըն ու հաճախականությունն է այն պատճառներից մեկը, որ համապատասխան դերբայը ի արբերություն վաղ գրաբարի, սկսում է արտահայտել կրավորական սեռի իմաստ<sup>13</sup>: Թեև շատ դեպքերում ներգործական-կրավորական սեռային հակադրությունը դրսկորվում է ենթակայական դերբայ-անցյալ դերբայ հակադրությամբ: Օրինակներ. «Իսկ կրկնակի է, զի յառնեն զանազանին արարողն և արարեալն. որպէս ասել է իմանալ: Քանզի յասեն՝ այլ է ասացողն և այլ ասացեալն: Նույնպէս այլ է իմացողն և այլ իմացեալն» (Տրմբ., 59):

Առհասարակ ուշ շրջանի գրաբարում հաճախական է դերբայների գործածությունը, ավելի լավ՝ նրանց գործառական ոլորտները:

Ավելորդ չէ հիշել, որ հենց դերբայ անվանումը շրջանառության մեջ է դրվել XVII դարում, Հ. Հոլովի կողմից:

Դիմավոր բայերի համակարգում գործուն են գրաբարի ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ ժամանակային ձևերը, պատկերը սակայն մրիվ նույնական չէ վաղ գրաբարում:

<sup>13</sup> Լատինական քերականները նույնիսկ մտցնում են ներգործականության-կրավորականության արտահայտման հատուկ ձևեր՝ ներգործ-ող, կրավ.-եցող-:

Ներկա ժամանակը գործառական-իմաստային տեսակետից էական փոփովության շի ենթարկվել: Ասվածը վերաբերում է այդ ժամանակի ինչպես բուն, այնպես էլ երկրորդական կիրառությանը: Դասական և ընդհանրապես դրաբարի վաղ շրջանին բնորոշ ներկա ժամանակաձևի ապառնի իմաստով հաճախական կիրառությունը հարազատ է քննվող շրջանին: Օրինակ, «Եթե զասացեալդ ցուցանես ինձ, զտէրտէրն քո արձակեալ քողում, ապա թե ոչ այնշափ ծեծեմ զտէրտէրն քո, որ է ներքոյ փայտի մեռանի» (Դվրժ., 188): Այս կարգի օրինակներ շատ կան, որը, մեր կարծիքով, շպետք է համարել սոսկ դասական լեզվառնական արտահայտությունների ընդօրինակման փորձ: Ավելին, այստեղ դեռ ունի նոր լեզվամտածողությունը, այն է՝ դեռևս վաղուց սկսած ու նոր ժամանակներում ավելի որակակազմ դարձած սահմանական եղանակի ներկա-ըղձական եղանակի ներկա անցումները և դրա հիման վրա նոր եղանակաժամանակային ձեւի առաջացումը:

Գործառական առանձնահատկությունները հիմնականում պահել են նաև լոց+եմ կազմության սահմանական եղանակի ժամանակաձևերը: Սահմանական եղանակի վաղակատար (եալ+եմ) և անցյալ վաղակատար (եալ+էի) կազմությունների ընդգրկման ոլորտները նկատելիորեն լայնացված են: Դասական գրաբարում դրանք հաճախական կիրառություն չունեին: Ժամանակային այդ իմաստները արտահայտվում էին անցյալ կատարյալի միջոցով: Օրինակ, Ղուկասի Ավետարանի Ա—Դ հատվածներում 141 կատարյալներից աշխարհաբար թարգմանության մեջ վաղակատար է ներկայացված 2-ը, իսկ անցյալի վաղակատար՝ 12-ը, Հովհաննեսի Ավետարանում համապատասխանաբար՝ 35 և 12<sup>14</sup>: Ուրիմն, վաղակատար ժամանակների գործառությունը վաղ գրաբարում կատարում էր նաև անցյալ կատարյալը: Վերոհիշյալն է նաև այն պատճառերից մեկը, որ գրաբարի որոշ ուսումնասիրողներ, վաղակատարն ու անցյալ վաղակատարը քերականական ժամանակներ չեին դիտում:

Քննվող շրջանում զգալիորեն մեծ է վաղակատար ժամանակի գործառության ոլորտը, նաև հաճախականությունը: «Որոց տանիքն ամենայն աւերեալ էր» (Դվրժ., 352): Դասական շրջանի հեղինակը այս ժամանակաձևը այստեղ չէր օգտագործի: Իսկ XVII դարի հեղինակները չեն խուսափում վաղակատար գիրառել այնպիսի դեպքերում, որտեղ վաղ շրջանում կօգտագործվեին անցյալ անկատար կամ կատարյալ ժամանակները: Նման օրինակներ կաշխատենք թիրել XVII դարի լավագույն գրաբարգիր հեղինակից՝ Ա. Դավթիթեցուց:

<sup>14</sup> Տե՛ս նոր կտակարան: «Զորս ավետարաններ և գործք առաքելոց», էջմիածին, 1969:

«հրբեկ հանեալ եղեւ գլուխն, նոյնժամայն եպիսկոպոս վահացն. յափշտակեալ զգլուխն ի ձեռաց պատրեացն և ոչ է տախալ, այլ զնոսա դատարկ արտաքս առաքեալ է ի վանացն» (179); «Հանդէպ նմին փորեալ են այնքան, մինչ ծակեալ են զառաստաղ ճանապարհի դրանն և ապա այնքան աշխատեալ են, որ զկափարիշ վէմն ոստուցեալ են ի տեղուցն» (181); «Եւ մինչ ցայս վայր Ալթունն բնաւու է խօսեցեալ հայերէն» (188); «Իսկ վասն մասին, զոր այժմ առկին պատրիկքն՝ տարեալ են ի Բանդարայ աշխարհն, ի քաղաքն, որ կոչի Գուայ, շինեալ են վանք ի նմին քաղաքի և զմասն այն եղեալ են ի հիմուն եկեղեցւոյ...» (197); Ուրեմն, քննվող շրջանում վաղակատար ժամանակը ձեռք բերելով գործածության լայն, նաև կայուն շրջանակներ, որոշակիորեն տարրերվում է դասական շրջանում համապատասխան ժամանակաձևի իմաստային-գործառական դրսեռուումներից՝ ավելի շատ աղերսվելով աշխարհաբարի համանուն ժամանակի հետ; Ալելացնենք, որ XVII դարի զրավոր աղբյուրներում առկա են վաղակատարի՝ արևելահայերեն և արևմտահայերեն (աշխարհաբար) տարրերակները: «Թէ մեզ լինիցիմք այդմ գործոյ կամակից եւ կցորդ... զոր գուք նիւթել եք և կամիք» (Դրնդ., 572): «Մեզ սիրով ողջունի գիր էր ուղարկել և զայն յիշել» (299): «Եւ նա ասաց թէ դու ես ասէր վիսոսքդ եւ դու հայենյեր ես» (Քմբճ., 94): «Զինչ տեսաք՝ որ վերի դաշտի մարդիկն քու էին արեւ ամենայն...» (Դրնդ., 42): «Եկեր են» (63): «Գրել+եմ և գրեր+եմ ձեռքի տարրերակվածությունը, սակայն, նշված ժամանակաշրջանում հստակ չէր, քանի որ, ինչպես տեսանք, միմնույն հեղինակը օգտագործում է երկու ձեռքն էլ: Արևմտահայերեն տարրերակը նշվաղ հաճախական է, և նրա տարածքային ընդգրուկման սահմանները կոնկրետացված չեն: Շագման ավելի հին ակունքներ ունեցող ել կազմովթյամբ վաղակատարը դեռևս գերիշխող էր, այսինքն՝ արևմտահայերենը վերջնականապես չէր անցել վաղակատարի —եր՝ տարրերակին: Իսկ ինչ վերաբերում է զոտ գրաբարյան ժամանակաձևերին, ապա վստահորեն պետք է ենթադրել, որ թեև քննվող շրջանում էլ ժամանակային հիմնական հարաբերությունները դարձյալ արտահայտվում են պարզ ժամանակների միջոցով, ալդուհանդերձ վաղ գրաբարի համեմատությամբ, զգալիորեն ընդարձակվում են բաղադրյալ ժամանակների կիրառության շրջանակները:

Հարկ չկա մանրամասն խոսելու գրաբարի անցյալ անկատար և անցյալ կատարյալ ժամանակների գործածության մասին, քանի որ վաղակատարի վերաբերյալ տրված որոշ դիտողություններ շոշափում են նաև այդ հարցը: Նշենք միայն, որ վաղ գրաբարի համեմատությամբ որոշ շափով սահմանափակված են և անցյալ անկատարի կիրառության ուրատները: Դասական գրաբարի թարգմանական, ինքնուրույն բոլոր գործերում շատ հաճախ անցյալ անկատարն ու կատարյալը գործածվում

Են կողք կողմի: Նման դեպքերում, անցյալ անկատարը կորցնելով անավարտության կերպային հատկանիշը, հանդես է գալիս կատարյալի փոխարեն, ձեռք բերելով նաև պատմական ներկայի իմաստ: Կամ էլ հենց առանց կատարյալի հետ գործածվելու անկատարը արտահայտում է վերջինիս ժամանակային իմաստը<sup>15</sup>: Այս երկույթը գասական գրաբարի առանձնահատկություններից մեկը պետք է համարել: Քննվող շրջանի գրաբարում անկատարի այդ առանձնահատկությունը ցայտուն չէ և անկատարը հանդես է գալիս ավելի շատ իր հիմնական ժամանակային իմաստով:

Դասական դրաբարում ներկայի ժամանակաձևով, բայց անցյալ կատարյալի իմաստով մի ուրույն գործածություն ուներ ասեմ բայց: Բերենք միայն մի օրինակ: «Փարիսիցիքն իբրև տեսին ասեն ցնա: ահաւասիկ աշակերտքն քո գործեն, զոր ոչ է արժան գործել ի շաբաթու: Եւ նա ասէ ցնոսա: Ու ընթերցեալ իցէ ձեր, զոր արար Գաւիթ» (Մատթ., Ժթ, 3): Քննվող շրջանում համապատասխան ոճերի մեջ ասեմ-ը արդեն մեծ մասմբ դրված է կատարյալով: Օրինակներ. «Եւ իբրև եսս թագաւորն, ասաց, վազուրեմն տուեալ եմ քեզ զիսալիֆութիւն և զթաղամ. ասաց Սահակն՝ այո, թաղաւոր տուեալ ես... Յայնժամ կոշեաց շահն ծառայ մի առաջի իւր և ասաց...» (Դվթ., 231): «Այս է վերջին տկարութիւնն իմ, որ ոչ ես յառնեմ յառողջութիւն. քանզի մինչ ասէի զքարոզն, իբրև հասի ի բանն, որ ասաց.» (Մժ, II, 283):

Հիշենք, որ գրաբարի ներկայի ժամանակաձևը, արդեն միջին հայերենի շրջանից հանդես էր գալիս որպես ըղձական եղանակի ժամանակ: Եղանակային փոփոխությունն էլ իր հերթին նպաստում է այդ և ընդհանրապես քերականական ժամանակների կիրառության ոլորտների փոփոխության:

Անհրաժեշտ ենք համարում խոսել նաև գրաբարի, այսպես կոչված, առաջին և երկրորդ ապառնիների մասին, քանի որ քննվող շրջանում, վաղ շրջանի համեմատությամբ, այդ ժամանակները դրսերում են գործառական որոշ յուրահատկություններ: Հիշենք, որ նույնիսկ դասական շրջանում հստակորեն սահմանադատված չէին այդ երկու ժամանակների եղանակային-կիրառական սահմանները: Առաջին ապառնին գործառում էր ըղձական, պայմանական ու հարկադրական եղանակների իմաստով (արդի ըմբռնմամբ), իսկ երկրորդ ապառնին, բացի վերոհիշ-

<sup>15</sup> Օրինակ, Կորյունի գրքի (էջ 38) Եւ յետ այսորիկ... մինչև ամենայն իրաց հատվածում կատարյալով դրված որոշ բայ չկա, իսկ աշխարհաբար թարգմանության մեջ, ընդհանակառակը, բոլոր անկատարները գրված են կատարյալով: (Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, ընագիրը և թարգմանությունը՝ Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941): Նման հատվածներ շատ կան և դասական շրջանի այլ հեղինակների մոտ:

յալից, կարող էր կատարել սահմանական եղանակի ապառնի ժամանակի գործառություն՝ լոց+են ձեին զուգահեռ: XVII դարի գրավոր ազբյուրներում, առաջին ապառնի ժամանակաձևը հաճախական չէ: Անհամեմատ ավելի շատ է հանդես գալիս երկրորդ ապառնին՝ նաև այնպիսի դիրքերում, երբ, ուսումնասիրողների կարծիքով, դասական շրջանում հանդես էր գալիս միայն առաջին ապառնին: Առաջին ապառնու գործառության սահմանափակումը, սակայն, XVII դարում չի կատարվել. այն վաղ շրջանից սկսված երկարատև ու կայուն գործընթաց էր: Նարեկացու «Մատեան»-ում, օրինակ, համարյա առաջին ապառնի չի գործածվում: Բնականաբար այդ վիճակը ավելի ցայտուն է դրսերվում XVII դարում: Նշված շրջանում այլ է նաև այդ ժամանակաձևների եղանակային բնույթը: Դիմենք վիճակագրությանը, այս անգամ էլ դարձյալ Դավորիթեցու պատմությունից:

Էջ 610—619-ի գուտ գրաբար հատվածը (800 բառ) պարունակում է 1 առաջին, 7 երկրորդ ապառնիներ: Առաջին և երկրորդ ապառնիները միայն ըղձական եղանակի իմաստով են: 700 բառ ընդգրկող մի այլ հատվածում՝ էջ 325—332 պատկերը հետևյալն է. առաջին ապ. 1 (ըղձ.) երկրորդ ապ. 13, որից՝ ըղձական եղանակի իմաստով 8, պայմ.<sup>1</sup>, հարկ.<sup>4</sup>: Էջ 178—196-ում, որն ընդգրկում է 1500 բառ, այսինքն՝ այնքան որքան մյուս երկու հատվածները, պատկերը համարյա նույնական է: Առաջին ապառնի չկա, 2-րդ-ը օգտագործվում է 15 անգամ (11-ըղձական, 4-ը պայմանական եղանակի իմաստով):

Ինչպես նկատվում է, այս հեղինակի մոտ, և ընդհանրապես XVII դարի գրավոր աղբյուրներում, առաջին ապառնին չնշին գործառություն ունի: Երկրորդ ապառնու սահմանական եղանակի նշանակությամբ կիրառությունը նույնպես սահմանափակ է (իսկ մեր ընտրանքում ընդհանրապես չկա): Առաջին և երկրորդ ապառնիները հիմնականում արտահայտում են ըղձական եղանակի իմաստ: Վերոգրյալից բխում է, որ XVII դարի լեռվական նյութի կորվածքով, գրաբարի ստորադասական եղանակը զգայի որակական փոփոխության է ենթարկված և կարելի է համոզված ասել, որ քննվող շրջանի գրաբարի եղանակաժամանակային համակարգում նշված եղանակը արդեն գոյություն չունի: Գրաբարի ստորադասական եղանակին համապատասխանող ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ժամանակային իմաստները արտահայտվում են մի կողմից երկրորդ ապառնիով (ետին պլան թողնելով առաջին ապառնին, որը դասական գրաբարում ստորադասական եղանակի հիմնական ժամանակաձևն էր), մյուս կողմից գրաբարի վաղ շրջանին ոչ բնորոշ ձևերով: Առաջին և երկրորդ ապառնիների կիրառության ոլորտների սահմանափակումն ու դրանց իմաստները այլ ժամանակաձևներով

արտահայտելու ուժին միտումը վերջին հաշվով այդ ժամանակաձևերի անհետացման հիմնական պատճառներից մեկն է: Այդ պատճառներից պետք է համարել նաև նրանց կազմության բարդությունը (հատկապես հարցուցային ձևերը), բանավոր խոսքում այդ ձևերի արտասահմական դժվարությունները<sup>16</sup>:

Քննվող շրջանի գրավոր աղբյուրներում պահպանվել են նաև հրամայական եղանակի ժամանակները՝ հորդորական հրամայականի ոչ հաճախական դորժառությամբ: Ուստի հարկ չկա օրինակներով անդրադառնությունը այդ հարցին: Անորոշ դերբայի քննության ժամանակ խոսել ենք նաև կրավորական սեռի արտահայտման մասին: Դասական հայերենի համեմատությամբ կրավորականության արտահայտման սկզբունքային այլ փոփոխություններ նույնպես կան: Ինչքան բարդ ու խճճված էր խոռնարհման համակարգն առհասարակ, առավել բարդ ու տարասկզբունք էր կրավորական սեռի արտահայտությունը գրաբարում: Հին հայերենում կրավորականության արտահայտման հատուկ մասնիկ չկար: Քերականական այդ իմաստը բայի տարբեր ժամանակաշեղանակային ու դերբայական ձևերում ի հայտ էր գալիս տարբեր քերականական միջոցներով, կամ էլ առհասարակ այլպիսի միջոց չուներ: Շատ դեպքերում բայի կրավորական կամ ներգործական սեռը հնարավոր է լինում պարզել միայն համատեքստում: Աշխարհաբարը այս հարցում զգալի առավելություն ունի գրաբարի նկատմամբ: Իհարկե, դեռևս վաղ գրաբարում ձգտում էր նկատմում այս կամ այն միջոցներով որոշակի պարզություն մտցնելու ներգործական սեռ-կրավորական սեռ հակադրության մեջ: Այդ երեսում էր, օրինակ, անցյալ անկատար ժամանակի որոշ բայերի մեջ: Ի տարբերություն ընդունված և կանոնիկ ձևի, երբ անցյալ անկատարի ձևը արտահայտում էր և՛ կրավորականություն, և՛ ներգործականություն (ըստ համատեքստի), վաղ գրաբարում երեմն ներգործական սեռի բայերի կրավորական իմաստը դրսնորում էր յուրահատուկ ձևով՝ շարժեշարժիւ: Այս նոր ձևը լայն տարածում ստացավ հետագայում: XVII դարի գրաբարում, որպես կանոն, անցյալ անկատարում բայի կրավորական սեռը արտահայտվում էր — իստ մասնիկով: «Իրեւ էանց գիշերն և ի վաղին տեսին զմեռեալն յարուցեալ և նստեալ որ խօսէր և շարժիւ» (Դվորժ., 259) «Սովաւ կառավարիւ վանքն» (ՄԺ, II, 412): «Ի մեռելոցս բնաւ ոչ գոտենիւր մի ծեր...» (Քմբճ., 57): «Զոր ինչ վանափիւ ծանրագնի թէ ցորեան եւ թէ այլինչ...» (Զքր., II, 44): Սա, անշուշտ, որոշակի գրական քայլ էր (որի ակունքները, ինչպես նշել ենք, գալիս են դեռևս վաղ գրաբարից)

<sup>16</sup> Կարելի է ենթադրել, որ նույնիսկ գրաբարի վաղ շրջանում 1-ին և 2-րդ ապանիները ավելի բնորոշ են եղել գրավոր քան բանավոր խոսակցական լեզվին:

գոնե այդ ժամանակածեռում միասնական սկզբունքով տարբերակելու ներգործական ու կրավորական սեռերը: Բայց ինչպես անորոշ դերբայի ել—իլ վերջավորությունների հակադրությունը շտարածվեց միայն ներգործականության-կրավորականության արտահայտման վրա, այնպես էլ անցյալ անկատարի վերջիշցյալ ձևը ստանձնեց ավելի լայն գործառություններ՝ տարածվելով չեղոք սեռի բայերի վրա: Ի խոնարհման բայերը անցյալ անկատարում, անկախ սեռային իմաստից, հանդես են գալիս դարձյալ իւր մասնիկով: Ահա մի շարք օրինակներ:

«Սնոտի յուսով փերացիւր նստիւր» (Զքր., II, 7): «Եւ էր խանճ ի կոտէս դաւառի... անդ յապահովս լինիւր» (ԽԲ): «Կին մի ի նորք գեղջէ նստիւր ի դրան իւրում» (I, 57): «Եւ ոչ վրիպիւր բնաւ» (I, 68): «Եվ բնաւէն ոչ երեխիւր հաց և կերակուր և այլ ինչ ուսեկի» (Դվրժ., 88): «Միայն շիլքն և գլուխքն երեխիւր» (Քմրճ., 123):

Այսպիսով՝ իւր-մասնիկը, որը նախապես եղել է կրավորական սեռի արտահայտման միջոց (թեև ոչ հաճախական), հետագայում մի կողմից ավելի տարածում կիրառություն է ստանում իր այդ գործառության մեջ, մյուս կողմից էլ դառնալով —ի— խոնարհման բայերի անցյալ անկատարի արտահայտման միջոց, նորից է խճճում հենց թեկուզ այդ ժամանակածերի շրջանակներում ներգործականության-կրավորականության հակադրության հստակեցման սկզբունքը:

Կրավորականության հարցի քննությունից կարելի է եղակացնել, որ գրաբարի խոնարհման առանձին ենթահամակարգերում, տարբեր ժամանակահատվածներում նկատվող կրավորականության պարզեցման ձգտումը ժամանակավոր ու անկայուն բնույթ է կրում: Մյուս կողմից դա միայն մասնակի պարզեցում էր, որը, ինչպես տեսանք, իր հետ բերում էր այլ կարգի խառնաշփոթություն: Խսկ լեզվի զարգացման առարկայական ընթացքով ստեղծված դժվարությունները այդպիսի մասնակի միջոցներով հաղթահարելը անկարելի էր: Հարկավոր էր համակարգային փոփոխություն՝ միամնական պարզ ու որոշակի սկզբունքով: Խսկ այդ եղավ ոչ թե գրաբարում, այլ աշխարհաբարում, երբ —վածանցը դարձավ ամբողջ բայական համակարգում կրավորական սեռի արտահայտման միակ միջոցը:

Գրաբարի համեմատությամբ աշխարհաբարում կրավորականի հրստակեցումն ու պարզեցումը պայմանավորված է նաև բայական համակարգի պարզեցման հետ առհասարակ: Եթե աշխարհաբարը անփոփոխ ժառանգեր գրաբարի խոնարհման համակարգը, ապա կրավորականության այդ հստակեցումն էլ հնարավոր էր լինի: Այդ պարզեցումը լեզվի համակարգի պարզեցման դրսերումներից մեկն էր:

Ամփոփենք. XVII դարի գրաբարի բայական համակարգը իր հիմնական գծերով պահպանել է վաղ գրաբարի ավանդները: Առանձին ենթա-

Համակարգեր ու բալական հասկացություններ, սակայն, որոշակիորեն փոփոխվել են։ Այդ փոփոխության պատճառը լիդվի պատմական զարդացումն է, գրաբարի բայական համակարգի պարզեցման վաղուց ի վեր սկսված ու գործող միտումը։

## ԱՅՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XVII դարի գրաբարը, բնականաբար, անփոփոխ չի ներկայացնում մյուս խոսքի մասները, քերականական այլ իրողությունները (մակայուններ, սպասարկութառեր կամ, այսպես կոչված, երկրորդական խոսքի մասներ, ժխտական կազմություններ և այլն)։ Փոփոխությունները դրևորվում են հետեւալ կերպ։ ա) գրաբարի համապատասխան բառը անփոփոխ մնալով արտահայտության պլանում, ձեռք է բերում խմացին նոր արժեք<sup>1</sup>, բ) գործառում են գրաբարին ու բնորոշ սպասարկութառեր, գ) զգացի տարրերություններ են նկատվում որոշ բառերի ու կառուցների գործածության մեջ<sup>2</sup>։

Փոփոխություններ նկատվում են հատկապես նախդիրների ու նախադրությունների կիրառության ժամանակ։ Դա պատահական չէ։ Գրաբարում նշվածները լայն տարածում ունեն ևս սպասարկում էին հոլովման համակարգը։ Իսկ կապական (կամ նախդրացին) հարաբերությունները բազմաթիվ էին ու բազմաբնույթ։ XVII դարի գրաբարը պահել է բոլոր նախդիրները, բայց դրան զուգահեռ առկա են որոշ նախդիրների նոր գործածություններ, այլև նոր կապեր ու կապական բառեր<sup>3</sup>։

1 Օրինակ, այլ բառը գրաբարի տարրեր՝ կոնտեքստներում ստանում էր տարրեր խմերի արժեքը, բայց հավելական շաղկապի կիրառությունն լուների իսկ բննվող շրջանում հանդիպում ենք նաև այդ գործառությանը։ «Որ ես այլ երթամ իմ առարջողին պատասխանի տանիմ»։ (Քմրճ., 205)։ «Որ ինքն խարուէր է դիւաց և զեեկ այլ խարեաց» (Քրնդ., 440)։ Ընդզվածները համապատասխանում են արևելահայերներ - ել հավելական շաղկապին։ Նույն շրջանից վկայված է և -ալ- ձեզ՝ (արևմտահայ տարրերակ)։ «Կեղծարար հրաժարելով, թէ ես լեմ բաւական այդմ լինել և մեզ ալ հարկեցանք»։

2 Դասական գրաբարում, օրինակ, հաճախական չէին Զ-ով ժխտական կազմությունները, իսկ բննվող շրջանում դրանք բավական շատ են։ «Զգիտեմ թէ ինչ պատասխան տայցիմ» (Քմրճ., 198)։ «Չեղեւ հնար գտանելոյ» (Քրնդ., 412)։ «Եւ բնաւ ամենեւին չուներ հոգ և փոյթ աշխարհանողութեան» (Քրնդ., 544)։

3 Մակրայների շարրը նույնպես համարված է։ Հմմտ. Զի տարեց տարի գիշելով... (Քմրճ., 174)։ Առայօտու ել և գնաց աշակերտն իւր (Քմրճ., 231)։ Եւ երեկոյին գնացաք յեկեղեցին ընդ նմա (Քմրճ., 239)։ Շատ անդամ ենք հանդիպում ցեղ, կերպի ձեին։ Վաղ գրաբարում մակրայական գործածություն ուներ ցեղ կամ ցեղ-ցեղ (վերջին՝ հայանաբար ազգի-ազգի-ի նմանությամբ)։ Նոր են և ա մայր, ա հայր տիպի կոչական-

Առաջին հերթին պետք է նշել այն դեպքերը, երբ կողք կողքի միեւնույն իմաստով օգտագործվում է մեկից ավելի նախդիր կամ նախադրություն. հմմտ. «Վասն ագահութեան աղազաւ (Դրնդ., 411): Սա արդյունք է ուշ շրջանում գրաբարի որոշ քերականական կարգերի ու հասկացությունների, մասնավորապես նախդիրների ու նախադրությունների ոչ հստակ գործածության կամ էլ դրանցից որևէ մեկի իմաստային տարտամության: Վաղ գրաբարում նախադրությունները որպես կանոն պահանջում են միայն մեկ հոլովով դրված կապվող բառ: Օրինակ, պատճառաւ, ի պատճառս, յաղազս, աղազաւ, ի վերայ նախադրությունները միշտ հանդիս են գալիս սեռական հոլովով դրված բառի հետ, իսկ ասենք, շուրջ, շափ, հանդերձ բառերը՝ գործիական: Նախադրությունների օգտագործման այս կանոնը խախտված է քննվող շրջանում: Օրինակ. «Ճի զինի ժամանակաց ի պատճառէ այսց» (Դվրժ., 71): «Եւ յայսմ պատճառէ հողագործք... փախուցեալք ամրանային» (Դվրժ., 87): Ինչպես տեսնում ենք, պատճառ գոյականը որպես կապական բառ օգտագործվում է և սեռական, և տրական հոլովով կապվող բառի հետ: Ոչ գոյր մի փոքր ագարակ գեղջի շափ (Դրնդ., 354): Այս օրինակում կապվող բառը դրված է սեռական հոլովով: Փոխված է նաև կապի և կապվող բառի շարադասությունը: Ներքոյ, վասն, վերայ, նման բառերը վաղ գրաբարում միայն ու միայն նախադրություններ են, իսկ քննվող շրջանում հաճախական են և դրանց ետաղաս գործածությունները: Օրինակներ. «Քանզի աւագ խորանի ներքոյ շինեալ մատուռն աւերեալ էր բնաւին» (Դվրժ., 326): «Որոյ վասն վշտանային և ցաւէին»: (Դվրժ., 291): «Որ պատերազմ մեծ էր յայնմ աշխարհացն վերայ»: (Դրնդ., 471): «Յորում ատուր հանդերձեալ էին նոքա գնալ ի իլովայ վերայ» (Զքր., II, 9): «Իսկ քրիստոնեայն Դաւթայ նման արարեալ» (Զքր., II, 21): «Սոցին նման շինեցան յաւուրս տեառն» (Դվրժ., 350): Ներքոյ, վերայ բառերը հիմնականում հանդիս են գալիս ի— նախդիրի հետ: Կարելի է կարծել, որ —ի-ի անկումը ետաղաս գործածությանը նպաստող գործոններից մեկն էր, բայց հենց վերը բերված մի օրինակում՝ ի իլովայ վերայ կապակցության մեջ ի նախդիրը առկա է, բայց այդուհանդերձ վերայ կապը ետաղասված է: Ուրեմն, անկախ մասնակի պատճառներից, գոյություն ունի կապական բառերի ետաղաս գործածության ավելի ընդհանուր պատճառ: Դա ժամանակաշրջանի լեզվի ընդհանուր միտումն է: Նկատենք, որ վերը բերված կապերը գործառում են գրաբարյան բառաքերականական ձևերի շրջապատում: Գրաբարի համա-

ները: Հմմտ. Եւ ապա հարցաք ցկինն ոմն, թէ ա՛ մայր կայր ի գիւղս այս մեծատուն ոմն (Զքր., II, է): Ընդգծված ձևը թերեւս բարբառային-ժողովրդախոսակցական է: Գրական ձևերը կազմում են այլ-ով հմմտ: Եւ մայրն աղաղակէր թէ զինչ շարութիւն արարոդի իմ, ա՛ մեծամեծ իմ... (Քմրճ., 3):

կարգում նկատվող շարադասական այս նորամուծությունը, առաջին հերթին, աշխարհաբարի, առօրյա խոսակցական լեզվի աղղեցությունն է: Ուզ շրջանին բնորոշ է նաև ոչ ժխտական մասնիկի ետադաս գործածությունը. «Մեք այլ հնար և ճար զիտեմք ոչ, դու որպէս կամիս՝ արա...» (Դրնդ., 388): «Դու յառաջն ասացեր ո՞չ թէ տուր առ իմ զդրամդ, որ պահեմ» (Դրնդ., 484):

Շարադասությունը որպես շարահյուսության բաղկացուցիչ մաս, նվազ դեր չունի լեզուների և միևնույն լեզվի տարբեր փուլերի ու վիճակների տարբերակման գործում: Արդյոք XVII դարի գրաբարը հարազատորեն է պահել վաղ գրաբարի շարադասական յուրահատկությունները: Հենց կապերի և ժխտական կազմությունների շարադասությունը ցույց է տալիս, որ առկա են փոփոխություններ: Հիշենք, որ շարադասությունը ոչ միայն նախադասության անդամների, այլև նախադասության անդամ շհանդիսացող բառերի, ինչպես նաև քերականական (օժանդակ բայց, մի արգելական և այլն), նաև բառակապակցությունների դասավորության որոշակի կարգն է<sup>4</sup>: Գրաբարի շարադասությունը ազատ է, այսինքն բառի պաշտոնը նախադասության մեջ չի պայմանավորվում նրա գրաված տեղով: Ազատ շարադասության գեպօւմ առաջնային է նրա արտահայտչական նշանակությունը: Բայց ինչպես աղատ շարադասություն ունեցող յուրաքանչյուր լեզու, այնպես էլ գրաբարը ուներ շարադասական իր առանձնահատկությունը. այսինքն բառերի դասավորության կարգը աղատ է միայն հարաբերականորեն: Եթե հնարավոր է բառերի դասավորության և այս և մյուս կարգը, ապա վերջին հաշվով հաճախական ու բնորոշ է միայն մեկը: Դասական գրաբարում հանդիպում ենք կապերի ետադաս կիրառության օրինակների, բայց բնորոշը, այնուամենայնիվ, կապ-կապվող բառ շարադասությունն է: Ի՞նչպես է վիճակը XVII դարի գրաբարում: Բնականաբար, այստեղ շարադասությունը նույնպես աղատ է, բայց այն զգալապես տարբերվում է վաղ գրաբարից: Մեր հիմնական նպատակը նախադասության տարբեր անդամների, բառակապակցությունների շարադասության մանրակրկիտ քննությունը չէ: Անդրադառնանք միայն հատկացուցիչ-հատկացյալի և որոշիչ-որոշյալի շարադասությանը:

Դասական գրաբարում գերիշխող է հատկացյալ-հատկացուցիչ շարադասությունը: Ինչպես նշում է Ս. Բագրատունին «Աշխարհաբար լեզուի մէջ յատկացուցիչը միշտ առաջ կը դրուի յատկացեալէն. գրաբարին մէջ

4 Շարադասության այս բնութագրումը վերցրել ենք Խ. Բագիկյանի «Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը» գրքից: (Երևան, 1976, էջ 8): Այս գրքում հեղինակը անդրադառնում է նաև գրաբարի քերականների կողմից շարադասական հարցերի մեկնարանմանը:

շատ անգամ ետքը, բայց առաջ ալ կըդրուի»<sup>5</sup>: XVII դարի գրաբարում արդեն հաճախական են նախաղաս հատկացուցիչները: Բերենք մի քանի օրինակներ միայն:

«Եւ իշխանքն վրաց կարգեցին զնորին որդին թագաւոր» (Դվլժ., 106): «Բայց նորին աշակերտքն և ամենայն քահանայք և ժողովուրդը թախանձէին» (Դվլժ., 296): «Մինչ կայր Մովսէս վարդապետն անհոգ պարզմտութեամբ յերևան քաղաքի յիւրում տան նիւթեաց նմա...» (Դվլժ., 297): «Փիլիպպոս կաթողիկոսի վարքն և գործքն զամենայն գրեալ է Առաքել պատմագիր» (Զքր., II, 26): Նախաղաս հատկացուցչի հաճախական կիրառությունը խոսակցական լեզվի աղղեցության արդյունքն է: Դրանով կարելի է համոզվել համեմատելով հեղինակի զուտ գրաբար և գրաբարախառն աշխարհաբար հատվածները: Այսպես, Դավիթի ժեցու «Պատմության» 651—660 հշերն ընդգրկող հատվածում (Հիմնականում գրաբար շարադրանք՝ 2000 բառ) նախաղաս հատկացուցիչները 10-ից քիչ են, իսկ նույնքան բառ ընդգրկող ու զուտ գրաբարյան տեքստում (էջ 491—500) նախաղաս հատկացուցիչների թիվը անցնում է 20-ից: Քննվող շրջանում որոշիչը նույնպես նախաղասվում է որոշյալին: Վաղ գրաբարում որոշիչը դրվում է որոշյալից առաջ և հետո Ուսումնասիրողների մեծ մասը դասական գրաբարին բնորոշ է համարում, սակայն, որոշիչների հոգադաս գործածությունը<sup>6</sup>: Որոշչի շարադրասության երկու դեպքերն էլ կան գրաբարում. այնուհանդերձ այն հարցը, թե դրանցից գերիշխողը որն է, նվազ կարևորություն չունի, որովհետև դրանով իսկ պարզ է դառնում լեզվի զարգացման միտումներից մեկը: Որոշիչ-որոշյալի կապակցությանը նվիրված իր մենագրության մեջ՝ Հ. Ավետիսյանը գունում է, որ վերջին հաշվով հենց դասական գրաբարում ավելի տարածված էր որոշչի նախաղաս կիրառությունը: Կարծում ենք սա ավելի ճիշտ է, որովհետև հիմնված է վիճակագրության վրա: Միայն Աստվածաշնչում է, որ ածական որոշիչների ետաղաս գործածությունը գերակշիռ է, իսկ ինքնուրույն և թարգմանական մյուս երկերում պատկերը այլ է<sup>7</sup>: Աստվածաշնչումն էլ անշուշտ կրել է թարգմանվող լեզվի աղղեցությունը: Կարելի է ենթադրել, որ հետագա դարերում նույնպես որոշչի նախաղաս կիրառությունը գերակշիռ էր: Իսկ ինչ վերաբերում է XVII դարի գրաբարին, ապա այդ հիմնավորվում է վիճակագրությամբ: Վերը նշված հատվածում

5 Ա. Թագրատունի, Տարերք հայերէն քերականութեան, Վենետիկ, 1869, էջ 156:

6 Տե՛ս Գ. Զանովյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 38, է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, 1962, էջ 260:

7 Հ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Երևան, 1972:

8 Նույն տեղում, էջ 16:

Զաքարիա Քանաքեռցին օդուագործում է 8 ետաղաս և 30 նախաղաս, իսկ Դավիթի մեցին (էջ 651—660)՝ 10 ետաղաս և ավելի քան 40 նախաղաս որոշիչ նույնիսկ այնպիսի որոշիչներ, որոնք դասական գրաբարում կիրառվում են միայն ետաղաս, քննվող շրջանում գործառում են նաև նախաղաս. Հմմտ.՝ «Եւ ապա շարահնար ազգն պարսից հնարեցին զայլ իմն հնարս» (Դվրժ., 50): «Եւ դուք ևս պատրաստեցէք զոմն այր ի ձեր կողմանէ» (Դվրժ., 28):

Ինչու նախաղաս որոշիչները բնորոշ էին և դասական, և XVII դարի գրաբարին: Մի՞թե այդ հարցում լեզուն այդքան պահպանողական է: Տվյալ դեպքում, այս, որովհետև V դարում որոշիչների նախաղաս կիրառությունը, առաջին հերթին, ժողովրդական կենդանի, բանավոր խոսքի արտահայտություններից մեկն էր, իսկ ետաղաս գործածությունը բնորոշ էր թերևս գրքային ու գրավոր լեզվին: Հարյուրամյակների ընթացքում պահպանելով որոշիչ-որոշյալի շարադասության երկու ձևերն էլ, այնուամենայնիվ կենսունակ էր և մնաց որոշիչ նախաղաս կիրառությունը, որն արգեն որպես բացարձակ կանոն դրսելուվեց աշխարհարարում: Հստ երևութին ժողովրդախոսակցական, կենդանի լեզվին բնորոշ պետք է համարել և հատկացուցչի նախաղաս գործածությունը, որը նույնպես բացարձակ տարածում գտավ նոր գրական լեզվում:

Ինչ վերաբերում է որոշիչ-որոշյալի համաձայնությանը, ապա XVII դարի գրաբարում կանոնականը փաստորեն դրանց անհամաձայնությունն է:

Վաղ գրաբարի համեմատությամբ XVII դարի գրաբարը դրսելորում է նաև մի այլ յուրահատկություն՝ հանդես բերելով կայուն բառակապակցությունների, դարձվածային, ոճական միավորների հաճախական գործածություն: Ստորև բերվող օրինակների մի մասը կամ նման կազմությունները առհասարակ խորթ չեն գրաբարին, սակայն պետք է նկատել, որ քննվող շրջանում դրանք ալելի հաճախական են, իսկ որոշ կարգի ոճեր ու դարձվածային միավորներ՝ նոր ժամանակաշրջանի, նոր լեզվամտածողության արդյունք: Օրինակներ՝ «Եսկ շահն արհամարհեաց զնա և զթղթաբերսն գանիւ արձակեաց և ակամք հայէր առ Ռուստամն մինչև ի մահ»: (Զքր., I, 65): «Վասն որոյ յամենայն կողմանց ի նեղ անենեալք ետուն զբերդն պարսից» (Դվրժ., 94): «Ենաս բանն յունկն բազաւարին» (Դվրժ., 156): «Եւ շահն խօսէր քնդ մտվրովին և հարցանէր զովն և ուստին և զվասն երն» (Դվրժ., 111): «Հնարէր թէ զիարդ հանցէ զովն» (Զքր., II, 1): «Վասն որոյ ի խոր խոցեցաւ նա մահու շափ՝ նախատինս համարելով ինքեան...» (Զքր., I, 62): «Եսկ եպիսկոպոսն խրատեաց զնա և ասէ, նա ոչ պատարագող է և ոչ մեռեալ յարուցանող, այլ ա՛յս է, զի զքեզ մարդասպանս առնէ՝ և արեան տէր» (Զքր., I, 52, 53): «Սուտ հանին զտաճիկն» (Զքր., I, 72): «Եւ ոմանք կանայք յդիք և ծանր ոտք»

(Դվրժ., 460): Թեև բերված օրինակները հիմնականում քերականորեն գրաբարյան են, ալդուհանդերձ դրանց առատությունը և բազմազանությունը պայմանավորված է առօրյա, խոսակցական լեզվով: Հեղինակները միայն գրաբարացրել են բանավոր, խոսակցական լեզվին բնորոշ կապակցություններն ու ոճերը, որոնց օգտագործման չափը մեծապես կապված է և երկի ժանրից: Օրինակ, փիլիսոփայական գրականության մեջ դրանք համարյա չկան, որովհետև այդ ժանրը գործ ունի հիմնականում վերացական դատողությունների ու եզրահանգումների հետ, իսկ պատմագրական գործերի այն հատվածներում, որոնք ժամանակագրացին բնույթ ունեն, նույնպես ոճական դարձվածային օրինակներ քիչ են գրանցվում, իսկ նկարագրությունների և հատկապես երկխոսությունների մեջ (վերջինը չափազանց բնորոշ է XVII դարի պատմագրությանը) դրանք հաճախական են:

Մի խոսքով, ուշ շրջանի գրաբարի առանձնահատկություններից մեկը պետք է համարել նաև դարձվածային միավորների բազմազանությունն ու հաճախականությունը:

### ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆ

Հայ բանասիրության մեջ լատինաբան հայերեն է կոչվում այն ըստեղծագործությունների լեզում, որը կրում է լատիներենի աղղեցությունը: Լատինաբան հայերենը խոսափում էր ժամանակաշրջանի համար հարազատ ու հասկանալի լեզվաքերականական, ոճական ձևերից, ժողովրդական մտածողությունից, բառ ու բանից, ավելին, գրավոր-գրքային լեզվի որոշ ավանդների պահպանման արհեստական ճիգերին զուգընթաց ակնհայտ է օտարաբանությունների կիրառման, գրաբարը դասական այլ լեզուների, տվյալ գեպքում լատիներենի համակարգին նմանակելու ձգումը: Ե՞րբ ձևավորվեց լեզվական այդ քաղաքականությունը, որո՞նք էին նրա առաջացման ու գործառման պատճառները: Ի՞նչ հետևանքներ տնեցավ (կամ կարող էր ունենալ) լատինաբան հայերենն ու դրանով ստեղծված գրականությունը հայ մշակութի զարգացման գործում:

Լատինաբան առաջին գործերը երևան են գալիս XIV դարի սկզբներից: Այդ ժամանակ է, որ ստեղծվում է Հռոմի եկեղեցու հետ միացնողների եղբայրություն, տրը մեր մատենագրության մեջ հայտնի է ունիթոր կամ ունիթոռ, հաճախ՝ աղթամար անուններով<sup>1</sup>: Լատինաբանության առաջացումը, առաջին հերթին կապվում է հայ ժողովրդի որոշ հատված-

<sup>1</sup>ՏԵ՛՛ Ան, եժ, հ. 3 էջ 316:

Ներում կաթոլիկական-դավանափոխական քարոզության սկսվելու հետ։ Հոռմի պապի կողմից հովանավորվող և ֆինանսավորվող կոռոնական-դավանափոխական գաղափարախոսությունը ուղեցվում էր նաև համապատասխան գրականության տարածմամբ։ Գրականությունը հիմնականում թարգմանական էր՝ կրոնական, եկեղեցական թեմատիկայով։ XIV դարի սկզբին, օրինակ, Քոնայի վանքում թարգմանվեց 25 գիրք<sup>2</sup>, Սայն ժամանակվա պայմաններում պատկառելի թիվ է։ Բանավոր և գրավոր քարոզությունը ունեցավ իր վտանգավոր հետևանքը, մի վտանգ, որ երկար դարեր սպասում էր՝ մերթ ուժեղանալով, մերթ թուլանալով։ Քանի որ կրոնական-եկեղեցական գրականությունը թարգմանվում էր լատիներենից, նաև եվրոպացի քարոզիչների ձեռքով, ապա անխուսափելու համար շրջանառության մեջ դրված գրականության մեջ զգացվում էր լատիներենի որոշ ազդեցությունը։ Ալկրնական շրջանում այդ ազդեցությունը, բնականաբար, սահմանափակ էր, ուստի անհամեմատ փոքր է լեզվական ձուլման ու աղավաղման, քան դավանափոխության վտանգը<sup>3</sup>։ Իսկ ուսումնասիրողներից ոմանք առհասարակ այդ շրջանում լատինաբանության հետքեր զեն տեսնում։ Մասնավորապես այդ կարծիքին էր Աճայանը, գրելով, թե՝ «Այս (իմա՝ XIV դ.՝ լ. 2) հայերենը շատ կանոնիկ է և լատինաբան կոչվելու ոչ մի պատճառ չունի։ Լատինաբան հայերենը հորինված է ավելի ուշ՝ ժամանակությունը մեջ գրառուն, Հոռոմում»<sup>4</sup>։ Որպես փաստարկ հեղինակը քերում է Արագոնացու «Յառաջաբան» առաքինութեանց գրքից մեկ հատված, որտեղ լատինաբանություն շահագությունը բաց նույն շըրջանից Քոնացու քերականության մեջ, օրինակ, քերականական որոշ կարգեր ու տերմիններ զուտ լատիներենի պատճենում են։

Լատիներենի ազդեցության վերելքը իրոք XVII դարն է։ Դա պատճական չէ։ Նախորդ ոչ մի շրջանում շփումը եվրոպացի հետ այնքան սերտ չի եղել, ինչպես XVII դարում։ Եվրոպայում հայ վաճառականների ու արհեստավորների գործունեությունն ու հեղինակությունը, հայ գաղթօջախների ու համայնքների առկայությունը ավելի է ակտիվացնում կաթոլիկ եկեղեցու ու որոշ միապետների քաղաքական հետաքրորությունը Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ։

2 Հ. Անայան, ՀՂՊ, մասն II, էջ 309։

3 Կարճ ժամանակամիջոցում, օրինակ, կաթոլիկ դարձավ նախիշևանի շրջանի Քոնա, Սալիթաղ, Արքակունիս, Խոշկաշեն, Ապարաներ, Ջահուկ, Շահապոնք և մի քանի այլ գյուղերի հայ բնակչության մեծ մասը։ Նրանք գոյատեսեցին մինչև XVII դ. վերջերը, և խպառ խզած լինելով իրենց հոգևոր կապերը մայր ժողովրդից, զանգվածարար ընդունեցին մահմեդականություն («Տե՛ս Ցովհաննես Քոնեցի, Ցաղակս Քերականին, Երևան 1977, լ. Խաչիկյանի ներածությունը, էջ 29»)։

4 Հ. Անայան, ՀՂՊ, մասն II, էջ 310։

5 Նույն տեղում։

Հիշենք նաև, որ XVII դարում է, որ հայ ժողովուրդը մահմեղական լծից աղատագրվելու իր իշձերը կապում էր Ելրոպայի հետ՝ փայտիկելով նոր խաչակրաց արշավանքի հույս, որն այդպես էլ մնաց որպես ցանկություն: Ժողովրդի առաջադեմ շատ ներկայացուցիչներ ու հոգեոր առաջնորդներ հանուն մահմեղական լծից ազգի աղատագրման պատրաստ էին ընդունելու կաթոլիկություն: Քանի որ մեծ էր նման անձերի ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա, ուրեմն մեծ էր և կաթոլիկության տարածման վտանգը: Եվ իրոք, XVII դարում լայն թափ է ստանում կաթոլիկական քարոզվությունը թե՛ բուն Հայաստանում, թե՛ գաղթօջախներում: Այդ նպատակն իրավանացնելու համար պապի պատվիրակները դիմում էին ամենատարբեր միջոցների՝ խոստումներից մինչև ահաբեկում, պատմական փաստերի կեղծում: Դավանափոխական այդ գործընթացը հանգամանորեն վերլուծված է մեր պատմագիտության մեջ, բացահայտված են նրա կործանարար հետևանքները: Վերջին հաշվով, Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայ որոշ գաղթօջախների կաթոլիկացումն էլ նպաստեց մեր ժողովրդի այդ հատվածների վերջնական ձուլմանը:

XVI—XVII դարերում, քաղաքական հանգամանքների հետ սերտորեն առնչվող կաթոլիկական քարոզվությունը որպես զենք գործադրում էր դարձյալ կաթոլիկական գրականությունը, այս անգամ օգտվելով տպագրի խոսքի ընծեռած հնաբավորություններից: Բացի կրոնական գրականությունից գրվում, նաև տպագրվում են հայերենի շատ քերականություններ, որոնցում էլ գործում են լատիներենի քերականության որոշ սկզբունքներ:

Պատահական չէ, որ ուսումնասիրողներից շատերը «լատինաբան հայերենի» որպես ձևավորված լեզվական ուղղության գոյությունը կապում են XVI—XVII դարերի հետո Լատինաբանությունը ուսումնասիրողների կողմից միշտ էլ բացասական վերաբերմունքի է արժանացել: Պատճառը՝ հայերենը մաքուր ու դասական վիճակով տեսնելու ցանկությունն է և օտարամուտ տարրերի նկատմամբ մերժողական տեսակետը, ինչպես նաև այդ «լեզուն» ստեղծողների ու կիրառողների գործունեությունը: «...Արեւմուտքէն Հայաստան եկող քանի մը եվրոպացի քահանայք, — գրում է Գ. Զարպհանալյանը, — հայերէն սորվելով ու լատին լեզուն սորվեցընելով, լատինահայ միաբանութիւն մը կը ձևացնեն: Ասոնք ուղելով

6 Օրինակ, Հակոբ կաթոլիկոսի կողմից կաթոլիկություն ընդունելը հետապնդում էր միայն այդ նպատակը (տե՛ս Լեռ, նշվ. աշխ. էջ 336):

7 Գրաբարի առաջին տպագրի քերականությունը Կղեմես Գալանոսի «Թերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւն շահելոյ» գիրքն է, որը լույս տեսավ Հռոմում, 1645 թվականին:

հայերէն լեզուն մշակել, մտածեցին որ ըստ ամենալինի լատին լեզուին հետ նոյնացնեն զայն և համարեցան այն կերպով լեզուին պահասութիւններն լեցնել ու անկանոնութիւններն ուղղել: Ասանկով շատ մը քերականական փոփոխութիւններ ըրին ու կանոններ հաստատեցին և ձևացուցին լատին-հայ լեզու մը, որ թէպետ և արտաքին կերպարանքովը հայերէն է, բայց իրօք լատինականի կաղապարով ձուլեալ զանգուած մը... Տարակոյս շկայ, որ լեզուի այսպիսի տարորինակ խառնուրդի մը մէջ աւելորդ է հարազատ և ընտիր բարբառոյ ճաշակ, ոճ ու քաղցրութիւն մինտուելց<sup>8</sup>:

Ահա Աճառյանի գնահատականը «...Բազմաթիւ նորմութեանց հետ նորա (իմա՝ ունիթորները—և. Հ.) ձեռք են երկարում նաև գրաբար հայ լեզուին և տալիս են նրան մի սոսկալի հարուած»<sup>9</sup>:

Նման գնահատականները եղակի չեն:

Արդ, ի՞նչ ո՞ք է խաղացել լեզվական այդ ուղղությունը հայ մշակույթի մեջ: Մեր կարծիքով լատինաբան հայերենը քննելիս ու գնահատելիս պետք է որոշակիորեն տարբերել երկու բան՝ լատինաբան քերականություններն ու այն հայերենը, որը կրում է լատիններենի ազդեցությունը: Այսինքն, առաջին հերթին պետք է պարզել, թե արդյո՞ք քերականություններում տեղ գտած օտարաբանությունները ինչպի՞ս և ի՞նչ չափով են կերականությունը ոչ քերականական գործերում, նաև քերականական երկերի բուն շարադրանքի լեզվում: Այս հանգամանքը միշտ չէ, որ ուշադրության է առվել: Հաճախ չափանիշ ընդունելով միայն քերականությունը, կանխակալ կարծիք է հայտնալում նաև այդ հեղինակի լեզվի և առհասարակ, լատինաբան հայերեն կողման լեզվական ուղղության վերաբերյալ: Սակայն քերականությունը դեռևս լեզվի իրական վիճակը չէ:

XVII դարի քերականությունները Գ. Զահուկյանը բաժանում է երեք խմբի. ա) լատիներեն տեխնիկական քերականություններ (Ֆրանցիսկոս Ռիվոլա, Կղեմես Գալանոս), բ) լատինատիպ ուսցիոնալիտական քերականություններ (Ոսկան Երևանցի, Հովհաննես Հակոբը և այլ կուսանություններ), գ) հոմա-լատինատիպ քերականություններ (Սիմեոն Զուղարիցի, Հովհաննես Զուղարիցի (Մրգուլ), Խաչատրյան Կարնեցի (Էրզրումցի)<sup>10</sup>:

Որոշ քերականություններում զգացվում է գրաբարին խորթ, արհեստական, լատիներենի քերականական կաղապարների արտահայտություն.

8 Գ. Զահարիանալիան, Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտք ուսման ազգային վարժարանաց, թ. Վենետիկ, 1878, էջ 49–50:

9 Հ. Աճառյան, Պատմութիւն հայոց նոր գրականութեան, Վաղարշապատ, 1906, պրակ Ա, էջ 12:

10 Գ. Զահարիան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974:

ավելին, հենց հայերենին բնորոշ երևոյթների արհեստական մասնաւում, քերականական հասկացությունների ու ձևակերպումների անհղուտակություն, սկզբունքների ու միօրինակություն և այլն:

Հայ լեզվաբանական գրականության մեջ մանրամասն քննված են լատինաբան քերականությունները, վեր են հանված նրանց ընդհանրություններն ու տարրերությունները<sup>11</sup>:

Ինչպես նշեցինք, երբեմն երևոյթները ճիշտ չներկայացնող քերականություններով չպետք է դատել նաև դարաշրջանի տվյալ լեզվական ուղղության մասին: Այսօր էլ արդի հայերենի քերականական որոշ ըմբռնումներ տարրեր բանավեճների տեղիք են տալիս (Հոլովման համակարգ և հոլովների քանակ, խոնարհման համակարգ, խոսքի մասերի տարրերակում և այլն), բայց դրանից լեզվի իրական վիճակը չի փոխվում:

Լատինաբան հեղինակների հիմնական ձեռնարկումը քերականական, բառակազմական որոշ նորամուժություններ էին, որոնք այս կամ այն շափով շրջանառության մեջ դրվեցին հիմնականում Հայաստանի սահմաններից դուրս բնակվող հայ և այլազդի մի քանի հեղինակների կողմից:

Որո՞նք են հիմնական նորամուժությունները: Լատինաբան երկերում հանդիպում են որոշ մասնիկներ ու նախածանցներ. ներգոյականի համար ն. ըն. (Հմմտ. ըն բանում, նկղամում «ուու բնակեցեր նարգանդ կուսին», (Հ. Հոլով, Պարտէղ Հոգեւոր, 136): Փորձ էր արվում ներգոյականի կազմության այս եղանակը տարածել նաև այլ խոսքի մասերի վրա (նորո՞ւմ, նեղանիլն, նիւրեան, նիմում և այլ): Անեղական որոշ բառեր գործածվում էին եղակի թվով՝ կեան, միտ, փառ, օրէն... «առ կեանն երանական» (Հ. Հոլով, Համառ. ճարտաս. 24): Ածականների գերադրական աստիճանը կազմվում է միասնական սկզբունքով՝ եղ ածանցով: Հմմտ.՝ գերազանցագունեղ (Զերբած. յերկինս, 1) ուշիմեղ, 122<sup>12</sup>: Առանձին դեպքերում

11 Տե՛ս Վ. Սառուկյան, Գրաբարի. կառուցվածքի ուսումնասիրությունը XVII դարի քերականական աշխատություններում (թեկնածուական դիսերտացիա): Հարցը ավելի համարագված քննել է Գ. Զահուկյանը «Գրաբարի քերականության պատմություն» աշխատության մեջ: Այլ հեղինակներ նույնպես այս կամ այն առիթով անդրադարձել են մեզ հետաքրքրող հարցին:

12 Դասական գրաբարը գերադրական աստիճանի կազմման որոշակի ձև շունի, «Ճիշտ խոսելով՝ հայերէն լեզուն յատուկ գերադրական ձև չունի, — նշում է Զալըխյանը, — այլ հասարակօրեն կարի, յոյժ, անհնարին և այլն մակրայներով սաստկութիւնը կը ցուցի»: (Քերակ. Վիեննա, 1885, էջ 184): Բագրատումին նշում է նաև այլ ձեերով կազմություններ, (տե՛ս «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց», Վենետիկ, 1852, էջ 41): Լատինաբան հայերենը բոլոր այդ ձեերի փախարին կիրառում է միայն վերոհիշյալ ձեր:

(ինչպես հոմաբան հայերենում) նկատվում են սեռային տարրերակում մտցնելու որոշ փորձեր

Լատինաբան որոշ գործերում հանդիպում ենք նաև գրաբարի քերականական ժամանակների խորթ ձևերի. հմմտ. Սիրիցէի, լուանայցէի, լոյիր, զարբեոյաք...: Եղանակաժամանակային մի շարք ձևեր արհեստականորեն հարմարեցված են լատիներենի խոնարհման համակարգին: Այդ նույն պատճառով գրաբարի անկանոն բայերի խոնարհումը նույնպես կանոնարեկված է: Տամ-տրեմ-տրէի... տրիցեմ..., ունիմ-ունիցի, տրեցեալ լինի. (Հ. Հոլով, Հայելի ճշմարտութեան, 18).

Ուսումնասիրողները լատինաբան են համարում բ-ով և նախորդող բաղաձայնով վերջացող մի շարք բառերի (արտօսր, ծաղր, մեղր, կըզմինտր, բաղցր...) ներքին թերմամբ հոլովելը. հմմտ.՝ արտօսեր, ծաղեր, մեղեր, փոքեր... և այլն: Նման հոլովումը դասական գրաբարին խորթ չէր՝ նույն կառուցի այլ բառերի դեպքում՝ կայսր-կայսեր, դուստր-դստեր և այլն: Ընդգծվածները համարանության արդյունք են՝ ավանդված նաև հին շրջանից: Իսկ լատինաբանությունից հեռու այնպիսի մի հեղինակ, ինչպիսին Դավրիթեցին է, նույնպես օգտագործում է փոքեր բառաձեզ: Կային ի միասին մեծք և փոքերը սիրով համդարտեալք ի խցի» (295): Ուրեմն, սա չպետք է լատինաբանություն համարել: Լատիներենի «աղդեցությունը» այստեղ դրսերպում է թերևս համապատասխան բառաշարքը մեկ միասնական հոլովման ենթարկելու մեջ:

Հիմնականում վերը նշվածներն են որակում լատինաբան հայերենը: Այս նորամուծությունների զանգվածային ու երկարատև կիրառումը կարող էր գրաբարի համակարգում էական փոփոխություններ մտցնել, աղճատել այն, հնարավոր էր նաև նրա բացասական աղդեցությունը նոր սաղմնավորվող աշխարհաբարի վրա:

Իսկ փոփոխություններ իրականացնելու համար կարևոր է ոչ թե նորամուծությունների թվական կողմը, այլ նրանց որպես նոր համակարգի գոյությունն ու կենսունակությունը: Ուրեմն, առաջին հերթին, անհրաժեշտ է պարզել, թե լատինաբան հայերենը հատուկ մշակված ու համակարգված լեզվական ուղղություն էր, թե՞ լատիներենի որոշ ձևերի ու նմանակումների անսկզբունք ու ոչ միասնական կիրառություն: Այդ, ինչպես նաև ընդգրկման ու տարածման սահմանների որոշումը հնարավորություն կընձեռի ճիշտ գնահատելու լատիներենի որոշ աղդեցությամբ գրված ստեղծագործությունների և առհասարակ լատինաբան հայերենի տեղն ու

Նման նորամուծությունը ինչ-որ շափով հրապուրի է: Պատահական չէ, որ ոչ լատինաբան, բայց լատինաբանությանն անշուշտ ծանոթ հեղինակներից ոմանք հաճույքով օգտագործում են այդ միջոցը (տե՛ս Քյոմուրճյանի թղթերը):

գերը հայ մշակույթի պատմության մեջ։ Մեկ անգամ ևս նշենք, որ լատիներենի ազդեցությունը ակնհայտորեն ավելի գերակշիռ է քերականություններում, քան ոչ քերականական աշխատություններում։ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ քերականություններում իսկ այդ օտարաբանությունները միատեսակ չեն, այսինքն՝ տարրեր քերականներ նշում ու ամրագրում են այս կամ այն օտարամուտ երևոյթը, տարրեր փաստարկումներ ներկայացնում դրանց հիմնավորման համար։ Սակայն առավել կարևոր է ոչ քերականական գործերի (որոնք այս կամ այն շափով կրում են լատիններենի ազդեցությունը) լեզվական քննությունը, որովհետև հենց այսեղ է դրսեորվում լեզվի (տվյալ դեպքում լատինաբան կոչվող հայերենի) իրական գոյք, նրա հիմնական միտումները և ընդգրկման սահմանները<sup>13</sup>։

Յերանցիսկոս Ռիվոլան համարվել է իր ժամանակի նշանավոր լեզվաբան և հայագետ, բացի հայերեն-լատիններեն բառարանից և 1624 թ. լատիններեն գրված հայերենի մի քերականությունից, հեղինակի հայերեն լեզվով գրված որևէ լեզվաբանական աշխատություն մեղ ծանոթ չէ։

XVII դարի առաջին կեսին Հայաստանում նախորդներից և հազորդներից ավելի ակտիվ կաթոլիկական քարոզություն է սկսում Կղեմես Գևանոսը։ Նա բուն գործունեություն է սկսում հատկապես լեհահայերի կաթոլիկացումը արագացնելու գործում։ Ժողովրդին սիրաշահելու համար Գալանոսը հավատացնում է, որ հայերը սկզբից կաթոլիկ են եղել, և հայ ժողովրդի քաղաքական-տնտեսական թշվառությունը հերձվածող դառնալու հետևանք է<sup>14</sup>։ Բացի քերականությունից<sup>15</sup>, գրել է այլ գործեր։ Այն գրքում, որտեղ զետեղված է քերականությունը, հեղինակը քննում է նաև տրամաբանության հարցեր։ Շարադրանքում նկատելի են ա, ու լծորդության կրավորականի ոչ ճիշտ կազմություն (առնանի, էջ 130, իմանի, էջ 166), ներ մասնիկի օգտագործում՝ ներկուսեան (157)։ Գրքի վերջում զետեղված բառարանից զգացվում է, որ որոշ կազմություններ կրում են օտար ազդեցություն, ինչպես՝ անդրաշրջիլ—reflectir, դիմաշրջակայություն—antiperistasis, համարնաբանություն—metaphysica և այլն։

Հեղինակի գործերից քննության ենք առել նաև «Միաբանութիւն

13 Քննության ենք առել բազմաթիվ թարգմանական և ոչ թարգմանական գործեր, որոնցում առկա են լատիններենի ազդեցությունը, և որոնց հեղինակները որակվում են որպես լատինաբան։ Հիմնականում կանդրադառնանք այն գործերին, որոնց հեղինակները հեղինակ են նաև քերականությունների և լինելով գարաշրջանի զարգացած մատավորականներից, որոշակի ավանդ ունեն նաև հայ մշակույթի զարգացման գործում։

14 Տե՛ս, Առ, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 319—320։

15 «Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյն, Հռոմ, 1645։

Հայոց սուրբ եկեղեցւոյ ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմվայք (Հռոմ., 1650թ.) աշխատությունը: Մոտ 800 մեծադիր էջերից կազմված առաջին հատորի առաջին մասում հայոց եկեղեցու, դրան զուգահեռ նաև հայոց պատմության շարադրանքն է՝ հայերեն և լատիներեն: Գրքի երկրորդ մասում հեղինակը բանավիճում է կրոնական-եկեղեցական զանազան հարցերի շուրջ, բնականաբար լինելով հոռմեական եկեղեցու շերմ պաշտպան և հայ եկեղեցու անդիջում քննադատ: Հեղինակը օգտվել է մեր պատմիշներից, որոնց վկայությունները մեջքերում է անփոփխ, առանց ենթարկելու լատինաբան հայերենի կանոններին, իսկ վերջիններս նրա գրքում ընդհանուր առմամբ որակ չեն կազմում: Բերենք երկու հատված:

— Եւ զիարդ գրիչս իմ անյարմարս՝ կարօղ լինիցի երբեք պատմագրել ըստ պատշաճի զմեծամեծ լիշտիսն, որք ի վաղ ժամանակէն անտի պատահեցան յեկեղեցին հայոց: Եւ զիարդ յանձն առցուք ճառել զանցեալ ծածկագոյն խորհուրդս այլասեռ ազգի, երբ մինչև ցայժմ ոչ կարաց ֆոանկ պատմիլ ոք զբուռն հարել ի սոյնպիսի օտար պատմագրութինս: Բայց սակայն յուսացեալ ի յօգնութիւն սրբոյ Աստուածածնին յօժարապէս ախորժեսցուք համարձակիլ և ի յայս անհուն ծովս մտանել մանավանդ զի զմեզ առաջնորդէ ոմն հայ պատմիլ... (առաջարանից—է. Հ.):

...Ապա ուրեմն կայր ընդ աւուրսն ընդ այնուիկ ի մէջ հայոց սուս և մոլորեցուցիչ վարդապետն Ստեփաննոս Սիւնեցին, որ թիւնացից վարդապետութեամբ իւրով ոչ պարապէր զինել զինքն ընդդէմ ուղղափառ հաւատոյ և զանայր ևս ըստ կարի իւրում դարձուցանել զազգն իւր ի միաբանութենէ ընդհանրական կաթուղիկէ եկեղեցւոյ: Բայց սակայն ոչ կարաց առնել բնաւ և ուինչ (135): Նման շարադրանքը բնութագրական է նրա գրքի համար առհասարակ:

XVII դարի հայ մշակութի անխոնչ գործիներից է Ուկան Երեանցին: Երեանցու քերականության դասագիրքը<sup>16</sup> գրված է լատիներենի քերականությունների օրինակով և կրում է XVII դարում Եվրոպայում տարածված ուսցիունալիստական քերականության ազդեցությունը<sup>17</sup>: Երեանցու քերականության մեջ լատիներենի ազդեցությունը արտահայտվում է հատկապիս և, ներ մասնիկների, օտար տերմինների գործածությամբ: Խնչական՝ նույնապիսիում (12) ներփակեմք, նայնմ, ըն վերջում (12): Զերունդայք և այլն: Սակայն որոշ հարցերում նկատելի է Երեանցու քննադատական վերաբերմունքը: Ածականների գերագրական աստիճանից ցուցիլ համարելով —եղ-մասնիկը, ավելացնում է: «Գերագրականաց գա-

16 Քերականութեան գիրք համառոտիւք ծայրաբազ արարեալ յաղագս մանկանց և նորավարժից կրթութեան ի տառս մատենից և ի գիտութիւնս մասանց բանի ըստ քերթութեան սրբնութիւնի, յամի փրկին 1666, յԱմստերդամ թաղաքի:

17 Գ. Զահուկյան նշվ. աշխ. էջ 63—64:

դափնիարք առ մեզ գտանին, ո՞րքոն ուժեղ, զօրեղ, սրբեղ, բայց ոչ ըստ սովորութեան, զի այսորիկ խտրութին եղիցի հաստատագոյն, այլ այնպէս վարի որպէս բաղդատական» (57): Երևանցու թե՛ քերականության մեջ և թե՛ մեզ ծանոթ այլ գործերում լատինաբանության որոշ աղդեցությամբ հանդերձ գերիշխողը մաքուր գրաբարն է: «Թազմավեպում» 1966 թ. (էջ 293—304) տպագրված են Երևանցու մի քանի անտիպ նամակները, որոնցից 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ նամակները՝ հայերեն: Առաջին նամակը ուղղված է Ուրբանոս 8-րդ պապին, 2-ը՝ Պողոս Պիրոմալիին, 5-ը՝ հավատու տարածման սուրբ ժողովին, 6-ը՝ կարդինալին և 8-ը՝ Ս. ժողովի քարտուղարին: Նամակների հասցեներից և բնույթից սպասելի է, որ այնտեղ բազմաթիվ կլինին լատիներենի և լատինաբանության դրսերումները, սակայն իրականում դրանք անհամեմատ քիչ են: 5-րդ նամակում հանդիպում ենք նարդեանս, ներ պանդստութեան ձեւերին... բայց նարդեանս այսու աղագաւ գրեմ՝ զի ծանիցէ սուրբ ժողովդ զգալ մեր յայս կողմնս... անմխիթար եմ յամենից կողմանց մանաւանդ ներ պանդստութեան վայրում: Ահա երկու այլ հատվածներ՝ (1) նաև զայս ինչ խնդրեմ ի քէն, Հայր սուրբ, մի համարք՝ երկոտասան օրհնութեամբ օրհնեալ, մի գեղեցիկ Աստուածածնի պատկեր ի վերայ մագաղաթի նկարեալ, մի խաչ՝ զի ընդ իս ունիցիմ ի յիշատակի քո... (6) ...Կասն որոյ եւ այժմ ժտեալ խնդրեմ, ոչ վարիլ ընդ իս այսպէս խստութեամբ, այլ ըստ կարգի և կանոնի սրբոյ եկեղեցւոյ:

Ինչպես նկատելի է, այստեղ կմ օտարաբանությունները որպակ չեն կազմում: Ուրեմն այս հեղինակները ավելի հայկաբան են քան լատինաբան:

XVII դարի ամենամոլեռանդ հայ կաթոլիկներից ու միաժամանակ ամենաբեղմնավոր հայ գործիչներից մեկն է Հովհաննես Հոլովը: Նրա բերականությունը<sup>18</sup> լատինաբան քերականական ըմբռնումների յուրատեսակ ընդհանրացումն է: Խոկ «Քերականության» առանձին հատվածներ՝ օտար աղդեցությունների կիրառման տիպական օրինակներ, ինչպես. Պատանեկաց յեղեղուկն վար, նոցին խոկ ըն բնաւս կողմանս ներմիտողն բար, ընտանեաց յսկզբան փափկակի դիպմամբ, ճշմարտագոյն քան աստեղաց ի ծնիցեալս փշմամբ, բազմիցս, նամենայնում ներմակակերպին (203)<sup>19</sup>: Այս լեզվով են շարադրված «Համառութիւն ճարտասանական արհետի» (Մարտել, 1674), «Հայելի ճշմարտութեան» (Վենետիկ, 1680), և մի շարք այլ գործեր: Ահա մի քանի օրինակներ առաջին գրքից, ներծնանի (12), նայսմիկ պատանեկում (19), ըն հոգուց (21), ներեկոյան (22), խորիցէին (17), ուրանիլ (72), բառնիլ (99), նաւս այս բեռնեցեալ էր

<sup>18</sup> «Զառութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական», Հռոմ, 1674:

<sup>19</sup> Այս հատվածը բերում է Հր. Աճառյանը (ՀՀՊ, II, էջ 313):

աւարաւ (103), վերատրեալ (21), առ կեանեն երանական (24): Կան լատիներենի նմանությամբ ստեղծված (կամ պատճենված) շատ բառեր. անդրաբերել (78), անդրածութիւն (104), համաստիճանութիւն (105), տրամալծութիւն (107), անդրանունութիւն (87), տրամորսական (68), ստորահետեւլեցեալք (31), քանապատիկ (25) և այլն:

Պետք է ասել, սակայն, որ բոլոր գործերում հեղինակը հետևողական լատինաբան չէ: «Պարտէզ հոգեւոր» (Մարսել, 1683) աշխատության մեջ (զանազան կարգի աղոթքների թարգմանություններ են) օտարամուտ ձևեր կան որոշ հատվածներում: «Թարգմանութիւն իտալական սրբազնի խորհրդատեսերն հայոց...» (Վենետիկ, 1690) աշխատության մեջ լատինաբանության հետքերը շատ չնշին են: Գրքում եկեղեցական արարողությունների կանոններն են: Զենք հանդիպում մու, ըն, ներ մասնիկների, չկան ածականների նորակազմ գերադրական աստիճաններ, գոյականների և ածականների համաձայնությունը պարտադիր կերպով չի ենթարկված լատինաբանության կանոններին և այլն: Ահա երկու փոքրիկ հատված այդ գրքից.

— Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել, պարտի այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ. մտցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագօքն, ուր զգեստը են պատարագի: Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի, ասացեն ապա սալմոս (2):

— Դպիրքն սկսեցին զսաղմոս ըստ խորհրդոյ աւուրն և ընթեռնուցուն զգիրս մարգարէականս և զառաքելականս և զինի ալէլու ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն և յաւարտման սարկաւագն բարձր ձայնի գոշեցէ. Օրիի. եւ քահանայն դարձի ի խորանէ, խաչակնքեսցէ ի վերայ ժողովրդեանն և ասասցէ... (16):

Դասական գրաբարից եղած շեղումները լատինաբանության աղդեցություններ չեն միայն, այլ ժամանակաշրջանի գրաբարի ընդհանուր միտում:

Որ հեղինակը լատինաբան հայերենը չի ընդունել որպես ժամանակի միակ ընդունելի լեզուն՝ վկայում է նրա մի այլ գործ<sup>20</sup>: Սաղմոսի մեկնությունները հեղինակը շարադրել է աշխարհաբարով՝ ժողովրդախոսակցական լեզվով:

Սա ինքնանպատակ չէ արված: Հեղինակը գիտեր, որ ժողովրդին հասկանալի լեզուն ոչ թե գրաբարն է, այլ՝ աշխարհաբարը, խոսակցական լեզուն<sup>21</sup>: Նկատենք նաև, որ այնպիսի գործերում էլ, որոնցում լատինա-

20 «Պարզաբանութիւն հոգենուագ Սաղմոսացն Դավիթի մարգարէին, ժողովեցեալք ի զանազանից մատենից վարդապետաց եկեղեցոյ և թարգմանեցեալ. ի նուսատ Ցոհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպոլսեցույ», Վենետիկ, 1687:

21 Հոլովք առաջին քերականներից է, որ ճիշտ տարրերակում է ժամանակի լեզվավիճակները (գրաբար, քաղաքացիական հայերեն և բարբառներ):

բանության տարրեր շատ կան, Հոլովը օգտագործում է նաև դրաբարյան ճիշտ ձևեր: «Հայելի ճշմարտութեան» մեջ ըն տաղամ... տիպի ներգոյականներին զուգահեռ հանդիպում ենք նաև ներգոյականի ճիշտ կազմության. Դարձեալ ի նաոին որ առ Յօհաննէս ասէ (8), դարձեալ ի գիրս դանձուց ասէ (14), ի տաղս վարուց իւրոց ասէ (35): Քերականության մեջ տալիս է ն, ըն կազմությամբ ներգոյական ձևերի գործածության «հիմնավորումը». «Գիտելի է զի ըն և ն, մանաւանդ ի կիր արկանին յայնժամ, մինչ ներգոյականն շփոթի ընդ նախադրիւ տրականին: Ուստի առ ի որոշել զնոսա ի միմեանց գրեմք փոխանակ յիրյն, ն, որ գոն նենթեկալս... (155): Իր քերականության մեջ նա տարրեր առիթներով նոր, արհեստական ձևերին զուգընթաց բերում է նաև կանոնիկը, ընթերցողին հուզելով առաշինների ու պարտադիր գործածության մասին: Բերենք բառերի ներգոյական հոլովի այն տարրեր ձևերը, որոնք նշում է Հ. Հոլովը: Ի նիւթում կամ ըն նիւթում (10) յոսկոչ կամ նոսկում (12): Յարեան կամ նարեան (15), նԱղամում կամ ի յԱղամս (17), նաղրեր կամ յաղրեր (20), ըն հօր, ի հայր (75) և այլն»:

Ուրեմն հեղինակը ըն, նով կազմությամբ ձևերը պարտադիր չի համարում, նրան խորթ շեն նաև գրաբարյան ճիշտ ձևերը: Հոլովն անշուշտ քաջատեղյակ է գրաբարին, ժանոթ մեր դարավոր մատենագրությանը, գրաբարը կանոնիկ դարձնելուն զուգընթաց (մի պայման, որը վերջին հաշվով հանգեցնում է լատինաբանության) Հոլովը դիմ էր նաև գրաբարում աշխարհաբար, բարբառային բառերի օգտագործմանը:

«Էաւագոյն է ասել համբուրել, քան թէ պաքել և ննջելն, քան թէ քնիմն<sup>22</sup>: Հայ բանակիրության մեջ Հոլովը համարվում է լատինաբանության մոլի ներկայացուցիչներից մեկը, տեսաբանն ու լայն շափերով գործնականում կիրառողը: Իրոք հեղինակի և քերականությունը, և մի շարք այլ աշխատություններ գրված են լատիններենի նմանակվելու ձգումով: Հենց այդ պատճառով էլ նրա ժառանգության ուսումնասիրությունը կարող է պարզել լատինաբանության դրսերումների էական շատ կողմեր: Հոլովի մոտ նույնպես օտարաբանությունների ու արհեստական ձևերի կիրառումով որոշակիորեն զանազանվում են քերականությունն ու ոչ քերականական աշխատությունները: Վերջիններում համեմատաբար քիչ են օտար ձևերը, հաճախական են նաև գրաբարին բնորոշ ձևերը: Ուշադրության արժանի հանգամանք է և այն, որ Հոլովի նման լատինաբանը, որոշ գործերում լատինաբանությունը հասցնում է նվազագույնի, կամ բացարձակապես հրաժարվում է նրանից (տե՛ս Սաղմոսի մեկնությունը), փաստ, որը վկայում է, թե լատինաբան հայերենը միակ կիրա-

22 «Համառուսութիւն ճարտարասանականի արուեստի», Սարսել, 1674, էջ 77:

ուելի լեզվական ուղղությունը չէր նաև հենց իսկական լատինաբան համարվող հեղինակների համար. այսինքն հենց իրենք՝ տեսաբաններն ու ջատագովներն են ըմբռնել լատինաբան հայերնի լայն տարածման ու ազդեցության անհեռանկարայնությունն ու անհնարինությունը:

Ուրեմն «ամենամոլի» լատինաբանի մոտ իսկ լատինաբան նորամուծությունները պարտադիր կիրառություն չունեն:

Հովհաննես Զուղայեցու (*Մրգուզ*) և Խաչատուր Կարենցու (Էրգումեցի) մոտ լատինաբանության դրսերումները նախորդների համեմատ էլ ավելի քիչ են: Ահա երկու փոքրիկ հատվածներ այդ հեղինակների գործերից.

— Ով վիպասան ընդէր այդքան զայրացեալ հարցանես զայն զոր ոչ երբեք ես ուսեալ հասանել պարտէր քեզ ի վերայ իրավանացն և ապա թէ անմարթի ինչ լուսեալ էիր յայնմ ժամ անկ լինէր զայրանալդ և յանդիմանելդ: Քանզի իմաստասիրաց և աստուածաբանից կարգ է և կանոն յորժամբան ինչ առարկեսցին պատասխանոյն անսայցին և ոչ վաղվակի զայրասցին<sup>23</sup>:

— Եթէ լինէր ինձ ժամանակ, ի խորագոյնս մտանէի և ուսուցանէի. սակայն որքան ժամանակ ինձ շնորհի մտից ի խորինս և քացադրեցից զգաղտնիս: Եւ քանզի սղութիւն ժամանակի ոչ կարէ տանիլ զբազմութիւն բանից... Ավարտէի աստ զբանս իմ, եթէ ոչ ստիպէին զիս այնոքիկ զորս ասելոց եմ<sup>24</sup>:

Լատինատիպ քերականության հեղինակներ են համարվում նաև Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիները: Սրանք հիմնականում պիել են աշխարհաբարով, իսկ գրաբար գործերում էլ լատինաբան տարրերը հազվագետներ են: Ուրեմն, այս հեղինակները նույնպես լատինաբան չեն:

Վերը թվարկված հեղինակները, ինչպես նշել ենք, եղել են ժամանակաշրջանի զարգացած մտավորականներից, որոնց գործերը (իհարկե ոչ բոլորը) հարստացրեցին հայ բազմադարյան մշակույթի գանձարանը: Լատիններնի ազդեցությունը բոլոր հեղինակների մոտ համահավասար չէ, ավելին՝ այն միևնույն շափով չի դրսեորվում նաև նույն հեղինակի տարրեր գործերում: Զգալի է նաև այնպիսի գործերի թիվը, որոնցում լատինաբանությունը շատ չնշին է: Ի տարրերություն վերոհիշյալ հեղինակների, XVII դարում կային և այնպիսիները, որոնց լեզուն հեղեղված է օտար, արհեստական ձևերով: Բուն հայերնն էլ սրանց մոտ խճողված է ու անհասկանալի: Զարպհանալաւանի խոսքերով դրանք «...Արևմտից

23 Հովհաննես Զուղայեցի (*Մրգուզ*), Գիբր համառօտ վասն իսկապէս հշմարիտ հաւատոյ, նոր Զուղա, 1688, էջ 144:

24 «Ճարտասանութիւն արարեալ և շարադրեցեալ ի Խաչատրոյ Էրդրումնեցութ, Վենետիկ, 1713, էջ 283:

մէջ և անոր ազդեցութեանը տակ իրենց ուսումը կատարողք, որոնք ետևէ եղան նաև լեզուն անոր յարմարցընել։ Այս զասուն մէջ կըսեպովին Վարդան Յունանեան, Աստուածատուր Ներսեսովին, Բարսեղ քահանայ, Յակոբ Յովհաննէս Յովով և այլք<sup>25</sup>:

Հ. Հոլովի մասին արդեն խոսել ենք։ Նրա որոշ գործերում, իրոք լատինաբանություն կա, բայց այդ հեղինակն առհասարակ եղել է հայ մշակույթի վաստակ ունեցող ներկայացուցիչներից մեկը, իսկ այն հանդամանքը, որ թարգմանված Սալմոսարանը մեր մատենագրության մեջ աշխարհաբարով գրված երկրորդ գիրքն է, իրավունք է տալիս Գ. Զարպհանալյանի թվարկած հեղինակներից ցուցակից հանել Հովհաննես Հոլովի անունը։ Իսկ ի՞նչ և ի՞նչպես են գրել մյուսները։

Աստվածատուր Ներսեսովիչի գործերից մեզ ծանոթ է միայն նրա լատիներեն-հայերեն բառարանը<sup>26</sup>։ Այդտեղ նկատելի են լատիներենի բառային պատճենումներ, ինչպես additio-վերատրություն, adhincipio-առիխնջամ, introeu—մտանեմ, ներսամտանեմ և այլն։ Բայց մի շաբթ հոմանիշ բացատրությունները, բարբառային բառերի օգտագործումը ենթադրել են տալիս, որ հեղինակի հիմնական նպատակներից մեկն էլ եղել է լատիներեն բառերը ընթերցողին հասկանալի դարձնելը։ Հմմտ. proelamo—կարդամ, աղաղակեմ, գոշեմ, Pungo—խոցում, խթեմ, խրթեմ, եցրում, սխալեմ, խալթնամ և այլն։

Ինչ վերաբերում է Վարդան Հունակյանին և Բարսեղ բահանային, ապա դրանց ստեղծագործություններում իրոք հայերենը ենթարկված է ամենակամայական փոփոխությունների։ Այսպես, Հ. Պոննայի «Զերբածութիւն յերկինս»<sup>27</sup> գրի թարգմանության մեջ տեղ են գտել լատինաբան բոլոր նորամուծությունների բազմաթիվ կիրառություններ։ Գիրքը ծանրաբեռնվում է երկարաշունչ, անհասկանալի նախադասություններով, լեզվական բազմաթիվ մեղանշումներով։

«Ուստի և ըստ բարուց մեղուաց զգանազանս ի մի ճաշակ զուգախառնեցի զծաղկունս։ Երբեմն յելով զյատկականս պիտառուացն զբանս և մերթ զիմոց աշխատանաց զշարառութիւնս...» (72) կամ—«Ունիք աւասիկ նայսմ արկղում իրը նընկուզենում կեղևոզն մակեղոնեան պարփակեցեալս զամենայն օրէնս» (ի), «ահա այսպէս աշխատակորք եղեալը և

25 Գ. Զարպհանալյան, նշվ. աշխ. էջ 31։

26 «Բառփիրք լատինացոց եւ հայոց ի վերայ աստուածաշում և ժամակարգութեան գրոց հայոց եկեղեցւուն», Հոռմ, 1695։

27 Գրիվ լրիվ վերնագիրն է «Զերպածութիւն յերկինս պարունակող զգացմանց և սրբազնիցն հարց և հնագունից իմաստափրաց»։ Մօրինեցեալ աշխատամիրութեամբ տեսան Յոհաննու Պոնաի վսեմագունոյ բարտինալի Ա. Ե. Եւ թարգմանեցեալ ի հայկական բարբառ ի Վարդանայ Յունանեան, Հոռմ, 1671։

պտղագործք և զօրէն մոլորիլոց յանկարելում, որքան երագագոյն առ  
բարին մերձին, այնքան հեռագոյն տարածքին ի նմանէ»(3)<sup>28</sup>:

Հենց միայն բառապաշտը բավական պատկերացում է տալիս գործի  
լեզվի մասին: Պատահական չէ, որ Հունանյանը գրքի վերջում զետեղել է  
բացատրական բառարան՝ «Հայերենից» հայերեն մեկնելով գրքում օգ-  
տագործված բազմաթիվ բառեր: Բերենք նման բառերից մի բանիսը  
միայն:

Այսրութեմ—յետս ցաթկեմ, անդրախացեմ—յետս աքացեմ, անձայ-  
լակ—ագանելի ինչ այլանդակ, առքարեմ—յառարկեցելոյ վնասոյն, կամ  
յանցանացն և կամ ի հրամանէն անպարտ առնեմ զիս, արտանի—որ ի  
գործ արկանի, արտաքս քան զտունն: Ընդրասրեմ-ի բաց մերժեմ, կա-  
խեկ-բարակագոյն և խիստ մասսիկն այն ամենից պտղոց յորմէ կախին  
յոստոյ ծառոյն, զոր ռամկօրէն կոթ անուանեն, նեպամերթ-յաճախապէս,  
բազմիցս, շահնկատեմ—հայիմ, սակաւ ինչ ունելով զտեսութիւն և իբր  
զկիսակոյր, լատ. Զէրուցիօ վաղարկութիւն—երկարեցումն և տարածումն  
ժամանակի, ի ներկայէն առ յայլս ամանակս... (տիլացիօ), վեհալուար-  
յոյժ պայծառափայլ, լուսաւորագունեղ, տրամախիտ—անյաճախ, սակա-  
ւագիտ, նման բառերով հեղեղված ստեղծագործությունը չի կարող հաս-  
կանալի և ընդունելի լինել ընթերցողի կողմից՝ անկախ նրա մտավոր  
դարգացման աստիճանից: Լեզվական նույն քառան է (նորաթում բառե-  
րի նվազ գործածումով) «Վարդապետութիւն քրիստոնէական»<sup>29</sup> գրքում:  
Այս ստեղծագործությունները անարժեք են թե՛ լեզվական, թե՛ բովանդա-  
կության տեսակետից: Սրանց հեղինակները ապրելով հայրենիքից հեռու,  
կտրված լինելով աղդային կյանքից, ունենալով քաղաքական-դավանա-  
բանական ոչ ճիշտ հայացքներ, անկարող էին թեկուղ չնշին շափով  
հարստացնելու հայ մշակութիւն գանձարանը, առավել ևս լեզվի հարցում:  
Հավանորեն նրանք նաև լաւ չէին տիրապետում հայոց լեզվին, հատկա-  
պես գրաբարին (ըստ վկայությունների, օրինակ, Վ. Հովհաննեանի հայե-  
րեն շարադրությունը գրված էր բազմաթիվ սխալներով): Բարեբախտա-  
բար նման գործերը և հեղինակները քիչ են, և դրանք չէին կարող որևէ  
ապեհեցություն թողնել մատենագրական հսկա ժառանգությամբ բնո-  
րոշվող մի դարաշրջանում, ինչպիսին XVII դարն է: Տարբեր ժամանակ-  
ներում մեր բանասիրության մեջ լատինարան հայերենին տրված բոլոր  
բացատրական որակումները պետք էր վերագրել այս գործերին: Ուրեմն և  
պետք է տարբերակում մտցնել նաև լատինարան հայերեն հասկացության

28 Այս գրքից մի այլ հատված տե՛ս Հր. Աճառյանի ՀՊ, հ. II, էջ 312:

29 «Վարդապետութիւն քրիստոնէական» Գերադանցագումեղի կարտինալի տեսան  
նույնականությունը Պելլարմինոսի: Բարդանեցեալ ի Բարսէ վարդապետէ Կոստանդինու-  
պոլիսեցւուց, Յալի կոսնա, 1669:

մեզ: Եթե այդ անվան տակ հասկանանք միայն այս կարգի «գլուխ գործոցները», ապա դրանք մերժելի պետք է համարել այն իմաստով, որ ինչքանով որ դրանք լատիներեն չեն, այնքանով էլ հայերեն չեն, մյուս կողմից՝ դրանք շատ քիչ են և չեն կարող լեզվական որևէ ուղղություն համախանալ կամ կասեցնել լեռվի բնական ընթացքը: Դրանք որոշակիութեն ասրբերվում են ինչպես Զուղալեցու, Դավիթիցու, Քանաքեցու (այսինքն իրենց ուսումնառությունը հայրենիքում ստացած հեղինակներից ոռոնք և այս դարու ընտրելագոյն գրիչները կրնան սեպովիլ ուն լեռվի նկատմամբ<sup>30</sup>), այնպես էլ նախորդ էշերում քննված լատինարան համարվող հեղինակներից:

Միակողմանի պետք է գտնել այն մոտեցումը, երբ լատինարան կոչվող գրականության կամ լատինարան համարվող հեղինակի գործունեության մեջ նկատվում է միայն բացառականը: Հայ ժողովրդի, հատկապես հայ եկեղեցու պատմության ուսումնասիրությունը, հայ իրականությանը առնչվող օտարակեզրու գործերի թարգմանությունը, հայ տպագիր խոսքի աշխուժացումը, քերականական մի շարք աշխատությունների երեան գալը (նաև տպագիր), այդ քերականություններում որոշ հարցերի յուրովի և ճիշտ մեկնարանումը առաջընթաց քայլեր էին:

Լատինարան բաղմաթիվ գործերի քննությունը բերում է այն համոզման, որ լատինարան հայերեն կոչվածը լեզվական կուր, ընդհանուր ու մշակված սկզբունքներ ունեցող ուղղություն չեր: Լատինարանությունը փաստորեն XVII և XVIII դդ. սկզբին հայերեն գրավոր որոշ դործերում ու մի շարք քերականություններում նկատվող (տարրեր հեղինակների կողմից տարրեր չափերով) լատիներենի որոշ աղղեցությունների արտացոլումն է:

Լեզվական ամեն մի ուղղություն, յուրաքանչյուր լեզվաբաղականություն պետք է ունենա իր սկզբունքները, որոնք գոնե մեծ մասամբ, պարտադիր լինեն այդ ուղղության զատագովների համար: Մի բան, որ չկար լատինարան հեղինակների մոտ, ավելին՝ լատինարանությունը շուներ նույնեւկ իր սեփական սկզբունքները: Լատինարան հայերենին վերագրվող համարյա բոլոր «նորամուծությունները» նոր չեն և գալիս են հունարան դպրոցից: Մերժված ու վաղուց շգործառող շատ ձևեր նոր ժամանակներում փորձում էին շրջանառության մեջ դնել արդեն ոչ թե հին հունարենի, այլ լատիներենի միջնորդությամբ: Օտարամոլ այդ ձևերը ծանոթ են եղել հայերենին ավելի քան հաղար տարի առաջ, դրանցից շատերը հայերենը մերժել է: Լատինարանները դրանք վերակենդանացնելու սոսկ նոր փորձ էին անուամ:

30 Գ. Զարդեանալյան, նշվ. աշխ., էջ 30:

իհարկե, սկզբունքների նմանությունը բնավ էլ իրավունք չի տալիս Հունարան և լատինարան հայերենը գնահատել միևնույն շափանիշով։ Առաջինը, իր որոշ ծայրահեղությունների հետ, զգալի դեր է խաղացել հայերենի բառապաշարի հարստացման, տերմինալինության, հատկապես գիտական տերմինարանության ձևավորման ու զարգացման դրծում։ Հունարան հայերենի ստեղծած շատ ածանցներ բառակազմական հնարալորությունը նման դեր խսդաց։ Այն չէր կարող նաև խիստ բացասական ներգործություն ունենար ժամանակաշրջանի հայերենի ու նրա ապադայի վրա։ Այդ բանին խոշընդուռում էին ժամանակը և դարերի ընթացքում հայոց լեզվի կրած բնականոն փոփոխությունները։ Եթե հունարան դպրոցի ժաղկման շրջանում հայերենը միասնական էր, այսինքն էական տարրերություններ չկային գրավոր, գրական, բանավոր-իսոսակցական լեզուների միջև և այն, ինչ ամրագրվում էր գրավոր, կարող էր և գործառելի դառնալ բանավոր լեզվում, ապա լատինարան գրաբարի «վերելքի» շրջանում՝ XVII դարում, զրությունը այլ էր։ Գրաբարն այդ ժամանակ գրբացին ու եկեղեցական արարողությունների լեզուն էր (իսկ լատինարան հայերենի բոլոր նորամուծությունները վերաբերում էին գրաբարին)։ Բնականարար, եթե քեզուն լայն գործառություն չուներ, ապա նրան վերաբերող փոփոխություններն էլ լայն տարածում չէին կարող ունել։ Ժողովրդա-խոսակցական լեզվի առկայությունը լատինարանության սկզբունքների արմատավորման ու տարածման հիմնական խոշընդուռն էր։ Հիշենք, որ մեր մատենագրությունն էլ ուներ իր դրավոր առվանդները, որը ճույնպես դիմադրող ուժ էր լեզվական անհարկի փոփոխությունների հանդեպ։ Այսպիսով, գործառելով մոտ մեկ հարյուրամյակ, լատինարանությունը առարկայական պատճառներով չէր կարող դառնալ, և շղարձավ միասնական կամ թերևս լայն տարածում դառնալու հայտնական ուղղություն։ Հայերենը լատիներենի կաղապարով ձևափոխելու որոշ փորձեր անհիմն ու անհրականալի էին։ Լատինարան վըտանդը չէր կարող կործանարար լինել նաև այն պարզ պատճառով, որ այն առաջացավ և տարածվեց միայն նվազապայի որոշ քաղաքներում՝ կաթոլիկ քարոզչության կենտրոնում, որտեղ գրվում ու տպադրվում էր հայերեն բարականություն։ Մայր հայրենիքում ստեղծվող գրականությունը փաստորեն դերձ մնաց լատինարանությունից, շարունակելով իր զարգացման օրինաշափ ու բնական ընթացքը։ Եվ թեպետ իրադրձությունների բերումով տպագրվող գրականության պատկառելի մասը բաժին էր ընկնում նվազապայի հայկական գաղթօջախներին, այդուհանդերձ հայ կյանքն արտացոլող, ժողովրդի հոգեսր կյանքին հոգեհարազատ մշակույթի կենտրոնը Մայր հայրենիքն էր։ Իսկ լեզվական օտարամետ որևէ ուղղություն այդ մշակույթի համար այդպես էլ մնաց խորթ ու ան-

ընդունելի: Եվ պատակահան չէ, որ արդեն XVII դարի առաջին կեսին լատինաբան Հայերենը (այդ հասկացության ցանկացած ըմբռնումով) դադարեց գոյություն ունենալուց:

\* \* \*

Ի դեպ, ճշտման կարիք ունի նաև լատինաբան հայերեն տերմինը: XVII դարում Հայերենը դրսեորդվում էր տարրեր լեզվավիճակներով (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառներ): Գրաբարը մյուսների համեմատ թե գրավոր, առավել ևս օանավոր լեզվում նվազ գործածական էր: Ուստի հայերեն անվան տակ ընդունել միայն գրաբարը, ինչ-որ շափով անտրամաբանական է: Քանի որ լատինաբանությունը տարածվում է միայն գրաբարի վրա, ուրեմն ավելի ճիշտ պետք է համարել ոչ թե լատինաբան հայերեն, այլ՝ լատինաբան գրաբար տերմինը:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Բգմվագ.—Բազմավեաւ

Դվրժ.—Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ (3-րդ տպադր.), Վաղարշապատ 1896 թ.

Դրնդ.—Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղէմ, 1915 թ.

Զքր.—Զաքարիա Սարկաւագի պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870 թ.

ԽՄ—Խոսքի մասեր

ՀԱ—Հանդես ամսօրյա

ՀԼՊ—Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն (մասն I, II), Երևան, 1940, 1951 թթ..

ՄԺ—Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. (Հ. I, II, Երևան, 1951, 1956 թթ.)

ՆՀԲ—Նոր բառովիրը Հայկագենան լեզուի, Վենետիկ, 1836—1837 թթ.:

ՍԼԲՆԸ—Սիմէռն Դպրի լեհացւոյ Աւղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանը, Վիեննա, 1936 թ.:

ՍՀՊԱՂ.—Սիմէռն Ջուղայեցի, Համապատասխան ձեռագրերը:

Ստկ—Ստեփանոս Լեհացի:

Տրմբ.—Ս. Ճուղայեցի, Դիբք տրամարանութեան, Կ. Պոլիս, 1728 թ.:

Քմբճ.—Օրագրութիւն Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանի, Երուսաղէմ, 1939 թ.:

<sup>1</sup> Մի շաբաթ համառոտագրություններ (հիմնականում բառային), որոնք հասկացվում են կոնտեքստում, չեն նշված: